

5(566)

5 - 41

ՅԱՀԱՐԴԻ ԽՈՀԸ

ՄԵԼԻՔ ԲԱԲԱՅԻ

ԱՍՏԽԵԼԻ ԱՐԱՐՖԵ 1729 ԹԻԱԿԱՆԻ

ՕՍՄԱՆՑՈՑ ՏԵՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՎ.


ՄԻՒՆԵՑՑ ԷՇԽԵՐՀՈՒՄ

Աշխատափրեց՝  
ԱԱՐԳԻՍ ՅՈՎ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բ Ա Գ Ո Ւ  
ՏՊԱՐԱՆ „ԱՐԱՄԱԶԴԻ“  
1910




Վ Ա Կ Ս  
ՏԻՊ. „ԱՐԱՄԱԶԴԻ“  
1910



100

14



3106

ԳՐԱԴՐՈՒՅՑ ԵՀԿԸՐ

9 (566)

Ե-41

ԽՍՀՄ ԱՌԱՋՊԱՏՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԻՔ ԲԱԲԱՅՅԻ

ՔԱՅԱԿԱՆ ԱՐԱՐՖԵ 1729 ԹԻԱԿԱՆԻՆ

ՕՍՄԱՆՑՈՅ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՎ.

ԱՌԵՎԵՆ ԱՌԵՎԵՆ



Աժմատասիրեց՝  
ՍԱՐԳԻՍ ՅՈՎ. ՊԵՏՐՈՍՅԱՆ




ԲԱԿՈՒ  
ՏՊԱՐԱՆ  
„ԱՐԱՄԱԶԴЪ“  
1910

ԲԱԿՈՒ  
ТИՊ. „ԱՐԱՄԱԶԴЪ“  
1910

Дозвольен цензурою 25-го июня 1910 г.

# ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Մեր ազգը զանազան արիւնալի գարէշը ջաննեւում երբ որ իր գլխին կատարված արիւնուա անցքերը որե է մի ականատէս պատմագրի աշխատառւթեամբ կարողացաւ մացնել զրաւոր յիշատակարանների մէջ և պահպանել առժամանակ այդ պատմութեան գոյութիւնը հաղարից մի անկեղծ հայ մարդի կամ մի անկեղծ հայ հողեորականի խնամքով, այնուամենայնիւ այդ անկեղծ անձնաւորութիւնների ձեռքում երկար ապրել չկարողացաւ, պատճառ նրանց մեռնելուց յետոյ, կարելի է ասել տպէտ զաւակների ձեռք ընկաւ և նրանց ձեռքիցն էլ այնպիսի մարդկանց ձեռք ընկաւ, որոնց մօտ կէս փողի արժէք չգտաւ, այդ պատմութիւնը կամ զոհ զնաց տպիտութեան խաւարի կամ զոհ զընաց անուշադրութեան, որ իր թանկագին արժէքի արժանիքը չվայելելով փատեցին կորան նոյնիսկ այդ մարդկանց տների խոնաւ անկիւններում, չզնահատւելով ոչ ոքից, կամ արիւնահեղութեան օրով դրուած էր զարձեալ զոհ զնաց արիւնահեղութեան, կամ ձեռքից ձեռք ընկնելով, ինչպէս որ զրել ենք, վերջը ընկաւ այնպիսի գրատեաց, նախանձու և հալածիչ անպիտան կղերի ձեռք և զոհ զնաց նրանց անգրասէր քմահաճութեանը, պաշար զարձաւ մերջապէս հրի կամ ջրի։ Ուստի մի այնախափ պատուական ամենապիտանացու պատմութիւնը խաղառ կորչելուց և հետքերը մինչև անզամ



# ՊԱՏՄԱԿԱՆ ՓԾՌԱՒԲ<sup>1)</sup>

«Եւ զկնի տիրապետութեան ազդին տաճ-  
չլաց երկրին սիւնեաց ոճհթ թուականին հայոց,  
զօրաբանակն նոցա եկն ի սուրբ վանս Տաթեռ  
և Բանակ եղին տուաջի տափարակին Տաթե ան-  
ւանեալ աւանին, որ է հայեցաւացօք յոյժ նա-  
զելի և տեսարանօք յոյժ գեղեցիկ և ախորժելի:  
Եւ էր գլխաւորն զօրաց տաճկաց Հաջի ալի  
փաշան: Եւ ապա յետ քանի յաւուրց կոչեաց առ  
ինքն մեծ առ մեծ արանց հայոց Մէլիքազնեաց,  
տանուտերաց, քահանայից, քանդխուդայից, համ-  
փայից և այլ ունեոր արանց համայն եօթնագա-  
վառեան սիւնեաց և ասաց բռնակալ կեղծաւոր  
(Հաջի ալի փաշան.) — Սիրելի մեծապատիւ և  
արժանապատիւ իշխանաւորքդ մէր համայն հը-  
պատակեալ ժողովրդեանց սիւնեաց. մի երկնչիք.  
քանզի ես յետ այսու սիրեմ և պահպանեմ ձեզ

1) Այս պատմական փշրանքը մէկ եղերական տխուր անցքի  
յատուկ փաստ է հանդիսանում, որը կտտարվել է 1729 թւին Տա-  
թեռն: Ցաւօք սրտի ափսոսում ենք, որ այս պատմական փշրան-  
քի շարունակութիւնը իւր վախճանին չի հասնում ձեռագիրը փշ-

խաւորներ չմնան, որ ապագայում կասկածելի  
յորդորիչ խոռվարաբներ կզառնանք իրանց դէմ  
նոր ապստամբութիւն յարուցանելու համար։  
Ուստի ստիպւած այսպիսի վտանգաւոր կասկած-  
ներից զիշերը մասնաւոր մարդիկ ուղեցին փախ-  
չել, բայց Յութիթ վարդապետը հանգստացրուց  
բոլորին, հաւատացնելով նրանց, որ փաշան ոչ  
մէկի կեանքի դէմ դիտաւորված չէ մահացու  
պատիժի դաւազրութիւն ստեղծել իր մօտ հրա-  
ւիրելու բարեկամական պայմաններով, այլ կանչ-  
ւած են յատկապես ուտեստի պաշարի համար և  
ուրիշ ոչինչ։ Եզրի առաւօտեան հայ իշխանները  
և քահանաները զնացին դէպի փաշայի վրանը և  
բոլորը շարքով կանգնեցին վրանի դիմաց։ Փա-  
շան իւր սորորական ժամանակին արթնացաւ  
քրից, երկար վերաբերն զցեց ուսերին դուրս  
եկաւ վրանից լուս և առանց ուշադրութիւն  
դարձնելու ջրամանը ձեռքին զնաց դէպի. . . .  
Քանի բոպէից յետոյ եկաւ ու կանգնեց վրանի  
տողեւ և սկսեց լուացւել։ Լուացւելուց յետոյ  
մտաւ վրանը և շարունակեց անել իր վաղորդեան  
նամազը։ Նամազը աւարտելուց յետոյ հագնեե-  
ցաւ փառաւոր կերպով և դուրս եկաւ վրանից  
ու մօտեցաւ հայ իշխաններին։ Այդ միջոցիի հայ  
իշխանները և քահանաները խորին կերպով գը-  
լուխ խոնարհեցրին փաշային, յայտնելով նրան  
իրանց հլու հպատակութիւնը և պարտականու-

թիւնները դէպի Օսմաննեան կառավարութեանը  
ամենայն ջերմեռանդութեամբ։ Փաշան նոյն-  
պէս թիւրքաց կեղծաւոր քաղաքավարութեամբ  
գլուխ խոնարհեցրեց հայ իշխաններին ողջոյնե-  
լով այս խօսքերով «բարով էք եկել, հազար բա-  
րով էք եկել»։ Այժմ ես ինձ բաւական բախտա-  
ւոր եմ համարում, մինչ դեռ մեր հպատակների  
մէջ գտնվում են ձեզ նման յայտնի և նշանաւոր  
մարդիկ, որոնք ծայրահեղ կարիքներում կարող  
են նպաստել մեզ կարէքցաչափ։ Շատ ուրախ  
եմ Եւ գոհ եմ ձեզանից, որ մեր հրաւէրը չէք  
մերժել։ Այսուհետեւ ես իմ ամբողջ սրուով կհա-  
ւատամ ձեզ և համոզւած կլինեմ ինքս ինձ ա-  
ռանց տարակուսանքի, որ շատ հաւատարիմ կը-  
լինէք դէպի մեզ։ Մանաւանդ անհոգ մնացէք  
ձեր կեանքին, գոյքին և այլ ունեցածներին ա-  
պահովութեան համար։ Զնայած որ սկզբից մենք  
ձեր հայ ազգին նեղութիւններ շատ ենք հաս-  
ցրել այնուամենայնիւ, որպէս ապացոյց պէտք  
է յիշէք և աչքի առաջ ունենաք այն անսպասե-  
լի յաղթական քաջագործութիւնը, որ ձեր ան-  
պարտելի Դաւիթ իշխանը իւր երեք հարիւր  
կտրիչներովը գիշերը յարձակվեցաւ և Հալի ձորի  
մօտ մեր օսմանցիներիցս տասն և երկու հազար  
զինւորներին միանդամից ջարդեց և իւր ամբողջ  
վրէժը մեզանից միանդամից լուծեց։ Յիշեցէք  
Ստէփանոս Շահումեանի արած քաջագործու-

թիւնը, որը Մեղրիաւանի կիրճումը տասն և մէկ  
հազար զինւորներ ջարդեց մեզանից իւր սակա-  
ւաթիւ քաջ ընկերներով, իսկ մնացածներին էլ  
հալածելով ցիրուցան արաւ։ Եթէ ուշի ուշով  
հաշւի առնենք երկու թշնամական կողմերի հաս-  
ցրած վնասները դուք օսմանցիներից քսան հա-  
զարից աւելի կեանքեր խլած կլինէք։ Իսկ օս-  
մանցիք հայերից շատ չնշին։ Այժմ բոլոր վրէժ-  
խնդրական ոխապահութիւնները ես մի կողմ եմ  
զցում։ և հաստատ խօսք եմ տալիս ձեր Սիւն-  
եաց երկրի ընդհանուր ժողովուրդներին, որ այ-  
սուհետեւ ոչ մի նեղութիւն այլ ևս չէք կրիլ  
մեր կողմից։ անցեան է անց։ Իսկ դուք թա-  
զադ ու հանգիստ մնացէք ձեզանում։ Զարին յա-  
ջորդելու է բարին։ Եւ դուք այլ ևս չ'լսէք չարայոր-  
դոր մարդկանց տւած պատէրները ապստամբու-  
թիւն հարուցանելու դիաւորութեամբ։ Իսկ ե-  
թէ դուք ձեր տեղերը հանգիստ կմնաք, ցոյց կը  
տաք մեզ ձեր հլու հպատակութիւնը, այնուհե-  
տեւ կվայելէք մեր սէրը, համակրութիւնը և խա-  
զադութիւնը։ Այսքանից յետոյ յայտնեմ ձեզ թէ  
ինչու համար էք կանչւած այստեղ, ասեմ։ Մեզ  
առ այժմ— հացի ամբարներ չունենք, սպասում  
ենք առաջներիս հնձին, որպէս զի հնարաւորու-  
թիւն լինի ուտեստի ամբարներ շինելու։ Իսկ  
այժմ մեր հացի գործարանը բոլորովին զուրկ է  
կենսական մթերքներից, որ եթէ քիչ էլ սպա-

սելու լինենք և չըհոգանք կենսական մթերքի  
համար, որը զլխաւորապէս հացն է, շատ շու-  
տով կարող է սովային աղաղակ բարձրանայ մեր  
զօրքերի մէջ։ Այս բանի համար որքան մտա-  
ծում եմ ուրիշ կերպ չկայ, պէտք է օգնութիւն  
հասցնէք մեզ, որպէս զի մեր զօրքերը մի կերպ  
պահպանւեն մինչև նոր ցորենի համնիլլ։ Եւ  
դուք յատկապէս կանչւած էք այս բանի համար։  
Այսուամենայնիւ սա ոչ թէ խնդիր է, այլ մի  
խիստ պահանջ է, որ դնում եմ ձեզ վրայ, ո-  
րով պէտք է բաւուկանութիւն տաք ինձ։ Ուստի  
այսորւանից յայսում եմ ձեզ ամենքիդ, որ  
ձեզանից իւրաքանչիւր մարդ պէտք է վճարէ  
քսան բեռից սկսած մինչև տասն բեռն ցորէն։  
Իսկ որոնք ցորեն չունին ունին գարի, կարող  
են գարի տալ, կորեկ ունին կարող են կորեկ  
տալ։ Բրինձ ունին կարող բրինձ տալ։ Սակայն  
հացահատիկները պէտք է աղաք ալիւր շինէք  
և յիտոյ բերէք յանձնէք մեր տնտեսական վե-  
զիրին։ Ուստի իմ այս հրամանս մինչև տասն  
օրը պէտք է կատարէք։ Իսկ եթէ ձեզանից որ  
և է մէկը կհանգընի դէմ կանգնել իմ հրամա-  
նին, նա կորած կլինի իւր ամբողջ կեանքով և  
գոյքով։ Հիմայ ձեզանից ով ոք խօսք ունի որ  
և ինձ ասելու մեր պահանջը վճարելու կամ չը-  
գնարելու համար թող ասէ»։ Փաշայի այդ տն-  
գոյանալի պահանջի վճարելու դժվարութեան

մասին Սիսիանցի Դիջի անունով քահանան, որ  
մասնակցել էր Դաւիթ բէկի բոլոր կոփներին,  
մերժեց միանգամից Փաշայի պահանջը և մասնա-  
ւոր քեանդխուղաների և իշխանների հետ միա-  
սին, իրենց յանդզնութեան մասին իսկոյն  
բանտարկւեցան վանքի ձիթհանքումը։ Իսկ միւս-  
ները նոյնպէս յանձն չառնելու համար սասաիկ  
ծեծ ուտելուց յետայ դարձեալ բանտարկւեցան  
առաջինների մօտ ձիթհանքումը։

Արդար և շատ դժվար էր Փաշայի պահան-  
ջի վճարումը հայ իշխաններին համար, որովհե-  
տեւ գարնան ժամանակ էր, սովը բերանը լայն  
բացած ամեն ինչ կլանել էր գցել իր փորը, էլ  
որտեղ էր գտնւում ցորեն, գարի, կորեկ և հա-  
ճար, որպէս զի հաւաքէին ժողովրդից և լրացնէ-  
ին Փաշայի պահանջը։ Մանաւանդ ժամանակի  
հայթքական վեց տարւայ միմիանց դէմ ունե-  
ցած անընդհատ կոփները միջոց էին տւել գիւ-  
ղացուն արդեօք վար ու ցանքս անելու։ Այդ  
հարցը Փաշայի համար մեռած էր։ Այնուամե-  
նայնիւ խնձորէսկեցի Թութակենց դայլամիտ  
Բաբան, որը իւր համագիւղացի Մինասենց Մա-  
խուն և նրա քաջ որդու Բալլուին հետ անձնա-  
նական թշնամութիւն ունէր, վերջիններիցս իւր  
վրէժը լուծելու համար նա յանձն առաւ տասն  
բեռը ալիւր տալ Փաշային և յղացաւփառա-  
սիրութեան և պատասիրութեան կործանիչ ձրգ-  
տումներով։ Ուստի Փաշայի սիրաը գրաւելու,

նրան հաճոյանալու և իր նպատակին համելու  
համար այն կողմից ձեռքը գրեց սրախն և պատ-  
րաստականութիւն յայտնեց, թէ ես կարող եմ  
տասն բեռը մաքուր ցորենի ալիւր բերել այս-  
տեղ և տալ ձեր տնտեսական վեզիրին:

— Կեցես դու, ասաց Փաշան: Դուք որ  
զիւղացի էք:

— Խնձորէսկ զիւղիցն եմ, Փաշան ողջ լի-  
նի, ասաց Բաբան:

— Շատ բարի, ասաց Փաշան. ձեզ աչքի  
առաջ կունենամ:

Փաշան հրամայեց զինւորներին, որ զնան  
բանտարկեալներին բերեն, մտածելով զուցէ նը-  
րանք էլ հետեւն Բաբուն:

Բերին բանտարկեալներին:

Տեսնում էք այս մարդք, որ ձեր ընկերն է,  
ասաց Փաշան: Ինչու մենակ սա ինքն խօստա-  
նում է նպաստամատոյց լինել մեր հացի գոր-  
ծարանին տասն բեռը մաքուր ցորենի ալիւր,  
իսկ դուք չէք ցանկանում դոնէ իւրաքանչիւրդ  
տալ հինգական կամ աւելի քիչ երեքական բեռը:  
Փաշան ապրած կենայ, ասաց Նիջի քահանան:  
Զեղ քաջ յայտնի է, որ այժմ գարուն է և տա-  
րուն ամենավատ ժամանակն է. այս ըուպէիս  
զիւղականի տանը կտոր հաց չի գտնվում, որ տայ  
երան երեխային, որը քաղցած է և հացի համար  
լաց է լինում: Մանաւանդ թէ Փաթալի խանին

և թէ նոյն խոկ ձեր Օսմանցիների հայերիս գէմ  
ունեցած կոխոները ժամանակ չեն տւել հայ  
գիւղացիներին, որպէս զի վար ու ցանքս անէին,  
որ այսօր գիւղացիների աներումը որ և է ուտե-  
լու բան երեար, որ եղածից հաւաքէինք մէկ  
քանի բեռը թէ ցորեն, թէ գարի և թէ կորէկ  
ու բերէինք տայինք ձեր տնտեսական վեզիրին,  
որով ոչ մենը ամօթտի մնացինք ձեզ մօտ և ոչ  
ձեր բարկութիւնը շարժւէր մեզ վերայ. Խնդրում  
ենք ինքդ դատես. էլ մենք որտեղից հաւաքենք ձեր  
պահանջելիս կենսական մթերքը, քանի որ ոչ  
ժողովուրդումն է դանվում և ոչ մենք ինքներս  
ունենք: Խղճայ մեզ ի սէր Սատուծոյ և ի սէր  
մեծ մարգարէին<sup>1)</sup>:

— Յամենայն դէպս պէաք է տաք, ասաց  
Փաշան, եթէ ոչ գոնէ մէկ մէկ բեռը:

— Մենք չենք կարող ձեզ խաբել, առացին  
հայ իշխանները: Սակայն մէկ բան, որ մեզ ոչ  
միայն զարմացնում է այլ գժվացնում է, թէ  
արդեօք ինձորէսկեցի Բարան մրտեղից է լրա-  
ցնելու իւր խօսացած անդոյանալի աահանջը,  
արդքանը չգիտենք: Դա իրա այդ սուտ խօսու-  
մովը մեր ճշմարտութիւնը կորցնում է ձեզ  
մօտ և մեր վարքը գետինն է զցում:

Ուրեմն դուք յանձն չէք առնում վճարել  
մեր պահանջը. ասաց Փաշան:

1) Մահամմէդին:

Ոչ, մենք չենք ուզում խարել ձեզ սուտ  
խօստումներ տալով. ասացին հայ իշխանները:  
Մանաւանդ խնդրում ենք այլ ևս խստապահանջ  
չլինէք:

Փաշան գայրացաւ և պատրաստւեց հայ իշխաններին մէկ մէկ գլխատել տայ. սակայն Քարահունջեցի Բաբուռ իշխանը և նոյն տեղոցի  
տիրացու Բաղդասարը միջամտելով երաշխաւոր  
դարձան բոլոր իշխանների տեղ, խօստանալով,  
որ մինչև քսան օրը Փաշայի պահանջը իրանք  
լրացրած կլինեն, որով կարողացան բոլոր իշխանների կեանքը ազատել մահացու պատժից: Փաշայի բարկութիւնը զիջաւ թէև, բայց սպառնաց  
իշխաններին ասելով «այժմ այդ երկու մարդկանց երաշխաւորութեան հիման վերայ ես զիջում եմ, Սակայն եթէ դուք կմերժէք իմ պահանջի վճարումը ես ոչ միայն ձեզ կպատժեմ բոլորիդ գլխատել տալով, այլ և ամբողջ զինւոններս կսփռեմ ձեր բոլոր գաւառներին ու  
գիւղերին վերայ և կպատիրեմ նրանց քարուքանդ կանեն միանդամայն ձեր զիւղերը, կըակի կմատնեմ ձեր տներն ու արտերը. գուրս կտան ձեր ցորենի ու ալիւրի ամբարները. աւարի կառնեն ձեր բոլոր կայքն ու գոյքերը: Կասպատակեն ձեր բոլոր անասունների հօտերը. զերի կառնեն ձեր աղջիկներին, հարսերին և կանանցը և ամբողջ սիւնիքը ապականութեան ասպարէզ

կղարձնեմ, ձեր հարազատների արխնով ներկել տալով։ Ահա առաջօրէն ձեզ յայտնում եմ այս բոլոր անելիք չարագործութիւնները, եթէ դուք իմ պահանջի համար անտարբէր գանվելու լինէք և ես պէտքէ կատարեմ վերջումը։ Դէ գնացէք ձեր գիւղերը և որը բարի է հետեւցէք նրան։ Իշխանները դլուխ իջեցրին Փաշային լուռ տիսուր ու արտում հեռացան և զլխակոր ճանապարհեցան դէպի իրանց գիւղերը։ Իսկ Թութակենց Բարան Փաշայի խօսքովը մնաց այնտեղ։ Փաշան նրան պահեց իր մօտ ինչ որ նրա հետքսիսալու համար։

Երեկոյեան Փաշան Բաքուն կանչեց իր վըրանը ու սկսեց խօսել նրա հետ դրաւիչ շողոքորթութիւններով։ Բարայ. ասաց Փաշան։ Ես արդէն ճանաչեցի ձեզ, թէ դուք որքան բարի մարդ էք գանհւում դէպի մեզ և, որքան էք կարեկցում մեր զօրքերի համար։ Այսուհետեւ ես ամբողջ հոգով կհաւատամ ձեզ, որ դուք շատ հաւատարիմ կլինէք դէպի ինձ։ Ուստի և ես ձեր երախտիքը յաւերժապէս վարձատրելու համար խօստանում եմ սրտանց քեզ։ Մելիք կարգեմ ձեր բոլոր հասարակութեան վերայ, որով դուք փառքի և պատւի տէր կդառնաք։ Եւ ձեր ամբողջ ազգատոհմին կշնորհեմ մի այնպիսի հաստատ ու հիմնաւոր ազնւականութեան փիրման, որով դուք ազնուական կլինէք և աշխար-

հում ժառանգաբար կվարէք այդ մէլիքութիւնը որդոց որդի մշտնջենաւորապէս յաւիտեան։ Անհոգ մնացէք, որ դուք այսուհետեւ կվայելէք իմ սէրը, համակրութիւնը և փառքը։

Ի՞նչ հարկ ունէր արդեօք, որ Փաշան այնպիսի փառաւոր խօստումներով Բարուն հրապուրում էր դէսի իրան։ Նրա հրապուրանքի և կեղծաւոր խօստումների մէջ տեղաւորված էր մէկ թունաւոր գաղտնիք, մի խորամանկութիւն, որով կուրացնում էր Բարուն աչքերը, որպէսզի նրա միջոցով կարողանայ ծանօթանայ ոչ թէ միայն Խնձորէսկու ցորնատէրերին և ունեորներին, այլ ուղում էր ծանօթանայ նաև Սիւնեաց երկրի բոլոր ունեորներին, քաջերին, պարագլուխնէրին և նրանց ներքին գործերին, որովհետեւ Փաշան իւր կարծիքով բոլորովին հաւատացած էր Բարուն, որպէս թէ նա բոլորին ճանաչում է, բոլորին էլ տեղերը գիտէ և բոլորին համար էլ կարող է ստոյգ տեղեկութիւններ տայ իրան։ Փաշան անծանօթ էր երկրին և նոր էր անցել Բարքի Փաշայի տեղը, նոր էր ստանձնել Սիւնեաց երկրի տաճկաց զօրքերի ամբողջ հրամանատարութիւնը։ Սակայն պէտք է հաւատացած լինել, թէ որքան փաշան էր շողոքորթիչ, կեղծաւոր և զրաւիչ, նոյնքան էլ Բարան էր։ Բնաւորութիւններով համապատասխան էին միմիանց։ Բարայ, դուք այսօր կարող էք ճանապարհել և

գնալ զիւղը. բայց ինչ որ ձեզ տոել եմ և դուք զիտէք, անմիջապէս կը հետեւ լրացնելու և ի կատար ածելու, թէ որքան կ'յաջողուի ձեզ: Իսկ մեր պահանջին համար որ դէմ կլինի և խոչնզու կհանդիսանայ, ասաց փաշան. աչքի առաջ կունենաք նրան, թէ զբաւորապէս և թէ անձամբ կյայտնէք ինձ».

Զարամիտ Բարան մէկ այնպիսի յարմար միջոցի էր սպասում, որը միայն փաշայի խօսքըն էր ստեղծում, ուր բոնութնամբ պէտք է զուրս տար Մախուն հորերը և բաւականութիւն տար նոյնպէս փաշային: Բարան շատ լաւ հասկանում էր, որ Մախին ոչ միայն դէմ է լինելու փաշայի պահանջին, այլ անպայման ինքն առիթ է անդիսանալու զիւղումը ահազին աղմուկ յարուցանելու և ոչ մէկ բան գոյտթիւն չի ստանալու: Ուստի փաշայի պահանջը զոյութիւն չ'ստանալու համար առիթ կլինի իրան զանգատել Մախուցը և նրա որդի Բալլուկը, որով կ'յաջողուի իրան զլխատել տալ վերջիններիս, որպէս զի ինձորէս զիւղումը. այլ ես կասկածելի թշնամի չունենայ և դէմը խօսող մարդ չ'մինի ինչ որ քէփն ուղէ այնպէս էլ զործէ:

Դէ, մնաք բարեաւ, փաշան ողջ մնայ, ասաց Բարան: Արդէն ես ճանապարհվում եմ զիւղը: Եւ անհոգ մնացէք, որ ձեր բոլոր պատւերները անպայման կատարւած կլինի: Եւ աշ-

խատելու եմ որքսն կարելի է շուտ կատարել  
ձեր հրամանը, իսկ ուշանալու մասին կարող եմ  
յայտնել ձեզ: Դուք էլ նոյնպէս անհոգ մնացէք,  
առաց փաշան. ձեզ համար ինչ որ խօսացել եմ  
այսպէս էլ լինելու է: Մի քանի օրից յետոյ  
մարդ կուղարկեմ ևնձորէսկ և քեզ մէլիք կը  
կարգէ ամբողջ հասարակութեան վերայ:

Բարուն ուրախութեան չափ ու սահման չը-  
կար, նա բեռնաւորւել էր փաշայի իրան շնոր-  
հած կարճատեհ մէլիքութեան խօսումովը, սի-  
րովը և փառասիրութեան բերկւալի տենչովը-  
նատի գոհութեամբ լցւած խորը կերպով զլուխ-  
իջեցրեց փաշային, հազար ու մի տեսակ փայ-  
լուն գովքեր թափելով նրա զլսին, կառավարու-  
թեան ձեին և ուղղութեանը ու հեռացաւ:

Բարան ճանապարհւեցաւ դէպի զիւղը, ո-  
րը նստած էր իւր սրբնթաց մոյզ կարմրագոյն  
ձիուն վերա: Նրան հետեւում էր իրան քաջ թիկ-  
նապահ Լալէյփազը<sup>1)</sup> որը երկար տարիներ էր,  
որ ծառայում էր թութակենց տանը: Եւ իրաւ,

1) Լալէյփազը ցեղով զարածուլու քիւրդ էր իսկ տեղով  
Բօղլու գիւղացի: Պատանեկութեան հասակում պարապում էր ա-  
ւազակութեամբ և մեծ վնասներ էր հասցնում Զանգեզուրի հայ  
գիւղացիներին թալանելով գիւղերը, տազատակելով նրանց անա-  
սունները, զութանները և մինչև անդամ գերի էր տանում մարդ-  
կանց: Սակայն չգիտեմ ինչ գէպքից է պատահում, որ նա զզում  
է և յետ է խորշում աւազակութիւնից ու գալիս ևնձորէսկ գիւղը  
և ծառայ մանում թութակենց, մնալով նրաց տանը մինչև 25  
տարի:

որ Բաբան թէկ կարճ, բայց միենոյն ժամանակ  
վայելեց փաշայի սէրը և համակրութիւնը, որով-  
հետեւ այն մէլիքազունները, տանուտէրները, քա-  
հանաները, քանդխուղանները, որոնք առ երես  
խօստացել էին կատարել փաշայի հրամանը, նրա  
պահանջը հասուցանել և գտնվում էին երկու  
մարդկանց իշխանութեան ներքոյ, որոնց երաշ-  
խաւորութեամբ մի կերպ ազատել էին իրենց  
կեանքը փաշայի մահացու պատժից. նրանց ոչ  
մէկը չկարողացաւ կատարել իր խօստումը, նո-  
րանք վերջումը սոսկալի պատիժների ենթարկ-  
ւեցան. Բայց վրեժխնդրութեամբ յղացած Բա-  
բան իւր ծրագրած խորամանկութեամբ կարո-  
ղացաւ գոյացնել տասն բեռ ալիւրը և կատարել  
իւր խօստումը. Սակայն տասն բեռ ալիւրը գեռ  
գիւղումը, գործը ուրիշ կերպարանք ստացաւ,  
որ հէնց նոյն գործի կերպարանափոխելուցն էլ  
Բաբան յարմար միջոց գտաւ իւր չար նպատա-  
կին հասնելու համար, այն է կրկնում եմ խօս-  
քը. որ սպանել տայ Մախուն և Բալլուին:

---

### ԲԱԲԱՆԻ ՄԵԼԻՔ ԿԱՐԴԻԼԻ.

Չորս օր էր, որ Բաբան փաշայի մօտից  
եկել էր գիւղը. Նա ժողովրդեանց մէջ նստած

1). Բաբան Մախուն ամենասոխերիմ թշնամոն էր, որովհե-  
տեւ Մախին առհասարակ պաշտպանում էր ժողովրդի շահերը.  
իսկ Բաբան կարճամիտ և դաւաճանսող բնաւորութեան տէր մարդ

Խոչ  
3106

17

ԱՐԵՎԱՆԻ ԳՈՐԾՎԱԿԱՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔ

խօսում էր օսմանցոց նոր բռնտկալ գրադադարի տարի մարդասիրութիւնը և ողորմածութիւնը զեղի սիւնեաց երկրի հայ ժողովրդեանց։ Խօսում էր իւր չար նալատակի իրականաց ման յոյսի ուրախութեամբ ողեղը վաճառքած։ Գոհանակութեամբ մաղթանքներ էր, զովքեր էր, որ թափում էր մէկ արիւնարբու զազանի զլխին։ Իսկ ժողովուրդը զժզոհութեամբ լուռ ու մունջ լըսում էր Բարուն վնասակար խօսակցութիւնը թէհ ոչ մէկն էլ ախորժակ շունէր լսելու նրանհաճելի խօսքերը։ Ժողովրդեանց մէջ զըտնվում էր նոյնապէս Մինասենց ծերունի Մախին, որը Խնձորէսկու ամենաառաջին հարուստ մարդն էր ամեն կողմերով։ Բարայ, բաւական է որքան զովում էք մէկ չար զազանի, ասաց Մախին։ Շանը զովելով ոչխար չի դառնալ և զայլը հօտ չի պահպանիլ, ասում է նախնեաց առածը։ Մահմէղականների առաջին զործը, առաջին պաշտելի սկզբունքն այն է, կոտորել, աւերել, այրել և քարուքանդ անել քրրստոնեայ աշխարհները, և ոչ շէնացնել և ապահովութեալ Դուք արդեօք ումն էք զովում լազար մենք նրանք չենք ճանաչում։

Էր, չտիազանց թիւրքանէր, քրդանէր, փառանէր, եսամոլ և չահախնդիր։ Ժողովրդեանց բոլոր օգտաւէտ միշտները նա կոնքութել առհասարակ իրանան հետատին քմահաջութիւններին, ոչինչչմտածելով ապազանում վնասներ կամ շահեր յարուցանելու համար։ Մինչդեռ Միթիթար սպարազեալ կենդանի էր Զանդեղուրի տէրը և իշ-

Մախին դէռ խօսքը չտւարտած, Բարսն.  
անհամբերութեամբ կանգնեց տեղից և կատա-  
դաբար իրան նետեց առաջ ու ասաց. այդ ժաման  
էք գազան ասում, Մախի, միթէ չես վախում  
երկրի «սհաբից» (տիրոջից) օձին զլուխը որ  
ցաւում է, ասում են որ նրան մահն է մօտե-  
նում, զնում է շէն ճանապարհներում կծկծվում,  
որպէս զի մարդիկ տեսնեն մէկ իրան նման չար  
արարածին սպանեն ու հանգստացնեն: Հիմայ  
դուք ձեզ համար օձին մահանալու ձեն էք բա-  
նեցնում. չէք ուզում ձեր ալեզարդ զլուխը ողջ  
մնայ ձեզ վերայ: Եւ շատ չի տեիլ շուտով գե-  
րեզման կ'իջնէ դիակդ առանց զլխի: Բարուն  
սպանալիքը վատ ապաւորութիւն թողեց բոլոր  
մարդկանց վերայ: Եւ մինչ դեռ Բարսն և Մա-  
խին թէժ վիճաբանութեան մէջ էին գտնվում  
մէկը փաշային գովելով միւսը պարսաւելով ու  
ատելով, ահա նոյն միջոցին զըսից գիւղը մտան  
ութ ձիաւորներ, որոնց երեքը հայեր էին, իսկ  
հինգն տաճիկ թիւրքեր: Այդ ձիաւորները փա-  
շայի կարգադրած և ուզարկած մարդիկն էին,  
եկել էին Բարուն Մէլիք կարգեն: Նրանք հար-

---

իսանը ինքն էր, իսկ երբ որ նահատակւեց գիւղը մինչեւ ութ ամիս  
մնաց առանց մէլիքի և առանց մի այլ զլխաւորի: Ուստի Բարուն  
ձգտումն էլ հէնց այդ էր, որ ինքը մէլիք դառնայ հասարակու-  
թեան վերայ քանի որ մէլիք դառնալու յարմար միջոցով հանգերձ  
փաշայի նման մէկ հզօր աջակից էլ ունէր իւր փառասիրութեան  
ձգտումին հասնելու համար:

ցնելով գնացին Բարուն տունը։ Լալէյվազը և  
պահունի գզիր Բաղդասարը շուտով վրա հասան-  
պատշաճ քաղաքավարութեամբ բռնեցին նրանց  
ձիաների սանձերը և տարան կապուտեցին մեծ  
սրահի տակին։ Իսկ հիւրերին սարան այն գոր-  
դերով զարգարած սենեակը, որը յատկապէս  
պատրաստած էր հիւրերի համար։ Հիւրերը նըս-  
տուեցին սենեակի յատակին վերայ սփռած գե-  
ղեցիկ գորգերին վերայ։ Քիչ անցած ներս մտաւ  
Բարան, որը թրքավայել կեղծ և կարաւող քա-  
ղաքավարութեամբ զլուխ խոնարհեցրեց նորեկ  
հիւրերին, բարեմաղթելով նոցա շնորհաւոր մուտ-  
քը։ բարով հազար բարի էք եկել, տակով,  
դարձեալ հազար ու մին կեղծաւոր խօսքերով  
զարգարելով նրանց սրտէրը։ Այդ փանատիկական  
օրհնանքից յետոյ նատեց հիւրերին մօտ, հար-  
ցրեց փաշայի առողջութեան համար, ցոյց տա-  
լով նոյնպէս իւր կեղծաւոր հակումները և բա-  
րեկամութիւնը դէպի փաշին և դէպի օս-  
մանցոց կառավարութիւնը։ Սակայն ժողովուրգը  
անհամբեր սրտով սպասում է այդ ձիաւոր մարդ-  
կանց գալստեան համար, բայց այդ օրը դրակա-  
նապէս նոցա գալստեան կողմանէ ոչ մի տեղե-  
կութիւն չիմացւեցաւ։ Յաջորդ օրը գզիր Բաղ-  
դասարը շատ շուտով կանչեց բոլոր ժողովրդ-  
եանց և յայտնեց, որ ոչ ոք այլ տեղեր աշխա-  
տելու և գործի չգնայ, որովհետեւ Հաջալի փաշա-

յից հրաման է եկել: Ուստի այդ օրը ոչ ոք գործելու չգնաց և բոլորը հաւաքւեցան ղիւղամէջ: Մթին և տխուր տարակուսանքներ էր, որ պատել էր խեղճ ժողովրդեանց: Իւրաքանչիւր տանւող միտքը երբէք չէր հանում բախտաւոր հետևանքի այլ վերջանում էր դառն ու ցաւալի կարծիքներով: Արեգակը կէս օրւան տեղին մօտեցած ահա Թութակենց տանիցը դուրս եկան փաշայի ուղարկած մարդիկները, որոնք Բաբուն և գզիր Բաղդասարի առաջնորդութեամբ եկան ժողովրդեանց մէջ: Յյդ մարդկանց մէջ մէկը իր փառաւոր հագուստով զանազանվում էր միւսներից: Դա փաշայի ամենահաւատարիմ և քաջ Մահմէդ-բէկն էր, որը հինգ հարիւրապէտի պաշտօն էր վայելում օսմանցոց զօրքերի մէջ: — «Երսեցէք ով Խնձորէսկու բոլոր ժողովուրդներ: ահա յայտնում եմ ձեզ ամենքիդ, — ասաց Մահմէդ-բէկը: — Երեկի Հաջալի փաշան Տաթեից ինձ ուղարկել է այստեղ Թութակենց Բաբուն ձեր հասարակութեան վերայ Մէլիք կարգելու համար: Այժմ ես հարկ եմ համարում ցոյց տալ ձեզ փաշայի ինձ յանձնարարած Փիրմանսական հրամանաթուղթը, որ բոլորդ էլ հաւատաք ինձ և մէլիք ճանաչէք Բաբուն: Այս խօսքերը ասելով ձեռքը տարաւ ծոցի գրպանից հանեց մի թուղթ և սկսեց կարգալ, որը գրւած էր թիւրքէրէն, իսկ հայերէն թարգմանութեամբ իր մէջ

բովանդակում էր հետեւեալ գըռւթիւնը.—  
«Սողոմոն ամենամեծ արքայի սուրբ և հզօր աւանդա-  
պաշտպան գահակալին, Մահամմէդաղաւան մեծափառ  
ժառանգին և ամենայն Օսմանեան ազգին և այլ և  
այլ ազգաց տիրապետող ահեղազօր պաշտպանին  
Սուլթան Ահմէդ Երկրորդին ես ծառայ Հաջալի փաշայ-  
այս փիրմանական թղթովս, որը հաստատում ենք  
Դուրսանական սուրբ պրօշմով և որի մէջ գրած օրենք-  
ների գորութեան համաձայն հաստատած մշտնջէնաւոր-  
կտրուկ իրաւունքներով խնձորէսկեցի Թութակի թուն  
և Դագու որդի Բարային մէլիք եմ կարգում Խնձորէս-  
կու ամբողջ հասարակութեան վերայ, որոնց ազգատոհ-  
մից սերւած ժառանգները մեր շնորհած այս ազնուտ-  
կանութեան փիրմանով մէլիքութիւնը կը վարեն ժա-  
ռանգարար յաջորդելով միմիանց, որդեց որդի և ազ-  
գեյազգ մշտեջէնաւորապէս այս աշխարհում յաւիտեան:  
Վասնորոյ և մենք սոցա նախորդների ազնուականու-  
թեան փիրմանի յատուկ հիման վերայ աւելացնում  
ենք և մերը, թարմացնելով սոցա ազգատոհմի ազ-  
նուականութիւնը աւելի հիմնաւոր հաստատութեամբ:  
Որ և կնքում ենք փիրմանս Համայն Օսմանեան պաշտ-  
պան Մէծ Տիրոջ Սուլթան Ահմէդ Երկրորդի մեզ շնոր-  
հած մեծաշղուք կնիքով»: Ուստի ժողովուրդը իմ ըն-  
տրած և զրած մէլիքին պէտք է ճանաչէ որպէս մէլիքի:  
Պէտք է պահպանէ նրա պատիւը. կատարէ նրա-  
բոլոր հրամանները, ընդունէ նրա ասածները և վճա-  
րէ պահանջները: Եւ ոչ ոք իրաւունք չունի հակագէմ-  
լինելու նրա արած դատերին, կայացրած վճիռներին,  
և արած կարգադրութիւններին: Իսկ հակագիմոզներին  
մէլիքը իրաւունք ունի չարաչար կերպով պատճելու  
և տուղանքի ենթարկելու»: Հաջալի փաշայ:

Փիրմանը կարդալուց և հասկացելուց յետոյ, հարց առաջարկեց ժողովրդեանց Մահմէդ բէկը ասելով, հիմա ի՞նչ էք ասում, ընդունում էք, որ Բաբան մէլիք դառնայ ձեր հասարակութեան վերայ:

Բոլոր ժողովուրդը միաձայն կոչեց, ընդունողմ ենք՝ աղան ապրած մնայ, ընդունում ենք. շնորհաւորում ենք Բաբուն մէլիքութիւնը:

Ժողովրդեանց ձայնը ընդհատուելուն պէս մէլիքութեան թանգագին բօրանի<sup>1)</sup> խալաթը խոկոյն ձգեցին Բաբուն ուսերին, որն այնուհետեւ ժողովրդեանց վերայ հաստատ մէլիք կարգւեցաւ: Սակայն նրա մէլիքութիւնը տևեց հազիւթէ քսան օր, որովհետեւ Մախուն քրոջ որդիքը նրան սպանեցին Քարահունջի դիմաց գտնւող կաքաւ աղբիւրի կիրճումը: Սպանութեան պատճառները կը գրենք իր տեղը:

---

1). Դա իր ժամանակում մէկ վերարկու էք, որ պատրաստում էին կարմիր մահուգից և կոչում էին խալաթ, — որ նշանակում է ընձայ: Երեխի դա մէլիքի պաշտօնական պատին պարզետրւող այն արժանաւոր Շխալաթն է» որով ժողովուրդը հասկանում էր նշանակուած մարդու յատուկ մէլիք կարգւած լինելու հաստատութիւնը: Խալաթը, արվում էք նրանց: որոնց մէլիքութիւնը ցեղական չէք լինում:

ՈՎ. ԵՔ ՄԸՆԹԻՆ ԵՒ ԽՆՉՊԻԱԲԻ ՄԸՆԹԻ ԵՔ.

Մախին մի հարուստ և բարեպաշտ մարդ էր: Նա ժամանակի ամենաեռանդուտ հողագործներից մէկն էր: Մախուն ամբարները լիքն էին ցորնով, գարփով, կորեկով, հաճարով և այլ ուտելու հունգերով: Նա հարուստ էր նոյնպէս փողով և թէ ընտանի անհասուններով: Մախուն տունը որպէս նահապետական մէկ պարզ տուն լիքն էր կենսական այլ և այլ բոլոր պիտոյքներով: Նրա ընտառորութիւնը շատ համեստ էր, այնպէս որ ամեն չքաւոր անհատի ինչ որ հարկաւոր էր լինում. առանց քաշւելու հեշտութեամբ ուզ մէկի խօսքը և տալիս էր ամեն մէկի ուզածը: Մախին ժողովուրդասէր էր և իր ժամանակում ժողովրդականութիւն էր վայելում ոչ միայն Խնձորէսկում այլ և հեռաւոր տեղերում: Նա ծանօթ էր Ղարադաղի խաների հետ. աւելի շատ Մահմադ խանին հետ, որը վարվում էր Մախուն հետ հարազատ բարեկամի նման, չնայած որ ինքն մտհմէղական էր: Մախին ինչպէս որ զրել ենք միշտ հակւած էր գէպի ժողովրդի շահերը և մտածում էր անկարողների կենցաղի մասին: Գարնան ժամանակ նա բացում էր իր ամբարները ցորեն, գարի, կորէկ և հաճար էր բաժանում աղքատներին, որոնք իս-

պառ աղքամա էին նրանց ձրի էր տալիս, իսկ ու-  
րոնք կարող էին ամառը տալ, նրանց փոխ էր  
տալիս և ամառը կալի ժամանակ յետ էր ստա-  
նում: Բայց ինչ օդուտ Մախին իրար վայելած  
ժողովրդականութեամբ ամենքին համար սիրելի  
և պաշտելի էր, միայն թութակենց Բարուն աչ-  
քի զրողն էր, նրա ոխերիմ թշնամին էր: Եւ  
ինչու: Այն էր որ Մախին իր հարատութեամբ,  
աղքատասիրութեամբ, առատութեամբ և ողոր-  
մածութեամբ բոլոր ժողովրդին սիրելին և պաշ-  
տելին էր դարձել և բոլորի ուշը միտքը գրաւե-  
լով կարծես թէ հիւսել էր իր բարի կամքի հետ-  
ինչ որ ասում էր Մախին լսում էին ժողովուր-  
դը և ինչ որ հրամայում էր կատարում էին:  
Ուստի և հենց այդպիսի նախանձելի աղքիւրնե-  
րից էին ծագել Մախուն և Բարուն անսանձելի  
թշնամութիւնները, որը յետոյ տեղի տւեց եր-  
կու կողմերի սպանութիւններին: Այնուամենայ-  
նիւ հարկ եմ համարում ասել, որ Մախին շատ  
անտարբեր էր և միամիտ և երբէք չէր կատկա-  
ծում թէ իր կեանքի և թէ իր որդի Բալլուի  
կեանքի և սպանութեան մասնւելու ողբալի և չար  
հետեանքի մասին: Իսկ Բարան, որպէս մի դարա-  
նակալ օձ, արթուն էր և իբրև մէլիք, որպէս զի-  
գիւղումը իր գործողութիւններին մասին դէմը խօ-  
սող էլ մարդ չ'ինի, որպիսին էր Մախին, նա-  
ամեն կերպ աշխատում էր հնարաւորութիւն

գանել և ոչնչացնել տար Մախուն և պատանի  
Բալլուխն։ Ուստի Բարան անդործ չ'մնաց. նա  
սկսեց մտածել զանազան տեսակ մահացու խո-  
րամանկութիւններ, որով որքան կարելի էր շու-  
տով ոչնչացնել տար Մախուն և Բալլուխն ա-  
ռանց ոչ ոքի կարծիքի համելու թէ Մախին  
թունաւորվելով մեռաւ կամ թէ իր հարազատ  
մահովը մեռաւ. Սակայն Բարուն ծածուկ գոր-  
ծադրած բոլոր խորամանկութիւնները մութից  
ի լոյսն հանւեցան և նրան յաջողւեց Մախուն  
և Բալլուխն սպանել տալ օր ցերեկով և ոչ  
գաղտնի դաւադրութեամբ։

---

Զեայած որ Մախին քմեն կողմով հարուստ  
էր և ուներ երկու եղբայր, մէկը Խաչատուք  
վարդապետն էր, իսկ մէկը Աթան, և ուներ վեց  
որդի, այնուամենայնիւ նա չուներ մէկ այնպի-  
սի որդի, որ լինէր ժրաշան, աշխատասէր, խե-  
լացի և աչքաբաց, որպէս զի տունը կառավարե-  
լու, հեղինակութեան մէջ ընդունակ լինէր և հո-  
գար դէպի անտեսականը, որովհետեւ ինքն ծե-  
րացել էր, թէ աշխատելու թէ շարժւելու ան-  
ընդունակ էր դարձել։ Նրան հարկաւոր էր տը-  
նային կառավարութեան նախշը առաջ տանող  
մի երիտասարդ, որ իրան մահից լետոյ տեղը  
անցնէր և տունը կառավարէր։ Բայց ի՞նչ արած,

նրա որդիքը խօսելում բռւթ, զործելում ծոյլ,  
շրջելում գանգաղ, կուելում վախկոտ և աշխա-  
տելում թոյլ էին և, այսքան հարազատներից ոչ  
մէկը թշնամու դէմ յանգպնող խօսող չէր, այլ  
թաղնուղ և փախչող էին։ Վերջապէս չունէր մի  
այնպիսի որդի, որ իբան սրտովը լինէր և իր  
սրտի ուղածը կատարէր։ Ռուստի այդ մասին  
անգաղար մտածում էր թէ արդեօք իբան մտ-  
հից յետոյ որդիքը բնչպէս են ապրելու և ինչ  
անուն են ժառանգելու։ Սակայն Մախուն սըր-  
տի միակ նեցուկը և վերջին մխիթարական մի-  
ակ յոյսը իր երկրորդ կնոջ ետեկից եկած Բալ-  
լու անունով քաջ պատահնին էր, որը փայլուն  
հռչակ ունէր իւր քաջագործութիւններով։

---

¶ ¶ կ թ թ Ե Լ Լ Ո Ւ Ն

Մինասենց Մախուն տուաջին կինը երբ որ  
մեռնում է, նա պսակվում է Հերիքնազ անու-  
նով մի այրի կնոջ հետ, որը այժմեան Դինգի-  
զանց ցեղի այն ժամանակւայ տանը հարս էր։  
Այրի Հերիքնազը Դինգիզանց տանը ամուսնուց  
Մախուն տունն է տանում իր հետ Բալլու ա-  
նունով մէկ տղայ երեխայ, որը երեք տարեկան  
է լինում։ Բալլուն տակաւին մանկական հասա-  
կում բաւական աշքի էր ընկնում իւր արտաքին

քաջազնական նշաններով, որոնք ցոյց էին տալիս ապագայում նրա որպիսի քաջ երիդասարդ լինելու բոլոր յատկանիշները։ Ուստի ծերունի Մախին այնքան սիրում էր Բալլուին, որ միանգամայն իրան ամբողջովին նոփրել էր նրան։ Բալլուն մեծանալով երբ որ հասաւ 22 ամաց, նա թէ իր գեղեցկութեամբ, թէ աշխոյժ պատանեկութեամբ և թէ հերոսական գործողութիւններով փայլուն հոչակ էր վայելում ամբողջ Զանգեզուրի գաւառում։ Բալլուն Մախուն սրտի հազւագիւտ փափազն էր։ Մախին թողեց իւր վեց հարազատ որդիները և ամուր ձեռքով բռնեց միայն Բալլուի փէշը. որովհետեւ Բալլուն կատարեալ հասակի հասնելուց յետոյ թութակենց երիասասարդները ծառի տերեկի պէս գողգողում էին նրանից։ Մանաւանդ իւր խելօքութեամբ և ճարտարախօսութեամբ այնպիսի ազգեցութեան տէր եղաւ, որ ամբողջ հասարակութեան դէկը ձեռքն առաւ ու սկսեց քարոզել սէր և համերաշխութիւն և դէմ կանգնել մէլիք Բարուն բռնակալութեանը։ Մէլիք Բարուն աչք էր տալիս բայց լոյս չէր տալիս։ Այսուամենայնիւ մատնիչ Բարան, որպէս զարմանի տակով գաղտնի հոսող ջուր երբէք անգործ չէր մնում Մախուն և Բալլուին գաղտնապէս մահւան թակարդի մէջ դցելու համար։

Մէկ օր Մախին և Բարան սաստիկ վիճում

էին։ Մախի, ասաց Բաբան, շատ մի փքւիր,  
շատ մի վստահանալ. որպէս թէ Բալլուի նման  
քաջ որդի ունիմ, ոչ ոք չի համարձակվի ինձ  
դիպչելու տերեկի ոյժով. հաւաստացած եղիր, որ  
ես մէկ օր կուլ եմ տալու ձեզ նման երկու ա-  
մենի վիշապներին և ուրանում։ Եւ երկար չի  
տևիլ երկուսիդ մահացու պատահարը։

Ինչ որ ձեռքովդ գալու լինի, չինայես, ա-  
սաց Մախին։

---

### ՏՐԹԵՒԻՑ ՓԱՇՅԱ ՄԵԼԻՔ ԲԵՐՅՈՒՆ ՎԵՐԱՅ ԱԽԱՐԿՈՒ ՀՐԵՄԱՆՅԻ.

Հազիւ թէ լրացել էր Թութակենց Բաբուն  
մէլիքութեան տան և ութ օրը երբ Տաթեսից  
Խնձորէսկ եկան փաշայի հրամանաբեր ձիաւոր-  
ները, որոնց մէկը Տաթեացի հայ էր իսկ միւսը  
թիւրք։ Նրանք գնացին ուղղակի Մէլիք Բաբուն  
տունը։ Նրանք եկել էին յատկապէս իմանալու  
թէարդեօք Բաբան ալիւրը պատրաստել է՞ր։ Փա-  
շայի ուղարկած մարդիկների մէկը վերցնելով  
գլխին գրած մեծ փափաղը, որը Տաթեացի հայ  
էր, վերեկ արանքից հանեց մի թուղթ և տւաւ  
Բաբուն։ Այդ թուղթը փաշային ուղարկած հրամանն  
էր, որ գրած էր թիւրքերէն իսկ հայերէն թարգմա-  
նվում էր հետեւեալ կերպով — «Հրաման Հաջալի

փաշայից, ուղարկված Խնձորէսկու հասարակութեան մէլիք Բաբուն։ Այս հրամանը ձեզ հասնելուն պէս շուտով կը կատարէք ձեր խօսառմը, որով յանձն առած էք շնորհել մեր հացի գործարանին տասն բեռը ալիւր։ Վասնորոյ ես վատահ եմ, որ դուք անպայման կատարած կը լինէք ձեր թանկագին պարտականութիւնը, որով պատռած կլինէք ձեր պանծալի մեծարարքով թէ ինձ և թէ մեր զօրքերին։ Որ և ձեր հաւատարմութիւնը անմոռանալի կմնայ ինձ մօտ»։

### Հաջալի Փաշայ։

Երեկոյեան դէմ Բաբան վերցրեց հրամանը Տաթեից եկած մարդիկների հետ միասին դուրս եկաւ գիւղամէջ և գզիր Բաղդասարի միջոցով կանչել տւաւ ժողովրդեանց ունկորներին և չունեորներին և բոլորին հաւաքեց իւր մօտ։ Այդտեղ էր և Մինսահնց Մախին։

— Ո՞վ մէք Խնձորէսկու բոլոր ժողովուրդ, — ասաց Մէլիք Բաբան։ Հաջալի փաշան այս հրամանը ուղարկել է ինձ վերայ և մեզանից տասն բեռը ալիւր է պահանջում։ Այս ուղելիքի համար ես որքան մտածում եմ մերժելու որ և է կերպ չկար անպայման պէտք է կատարենք նրա հրամանը, որպէս զի նա իւր կատաղութեան թոյնը մզ վելայ ։ Թովքէ։ Թէև ինձ գաջ յատնի է, որ այս բռալէիս մեզանում շատերը ուտելու ոչինչ չունին. յամենայնդէպս պէտք է լը-

բացնէք նրա պահանջը. պէտք է դարձեալ մի կերպով ունենորներից հաւաքենք, որպէսզի գիւղը ազատւի նրա գրած աւերիչ և արիւնահեղ պատուհամներից:

Բոլոր ժողովուրդը լուռ էր: Նրանցից ոչ մէկը Մէլիք Բաբուն խօսքին բաւականութիւն չտւաւ. որովհետեւ աղքատների յոյսը նոյնպէս ունեւորներն էին, որոնք փոխադարձաբար ցորեն էին վերցնում. ապրում, մինչև նոր հունձը ընկնելը և անկարող էին նպաստել: Իսկ ունենորները շատ քիչ էին և այնքան, որ հազիւթէ իրենց բաւականութիւն տար նոյնպէս մինչև նոր հունձի ընկնելը. Էլ խեղճ ժողովուրդը որտեղից եւ ինչով լրացնէր փաշայի դժվար գոյանալի պահանջը: Մակայն Բաբան խստապահանջ էր: Եւ շատ լաւ գիտէր որ Մինասանց Մախուն հորերը ցորենով, գարիսվ, կորեկով եւ հաճարով լիքն են, միայն յանձն չէ աւնելու տայ, որավ ինքն պատճառ կը գտնէ Մախուցը զաւաճանել փաշային: Եւ այսպէս մի կողմից փաշայի խստապահանջլինելը միւս կողմից աղքատ դասակարգի քաղցածութեան դառն կրակը երկուսը միացած տանջում էին խեղճ ժողովրդեանց:

Ինչու էք լոել, ասաց Բաբան. ինչու չէք խօչում: Թող ձեզանից, որոնք ունեւոր են նրանք լրացնեն փաշայի պահանջը: Մախի ինչու

ես լոել. ինչու պատասխան չես տալիս: Զիօսելով բան չի գոյանալ, խօսելով, հաւաքելով եւ տալով կը գոյանայ: Վեց բեռը ալիւր դու լրացրու տուր, իսկ մնացեալ չորս բեռն էլ ժողովուրդը տայ, որ եւ այդպիսութիւնով էլ լրացրած կլինէք փաշայի պահանջը, որով գերադասելի կլինենք մենք խնձորէսկեցիներս այլ գիւղերի բոլոր ժողովուրդներից: Մանաւանդ փաշան այնքան անազնիւ մարդ չէ, որ աչքի առաջ չունենայ մեր լաւութիւնը եւ գնահատելով չ'վարձատրէ մեր ժողովրդին:

Այս խօսքերը արտասանելու ժամանակ հըրամանաբեր մարդիկը լսում էին եւ Տաթեւացի հայը Բաբուն ասածները թիւրքերէն հասկացնում էր իրա թիւրք ընկերին:

Բաբայ, ասաց Մախին, այս ինչ կըտկ է, թափել ես մեր խեղճ հայ ժողովրդեանց գլխին: Դու տեսնում ես որ այժմ «նոր բերանք»<sup>1)</sup> է ամեն ամեն ինչի էլ սպառւած ժամանակն է. արդեօք դու ի՞նչ մտքով և ի՞նչ նպատակով յանձըն առար փաշային մօտ որ ես կարող եմ տասըն բեռը ալիւր տամ: Ասիր ինձ խնդրեմ, որտեղից ես տալու: Մեր քաղցած ժողովուրդը այդ անգոյանալի պահանջը, որտեղից կարող է գոյանացնի. քանի որ այժմ իւրաքանչիւր մարդ

1). Տեղական խօսք է: — դաբուն է նշանակում, — ամեն ինչ սպառուած:

մտածում է միայն իրա քաղցած գերդաստանի զրութեան մասին։ Միթէ դու չկարողացար հաւատացնել փաշային, որ այս բոպէիս ժողովուրդը, ուտելու ոչինչ չունի և չէ կարող կատարել ձեր հրամանը։ Ինչու Տաթեում բոլոր հրաւիրւածները քո ներկայութեամբ մերժել են փաշայի պահանջը, իսկ դու խօստացել ես վճարել։ Լաւ չէր լինի, որ փոխանակ հազարաւոր մարդկանց զոհելու քեզ համար՝ միայն դու զոհւէիր այդ հազարաւոր մարդկանց համար։ Քո միտքդ լաւ զիտեմ ես, դու քո վառքիդ ու պատւիդ համար ես տանջում մեր քաղցած, աղքատ ու խեղճ ժողովրդին։ Ամօթ մի քեզ նման կեղծ մարդուն։ «Գարշակեր մարդը իր գտալը միշտ իր զոտկումը կպահէ»—առում է նախնեաց առածը։ Մախուն վերջին խօսքի ազդեցութեամբ սոսատիկ զայրացաւ Բաբան և վերջինս պատրաստում էր Մախուն հարւած հասցնել։ բայց ժողովուրդն միջամտելով՝ բաժանեց իրարից և սաստեց կուի լայն չափեր ստանալուն։ Եւ Մախուն ու Բաբուն իրար հետ ընդհարւելը—առիթ դարձաւ «պահանջ»-ի հարցը անորոշ ժամանակով յետաձգել։ Երեկոյեան դէմ, երբ մութը վրայ հասաւ ժողովուրդը սկսեց ցրւել և ամենքն էլ գնացին իրենց տները։

Միւս օրն՝ դեռ վաղ առաւօտեան Բաբան-զգբի միջոցով կրկին անզամ կանչել տւեց ժո-

զովրդին և ժողովեց գիւղամէջ։ Կանչել տւեց  
նաև Մախուն։

Մախի, —ասաց Բաբան։ —Դու արի ժողով-  
րդին յորդորի և թող իրակացնէ փաշայի պա-  
հանջը։ Արի խոչնդոտ մի հանդիսանալ մի այն-  
պիսի գործի, որը ապագալում կարող է առիթ  
լինել ժողովրդին չարաչար տուժելու։ Թող մի  
կերպ անենք ալիւրը գոյացնենք։ Դու լաւ իմա-  
ցիր, որ այդ ուղղութեամբ գործելով ոչ թէ օ-  
գուտ ես տալիս, այլ ամբողջ հասարակութեան  
մէջը կոտրելով տունը քանդում ես։ Քանի որ  
վերը գեռ լայն չափեր չի ստացել, սպեզանի  
(վիրաբոյժ) գիր և առողջացրու, բայց երբ որ  
վերը խոր չափեր ստացաւ, իմացած եղիր  
որ սպանելու է։ Այս պահանջն, —որը ժողովր-  
դին պիտի զրկէ մի չնչին նիւթականից, —դու  
այնպէս մի անիր որ դա վերջը ժողովրդին հա-  
մար տանջանք դառնայ։ —Կրկնում եմ խօսքս, ե-  
թէ ուզում ես ժողովրդին բարերարութիւն ա-  
նել, նրանց բեռը թեթևացնել, ինչպէս ասում  
եմ այնպէս էլ արայ. վեց բեռը ալիւր դու գո-  
յացրու, իսկ չորս բեռն էլ ժողովրդից կհաւա-  
քենք և այսպէս էլ փաշայի պահանջը գոյութիւն  
կստանայ։

Բաբան հազիւ թէ վերջին խօսքը աւար-  
տել էր, երբ այն կողմից ամբողջ ժողովուրդը  
միաձայն աղաղակելով կոչեցին, որտեղից վճա-

բենք, պատւելի մէլիք։ Ենթազրենք թէ նոյնիսկ  
երկու բեռն ես ուզում, այն որտեղից տանք։  
Երանի մի առատ սել գար և մեր գիւղը քը-  
շէր ու տանէր, և այդպիսով զուցէ կարողանա-  
ցինք ազատւել քո ձեռքիցդ։ Աստուած քո տու-  
նըդ քանդի, ինչպէս որ զու մեր տներն ես քան-  
դում։ Տունդ կրակ ընկնի այրւի, Թութակենց  
Բարայ, այս ինչ կրակ է որ թափում ես մեզ  
վերայ։ Այսպէս անիծում էին ոչ միայն մար-  
դիկը այլ անիծում էին նաև բոլոր կանայքը,  
տղաները և աղջիկները։ Եյս միահամուռ աղա-  
ղակը, որը անէծքների և հայհոյանքների մի կոյտ  
էր ներկայացնում, Բարուն վերայ լաւ չազգե-  
ցին։ Նա մի առ ժամանակ մնաց սառած և սպա-  
ռած զրութեան մէջ։ և չկարողացաւ մինչև ան-  
գամ իր սովորական խրատական խօսքերը ասել։  
Եւ մինչ զեռ բարան զլիսակոր մտածում էր թէ  
որպիսի զիրք պէտք է բոնէ փաշայի մօտ եւ  
ինչ սեն պէտք է տայ իր զլիսին, ահա այդ իսկ  
բոպէին զընդզընզալով զիւղը եկան թւով ութ  
մարդիկ, իրենց հետ ունենալով չորս ջորիապան-  
ներ և տասսը ջորիներ, զբանք փաշայի զինւոր-  
ներն էին, որոնք եկել էին Բարուն խօստացած  
ալիւրը տանելու։ Բարան երբ որ ջորիները  
տեսաւ ցաւերը կրկնապատկւեցին։ շէր իմա-  
նում թէ ինչ անէր։ Մարդկանցը ջորիների հետ  
դատարկ յետ դարձնել Տաթև—փաշայի մօտ—

այդ ոչ միայն ամօթ էր՝ այլ կատարեալ մահ էր  
համարում իրան համար։ Փաշայի ուղարկած  
մարդիկը իրենց ջորիներով ուղղակի եկան ժո-  
ղովրդի մէջ։ Այս անգամ Բաբան սկսեց խնդրել  
ժողովրդին, որ ինչ որ էլ լինի՝ թէ ցորէն, թէ  
գարի, թէ կորեկ, թէ հաճար գոնէ այս ամենից  
լինի մի կերպ անեն մէկ բան գոյացնեն որպէս-  
զի ինքը ամօթալի շնայ փաշայի մօա։ Բայց որ-  
տեղից հանգանակէին։ Բաբան տեսնելով, որ իւր  
խնդիրները ապարդիւն է անցնում, և ժողո-  
վուրդն քարի պէս լուռ կանգնել է առանց ու-  
շադրութիւն դարձնելու իր ասածներին՝ նա մը-  
տագրեց, որ ճիպոտների ու մտրակների ոյժով  
լրացնել տայ փաշայի ողահանջը։ Ուստի հրամա-  
յեց ջորէպաններին և զինւորներին, որ ծեծեն  
ժողովրդին ինչպէս ցանկանում են առանց խնա-  
յել մինչև անգամ կանանց, հարսերին և ֆոքը  
երեխաններին։ Զինւորները և ջորէպանները սկը-  
սեցին կատարել Բաբուն քստմնելի և դժնդակ  
հրամանը։ Եւ ժողովուրդը մի քանի բոպէ լը-  
ռելուց և զինւորների բոնի հարւածներն  
կըելուց յետոյ, — երբ համբերութիւններն հա-  
տաւ — իրանք էլ սկսեցին զինւորներին դիմա-  
դրել և միևնույն ժամանակ նրանց վերայ յար-  
ձակւել։ Եւ այդ յարձակումն էր որ առիթ տւաւ  
կուրին լայն չափեր ստանալ, և պայքարն բոր-  
ոսուելու անսահս սաստեագաւ, որ մարդիկ մին-

Հե անդամ մոռացան այն սարսափելի և դաժան պատիժները, որոնք ապագայում կարող էին ենթարկել դաժան փաշայի հրամանով։ Կրկնում ենք որ նրանք չմտածեցին ապագայում տեղի ունեցող գժբախտութիւնների մասին, այլ սկսեցին միահամուռ կերպով և անխնայաբար վիրաւորել ու մահացու յարւածներ տալ փաշայի զինւորներին ու ջորեպաններին, որին զլուխը կոտրեցին, որին կուռը, որին կրծքից վիրաւորեցին, որին քիթն ու պոռնզը ջարդեցին և վերջապէս զինւորների մէջ չմնաց մէկը, որ չվիրաւորւէր և արնաշաղախ չզասնար։ Վերջի վերջոյ զինւորները տեսնելով որ իրանց կողմը յաղթւած է, և որ աւելի դիմադրելով կարող են աւելի տուժել, ուստի մի առ ժամանակ կուելուց յետոյ՝ սկսեցին խոյս տալ և շտապով գիւղից հեռանալ։ Բարան այդ տեսնելով նրաց յետեից ընկաւ և հազիւ կարողացաւ նահատակ կոչւած սուրբի մօտ նրանց յետեից համնել ու կանգնեցնել։ Իսկ մինչ այդ զզիր Բաղդասարը ջորիները և զինւորների ձիերը բերաւ և տւաւ նրանց, որոնք հեծան և գնացին դէպի Տաթե։

Ջորեպանները յաջորդ օրւայ լուսադիմին հասան Տաթե։ Երբ որ առաւօտը բացւեցաւ և և փաշան քնից արթնացաւ, բոլորն իրենց վէրքերն փաթաթած գնացին և ներկայացան փաշային։ Փաշան տեսնելով զինւորներին և ջորե-

պահներին վիրաւորւած ու փաթաթւած բոլորովին պէս զարմացաւ և հետաքրքրութեամք հարցըց. —Այդ ի՞նչ եմ տեսում, ի՞նչ է պատահել ձեզ, չինի՞ թէ վտանգի էք հանդիպել: Այդ ի՞նչ արիւն է, որ երեսում է ձեր դէմքերի և հազուստների վերայ: Զորեպահները և զինւորները պատմեցին իրենց հետ պատահած դէպքի բոլոր եղեռութիւնը և որպիսութիւրը:

---

ՔԸԹՋԻՆ ՓԷՅՍԵՐ ՄՈՏ ԳՆԱԼ ԵՒ ՄԱԽՈՒՑՔ ԶԱՐԱԽՈ-  
ՈՒԼՔ.

Բարան գիւղումը կատարված դէպքից բաւական օգտւած էր համարում իրան: Մանաւանդ այլևս տարակուսութիւն և դժվարութիւն չէր զգում Մախուն և Բալլուին մահացու պատիժի ենթարկելու համար. որովհետեւ առիթը ինքնըստիքեան ստեղծւել էր: Ուստի տեղի ունեցած դէպքի էզցի առաւօտեան իր թիկնապահ Լալէյվազի հետ պատրաստւեց գնալ փաշայի մօտ: Երբ ճանապարհվեցան, Մինասենց տան մօտով անցնելու ժամանակ Մախին իր տան դռանը նստած էր: «Մախի, —ասաց Բարան, —պատահնը կարիք և հագիր, ես գնում եմ դերեզմանդ փորեմ»: Կէս օրին Բարան հասաւ Տաթիւ և գնաց փաշայի մօտ:

— Այդ ինչ կոխւ է, Բաբայ, որ կատարւել  
է ձեր գիւղումը քո ներկայութեամբ,— հարց-  
րեց փաշան, Բաբուն թիւրքավայել, կեղծ— շո-  
ղոքրթական բարեն ընդունելուց յետոյ:

— Փաշան ապրած մնայ, — ասաց Բաբան: —  
Այդ դէպքի եղելութեան մասին կարող էք հար-  
ցնել ձեր զինւորներիցն ու ջորէպաններիցը:  
իմ ասածիս՝ գուցէ չհաւատաք:

— Ես քեզ աւելի շատ կհաւատամ քան իմ  
զինւորներիս ու ջորէպաններիս, — ասաց փա-  
շան. — պատմեցէք դէպքի իսկական եղելու-  
թիւնը:

— Փաշան ապրած կենայ. — ասաց Բաբան: —  
Ձեր ուղարկած ահաւոր հրամանը ինձ հասած  
օրը՝ վերցրի հրամանը և հրամանաբեր զինւոր-  
ներն ու ջորէպաններն և զնացի զիւղամէջ:  
Գզը միջոցովը կանչել տւի բոլոր ժողովրդին և  
բերի ինձ մօտ, բոլորի առջև կարդացի ձեր հր-  
բամանը և ամենքին էլ հասկացրի գործի էու-  
թիւնը: Ժողովուրդը սիրով և ուրախութեամբ ըն-  
դունեց կատարել քո հրամանդ և պատրաստել  
պահանջդ: Բայց ինչ օգուտ, որ Մինասենց  
Մախին, այն յամառ ծերունին ընդիմացաւ քո  
հրամանիդ և յորդորեց բոլոր ժողովրդին, որ ոչ  
մի բան չտան: Ուստի ժողովուրդն էլ Մախուն  
խօսքը լսելով սկսեցին ինձ հայհոյել: Ես ինչպէս  
մէլիք ուզեցի որ նրանց զսպեմ, որ չը հայհոյեն.

ընդհակառակը տւելի կատաղեցին ու սկսեցին  
խփել ինձ։ Ես էլ նրանց վախեցնելու համար  
հրամայեցի քո զինւորներիդ և ջորեպաններիդ,  
որ ծեծեն ժողովրդին, ու լուծուակի մտքակի ոյժո  
էլ է կարողանայի մի կերպ պատրաստել տայի  
քո պահանջդ։ Բայց Մախին կրկին ընդիմացաւ  
և բացարձակ կերպով ժողովրդին հրամայեց թէ  
ջարդեցէք զինւորներին ու ջորեպաններին և  
զիւղիցը դուրս արէք։ Ժողովուրդը Մախուն  
խօսքը լսելուն պէս սկսեցին ջարդել զինւորնե-  
րիդ ու ջորեպաններիդ և հասցնել այդ դրու-  
թեան ինչպէս որ տեսնում էք ձեր աչքերով։  
Ահա կոիւը այսպէս եղաւ ինչպէս որ պատ-  
մեցի։ Փաշան ապրած կենայ, — աւելացրեց  
Բաբան, — եթէ ուզում ես, որ մեր զիւղումը քո  
բոլոր հրսմաններդ ապահով կերպով կատարված  
լինի, հորկաւոր է Մախուն կեանքին մի ան-  
դամից լերջ տալ. իսկ նրա կենդանի թողնելը,  
որպէս չարութեամբ յղացած մէկ մայր ես թող-  
նում, որ մեղ համար միշտ վնասակար հետե-  
ւանքներ է ծնելու։ Մի խօսքով կամ ինձ պա-  
հիր թնձորէսկ զիւղումը կամ Մախուն պա-  
հիր։

Բարուն բախտը փայլում էր և գործը յա-  
ջող էր գնում և իւր չար դիտաւորութեանը  
մասամբ հասել էր. որովհետեւ Մախուն քաջ և  
սիրելի որդին Բալլուն տանը չէր. նա Ղարագա-  
ղի Մամմադ խանի համար երկու բեռն ցորեն էր  
տարել, որի փոխարէն խանը երկու ընտիր  
ջորի էր բաշխել Բալլուին: Բացի գորանից՝  
իր բարեկամական ծանօթութիւնը նրանց հետ  
աւելի ամրացնելու համտր արդէն մէկ ա-  
միս էր խանը իւր մօտ հիւրափրում էր Բալ-  
լուին: Ուստի Բարան յիշելով Բալլուի բացակայ-  
լինելն փաստ դտաւ և յաջորդ օրւան առաւօտ-  
եան սկսեց փաստացի պատճառներով արմատա-  
կանապէս խորացնել երկուսի կործառը և  
չարախօսիլ ոչ միայն Մախուցը այլ աւելի  
շատ Բալլուից: Փաշան ապրած կենայ ի միջի  
այլոց աւելացրեց Բարան: Հիմայ ինքո դատիր  
ինձ և Մախուն և ըստայնըմ իմացիր մեր եր-  
կուսի ճշմարտութիւնը և սուտը: Միթէ ի զուր  
եմ ես գլխացաւանք տալիս ձեզ և առհասարակ  
գտնգատվում որ նրանց հարկաւոր է ոչնչոցնել,  
որ մեղ համար զիւղումը կասկածելի խռովա-  
րաբներ չմնան: Դուք ձեր ահեղ հրամանով Մա-  
խուցը 10 բեռը ցորեն էք ուզում նա մերժում  
է ձեր խօսքը, ցոյց տալով որ չունեմ և գոնէ  
նպատամացոյց չէ լինում մէկ բեռնով և յրդո-  
րում է բոլոր հասարակութեան, որ իրանք էլ

որի է մէկ բան չտան։ Բայց ահա այսօր նա  
Ղարադաղի Մամմաղ խանի մօտ է գտնվում,  
հիւրտափրլում է նրանից սիրով և համակրու-  
թեամբ։ և ինչու. որովհետեւ սրանից մի ամիս  
առաջ Մսիսին Ղարադաղի խանին համար երկու  
բեռլ ցորեն է ուղարկել Բալլուի միջոցով, որի  
երախտիք խանը վարձատրել է երկու ընտիր  
ջորիներ բաշխելով։ Արդեօք արժանի չէ նրա  
ջորիներ ՚ի յարքունիս զրաւել և իրանց էլ ոչն-  
չացընել առալ։

— իմայ Բալլուն իր տանն է, — ասաց փա-  
շան, — թէ Ղարադաղումն է։

— Եյս քանի օրերիս նորից խանը հիւր է  
հրաւիրկ և տարել իր մօտ, — ասաց Բաբան։ —  
Նա գիլումը կատարված դէպքերից տեղեկու-  
թիւն յւնի, գեռ Ղարադաղումն է։ Եթէ նա  
տանը ինէր գործը աւելի սոսկալի հետևանք  
կունեար, փաշան ապրած կենայ, փառք Աս-  
տուծու որ նա տանը չէ եղել։ Նրա քաջութիւ-  
նը եւ անկարող եմ լեզով բացատրել ձեզ։

— Շատ քաջ է։ — հարցը կաշան։ — Բանի  
ամա կարող է լինել։

— Բսան և եօթ ամաց հազիւ թէ լինի,  
փաշն ասլրած կենայ։ — ասաց Բաբան։

— Ափսոս չէ այդպիսի մի երիտասարդին  
կեանից։ զրկել, — ասաց փաշան։ Նրան—  
սպանելը աններելի և մեծ մեղք կլինի

ձեզ համար՝ Բաբայ և, այդ պատճառով մեղաւոր  
եմ համարում ձեզ:

— Թէկուզ մեղաւոր համարեցեք, — ասաց  
Բաբան, — թէկուզ արդար, յամենայնդպս ամեն  
ինչ կախւած է ձեր լուրջ քննադստութիւն-  
նից:

Կեղծաւոր փաշան տեսնելով, որ իր խօս-  
քը վատ տպաւորութիւն գործեց Բաբան վրայ,  
նորից խօսքը փոխելով ասաց, շատ շորհակալ  
եմ Բաբայ: Ես արդէն նոր հասկացայ Չէ գուք  
որքան անկեղծ և ճշմարիտ սիրտ ունք դէպի  
ինձ: Հիմայ ինչ է քո սրտի ցանկութիւը և քո  
վերջին խօսքը ինձանից:

— Բաբան օգտւելով փաշայի վերջին կեղծ  
շողոքրթական խօքերից ասաց, փաշան սպրած  
կենայ, իմ խնդիրը ձեզանից այն է, ո մինչ  
դեռ Բալլուն տանը չէ և շատ հեռու է գնավում,  
տուր ինձ մի քանի զինւորներ գնամ բռնեմ  
Մախուն և շղթայակապ ուղարկեմ այսադ ձեզ  
մօտ, էլ մի այսպիսի յարմաք միջոց չ լինիլ  
որ պատահել է մեզ: Իսկ Բալլուխն ձեռքալե-  
լու համար գարձեալ ծրագրել եմ, որին կարւ եմ  
իր յօժար կամքով բերել տամ այստեղ, որն  
չէ էլ կարծելու թէ իր կեանքի դէմ ողիսի  
թակարդ եմ լարել:

— Լաւ կլինի, Բաբայ, — ասաց փաշ: —  
Հաւանալի խորհուրդ է:

Փաշայի հրամանով վեց զինւորներ ձիաւոր-  
վելով Բաբուն ղեկավարութեամբ ճանապարհւե-  
ցան և երեկոյեան մութը բոլորովին պատաժ-  
մտան զիւղը: Բաբուն տանը զինւորները հաց  
ուտելուց յետոյ գնացին Մինասենց տունը, որը  
պատկից հարեան էր Թութակենց<sup>1)</sup> և բռնեցին  
ծերունի Մախուն: Ոխերով յղացած Բաբան ոչ  
մի սոսկալի միջոց չխնայեց Մախուն տանջելու  
համար: Նրա թեկերը կապել տւաւ յետեր և յաձ-  
նեց բարբարոս զինւորներին: Արդեօք էլ տառա-  
պանքներ մնաց, որ անգութ զինւորները չտա-  
յին խեղճ ծերունուն: Ալեգարդ Մախուն օրերը  
անցել էին, ոտերումը ոյժ չէր մնացեր, որ ա-  
րագ ընթանար անօրէնների ձիերի առջե, ուս-  
տի ուժասպառ ծերունուն դանդաղ քայլելուն  
համար, նրա ոտների գարշապանների կաշին բո-  
լորովին պլոկւեցան ձիերի սմբակների տակ: Նրա  
գլխին, շինքին և խորշումած երեսին վերայ  
երեսում էին արիւնաշաղախ զիծեր, որոնք գո-  
յացել էին մտրակների հարւածներից: Նրա ա-  
մուր կապած կոները այնքան ծեծել էին, որ  
էլ մատները հուպ չէին գալիս: Ի վերջոյ Մա-  
խին անտանելի տանջանքներ կրելով երբ որ  
հասաւ Հալիձոր<sup>2)</sup> զիւղը, Խնդրեց զինւորներին,

1) Այժմ էլ պատկից հարեան են:

2) Զանոնեառուսի Հալիձոր գիւղն է և ոչ Ղափանին:

որ թողնեն այդ գիւղումը քոյր ունի տեսնէ:  
Զինւորները թոյլ չտւին տեսնելու, երբ որ քրոջը  
յայտնեցին իւր ալեզարդ եղբօրը ինչ դրութեան  
մէջ զտնվելու մտսին. նա մազերը փետելով. ե-  
րեսը քրքրելվ և սուզ ու շիւան անելով եկաւ  
և փաթաթւեց իւր եղբօր ալինքովը ու սկսեց  
դառն արտաստիլ, կրակ թափել և վայնասուն  
բարձրացնել: Քանի ըոալէ գրկախառնւած երկու  
ծերացած քոյր և եղբայր հեծեծանքով խեղգ-  
ւած միայն արտասում էին և չէին կարողա-  
նում միմիանց մի որ և է խօսք ասել: Զինւոր-  
ները ստիպեցին երկուսին, որ բաց թողնեն մի-  
միանց և բաժանւեն. բայց քոյրը չէր ուզում,  
բաց չէր թողնում եղբօրը, անդադար լաց էր  
լինում և կարծես թէ յոյսը կտրւել էր երկրորդ  
անգամ եղբօր հետ տեսնելուց, գիտէր որ վեր-  
ջին տեսութիւնն է: Ուստի նախազգալով եղբօր  
ողբալի ազագան, երեսը դրել էր եղբօր երե-  
սին և իւր առատ արտասունքը թափում էր նը-  
րա ճերմակ միրուքին վերայ:

Բաւական է բաժանւեցէք միմիանցից, ասա-  
ցին զինւորները, մտրակելով երկուսին, Ասու-  
րին<sup>1)</sup> և Մախուն, բայց դարձեալ չ'բաժանւեցին  
և գրկախառնւած դեռ լաց էին լինում:

1). Մախուն քրոջ անունն էր, որը Հալիձորեցի Շիրինի  
կինն էր.

Նահլաթ<sup>1)</sup> սատանային դայ. այս ի՞նչ խաթարալայ էր, որ ընկանք մէջը. ասաց զինւորների գլխաւորը: Տօ՛ անպիտաններ ձեզ չեմ ասում, ինչու չէք թողնում միմիանց: Կրկնեցին մտրակների հարւածները մի քանի անգամ յաջորդաբար: Բաց թողիր, քաւթառ<sup>2)</sup> աղամարջան<sup>3)</sup>: Կրկնեց դարձեալ զինւորների գլխաւորը: Հեռացիր և սառած արիւնդ ՚ի զուր մեղ մի քըսիր: Հարւածները այս անգամ միայն Ասուրին վերայ տեղացին:

Ասուրը թողեց եղբօրը և արտասւելով քաշւեց մի կողմ:

Երբ որ զինւորները ճանապարհվում էին Հալիձորից դէպի Տաթե, այդ միջոցին Ասուրը մօտանալով գրկեց եղբօրը ասելով «Մախի, ով իմ հարազատ եղբայր, իմ ամենամերձ սիրելիս գուցէ սա լինի մեր վերջին տեսութիւնը. ինչպէս քոյր, ինչ որ մանկութեան ժամանակ քեզ եմ տւել հալալ լինի քեզ: Այս խօսքերը Ասուրը արտասւախառն հեծկլտանքով ասելով թողեց եղբօրը և կանգնեց մի քանի քայլ հեռու:

1). Խիստ անյաջող գէպքի կողմից յսւղված բարկութեան նզովք է, որով նիւթում են չար մարդուն և չար ստանային:

2). Դա մեռելի գիակ սւասդ բորենին է. որը իր արտաքին տեսքով մի շատ տղեղ գաղան է:

3). Կապիկների մեծ աեսակիցն է, ծերութեան համակլիս այդ անունն են ստանում:

Ասուը, իմ հարազատ և ամենասիրելի քոյր,  
ասաց Մախին։ Մանկութեան օրերում ինչ որ  
քեզ վատ խօսք եմ ասել և դիպել է քեզ, նե-  
րիր ինձ։ Մանաւանդ ինչ որ գու ինձ ես տւել  
և ես էլ քեզ եմ տւել, թող միմիանց հալալ լինի։  
Դէ մնաք բարեաւ, քո ասածի պէս գուցէ սա  
հենց մեր վերջին տեսութիւնն է»։ Մախին այս  
ասելուց յետոյ զինւորների առաջն ընկաւ ու-  
սկսեց արտասւելով առաջ գնալ, հազիւ թէ քաշ  
տալով իր թոյլ և ուժասպառ ոտները։ Ասուը  
ողբալով և խաչած կոներով շարունակ նայում  
էր եղբօրը ետեից մինչև որ նա մտաւ նոյն  
գիւղի մօտ գտնւող անտառը և անյայտացաւ  
նրա աչքի տեսութիւնից։ Մի որոշ տարածու-  
թիւն անցնելուց յետոյ՝ երբ որ հասան Մախ-  
կալ-Թութանի կոչւած կիրճը, այդտեղ Մախին  
բռլորովին գաղարեց և ուժասպառ ընկաւ։ Զին-  
ւորները սկսեցին ծեծել նրան, որ տեղիցը  
կանգնէ և շարունակէ ճանապարհը. բայց ան-  
հնարին եղաւ նրա տեղից կանգնելու և գնալը։

Գիտէք ինչ կայ, ասաց զինւորներից մէկը։  
Սրան կենդանի մեզ են յանձնելի որ մենք էլ  
սաղ տանենք և յանձնենք փաշային։ Ուստի  
եթէ սա մեռնի և մնայ ճանապարհին, փաշան  
մեզ բոլորիս էլ կպատժէ այն մահովը, որով  
պատժելու է այս մարդին։ Ուրեմն աւելի լաւ է  
հերթով դնենք մեր գաւականներին և տանենք

հասցնենք փաշային։ Շատ լաւ ես ասում, ասացին միւս զինւորները, այդպէս անենք։ Եւ այսպէս հերթով Մախուն դնելով իրենց ձիերի գաւակներին, տարան Տաթե և յանձնեցին փաշային։

Հա, դուք Էք Մախին, ասաց փաշան, որ սովորեցնում էք ժողովրդին չկատարել իմ հրամաններս։ Շատ լաւ, թող լոյսը բացւի ես կիմանամ թէ քեզ հետ ինչպէս և ինչ ձեռվ կը վարւեմ. Եւ հրամայեց զինւորներին, որ տանեն և բանտարկեն ու խիստ կերպով հսկեն, որ չը փախչի։ Զինւորները Մախուն տարան վանքին փուլ եկած ձիթահանքը և այնտեղ գութանի ճմբարակով (շղթայ) կապուտեցին կիսամեռ ծերունու ձեռքը ու ոտքը և ճմբարկի միւս ծայրը օղակեցին շինքին, որով բոլորովին կեռացրին և կուչ ածեցին միանգամայն ու թողին որպէս կծիկ արեգակի կիզիչ ճառագայթների տակ։ Եւ այս ամենը կատարվում էր անգութ Բարուն գաղտնի հրահանգով։

Միւս առաւտեան փաշան զարթնելուն պէս հրամայեց պահապան զինւորներին, որ Մախուն բերեն իւր մօտ։ Զինւորները անմիջապէս զնացին և Մախուն շղթայակապ բերին փաշայի առաջ, որը ճմբարակի ծանրութեանը չի դիմանալով կծկւեցաւ և կողքի վերայ վայր ընկաւ։

Մախին դժւք էք, կրկնեց փաշան անցեալ երեկոյեան ասած խօսքը։ Դժւք էք, որ իմ կարգած մէլիքիս չէք ուզում ճանաչել որպէս մէլիքի, և սկսում էք հայհոյանքներ տալ նրա հասցէին։ — «Թող կտոր-կտոր դառնայ այն լէզուն, որից մահ է ծնւռում»։ Դուք ի՞նչպէս յանդգնեցիք հրամայել ժողովրդին, որ ջարդ ու փշուր անեն իմ զինւորներիս ու ջորեպաններիս։

Մախին տեսնելով, որ —իր անմեղութիւնը ցոյց տալու համար —որքան խօսելու լինի իզուր է անցնելու և աւելի էլ նեղ տեղ է ընկնելու, ինչպէս որ արդէն ընկել է, ուստի նա իր սրտի ատելութեանը —որ ունէր դէպի այդ վայրենի և անօրէն ազգը —մի քիչ յակուրտ տալու համար աւելի լաւ համարեց չլոել և ողոքմելի մարդու նման չդողդողալ անխիղճ փաշայի առջև։ Այդպատճառով երբ փաշան իր ծաղրկան խօսքերը վերջացրեց թէ չէ։ Մախինսկսեց հայհոյել նրա ամբողջ հաւատը, օրէնքը և Մահամմէդի աղանդը։

Փաշան չկարողանալով համբերել Մախուն թելադրած կեղառոտ հայհոյանքներին, ալեկոծւեց կատաղութեամբ և հրամայեց դահիճին, որ կտրէ Մախուն գլուխը։ Մինչև դահիճը իր եղերնական գէրը կատարիլը, Բաբան յիշեցրեց փաշային, որ միտ բերէ երեկոյեան խօսքը ինչ որ ասել է Բալլուի մասին։

Ի՞նչ խօսք է Բաբայ, ես զայրացած եմ։

Լաւ չեր լինի մի այսպիսի լիբը մարդուն գիւղումը գլխատել տւած լինէիր, քան թէ բերել տայիր այստեղ և այդպէս հայհոյանքներ տարինձ:

Փաշան ապրած կենայ, վոռքը ինչ համբերիր. ասաց Բաբան: Աւելի վատթարագոյնը ետեռնի է: Դուք թէն մոռացել էք բայց եռդարձեալ կյիշեցեմ ձեզ: Առայժմ թող արիւնդ հանդարդւի, դեռ ցնցւած է: Նախնեաց առածը տում է, «Չունը կհաջէ, բայց քարվանը կանցնէ»: Եւ տես որքան յամառ ծերունի է, որ ներողութիւն խնդրելու փոխարէն դեռ հայհոյանքներ է տալիս ձեր պայածառափայլ հասցէին և ձեր ուղղափառ հաւատին: Եւ գուցէ դուք ներողամիտ էիք լինելու և ներելու էիք դրա յանցանքը: Այժմ յոյս ունիմ կճանաչէք թէ մեզանից ով է մեղաւոր:

Մախին դեռ կողքին վերայ ընկած էր, դեռ զագանային գութն էր տիրում նրա շուրջը: Եւ արդարդատ Աստուածը կարծէս թէ խոր քնի մէջ թափանցելով ամեն մի արդարացի գործթողել էր գաղանաբարոյ մարդկանց դրամադըրութեան տակ, զոհել էր նրանց քմահաջոյքներին, ինչպէս կուզեն այնպէս էլ կվարւեն նըրանց հետ: Այդ ինչերս ես անում տեսնողդ գաղանեաց:

Փաշայի բարկութիւնը անցաւ, սիրոը մեղմացաւ։ Տարէք այս լպիրշ մարդուն և այս դրութեան մէջ էլ թողեցէք մնայ իր նախկին տեղը։

Զինւորները Մախուն տարան գարձեալ ձիթահանքը, որպէս բանդատուն և թողեցին այնտեղ ու իրանք առանց երկմտելու հեռացան մօտիցը։ Մեռածին վերայ ի՞նչ հսկողութիւն և ի՞նչ կասկած։

Յիշեցրէք ինձ Բաբայ, ասաց փաշան, ինչ որ ձեր կարծիքով ես մոռացել եմ։

Ես այն եմ յիշեցնում ձեզ, փաշան ապրած կենայ, որ Մախին մէկ մեռած մարմին է, դա արդէն մեր ձեռքումն է։ Սակայն դրան մէկ տղայ ունի, որի համար անցեալ օրը պատմեցի ձեզ, և նա այժմ Ղարադաղի խանին մօտ է լինում որպէս հիւր։ Եթէ նա գայ գիւղը և իր հօր մահւան գոյժը լսէ ու հասկանայ որ իմ միջոցովս է կատարւել սոյն սպանութեան գործը, հաւատացած եղիր, որ իմ ամբողջ տոհմիս ժառանգներին նա միանգամից սրի կքաշի և բուլորին էլ կտոր-կտոր կանէ։ Նա մի այնպիսի ինքնավատահ հերոս է, որ մէկ գիշեր առանց երկիւղ կը ելու կդայ, կմտնէ վրանդ և քեզ կը մորթէ։ Դուք անծանօթ էք չէք ճանաչում թէ նա ինչ պտուղ է և ինչ սրտի տէր է։ իսկ ես նրա ճանահում եմ իմ հինգ մատներիս նման։

որովհետեւ նա մեր ոչ թէ զիւղացին է այլ  
պատկից հարհանն է: Թեթևամիտ և զիւրաթէք  
փաշան Բաբուն համար մոմից շինած մի պատ-  
րոյդ էր գարձել, որ կողմի վերայ ուզում էր  
այն կողմի վերայ էլ ծռացնում էր նրան: Ծերունի-  
Մախին կիսամեռ եղաւ այն ժամանակ, երբ  
դահիճը դանակը յեսանին քսելով եկաւ որ գըլ-  
խատէ իրան: Բաբան հասկանում էր, որ Մա-  
խին երկիւղից կիսամեռ է եղել, աշխատում էր  
որքան կարելի է հօրը կենդանութեան օրով և  
աչքին առաջին աչքերը հանել առայ Բալլուին,  
որով իր թշնամութեան ծարաւը Մախուց առած-  
տեսնէր: Ուստի այնպէս էլ եղաւ. որովհետեւ  
Բաբան փաշային խմաց էր արել որ Մախին իւր-  
անունով և ազգանունով մէկ կնիք ունի եթէ  
մօտը զտնւէ Բալլուին շատ հեշտութեամբ Տա-  
թէ կբերեն և ինչպէս էլ կուզեն այնպէս էլ  
կվարւեն նրա հետ: Ուստի փաշան հրամայեց  
զինւորներին, որ Մախուն գրպաններն պտրաեն  
տեսնեն կնիքը մօտն է առնեն և բերեն: Բա-  
բան թոյլ չտւաւ զինւորներին որ գնան կնիքը  
բերեն, այլ ինչդրեց փաշային և ինքը գնաց:  
Քանի ըոսկէից յետոյ եկաւ Բաբան իր հետը  
բերելով Մախուն կնիքը: Այն ըոսկէին երբ Բա-  
բան ուզում էր կնիքը ցոյց տար փաշային,  
հէնց նոյն վայրկեանին էլ Թութակենց տնիցը<sup>1)</sup>

1). Բաբան պատւիրել էր իրենց տնեցիներին որ Բալլուն  
Հարազաղից վերապառնալուն պէս իրեն յայտնեն:

մարդ եկաւ և յայտնեց որ Բալլուն Ղարադաղից  
արդէն եկել է գիւղը։ Բաքուն ուրախութեանը  
չափ ու սահման չկար, նա արդէն իւր ամբողջ  
նպատակներին հասած էր համարում իրան։  
Ուստի վանական հայերից ձեռք բերաւ փոքր  
ինչ թղթի կտոր ու սկսեց Մախուն լեզւիցը  
գրել Բալլուին վերայ հետևեալ կեղծ նամակը։  
որի բովանդակութիւնը ըստ աւանդական պատ-  
մածի, Դաւիթ քահանայ Տէր-Յարութիւնեան-  
ցին, այսպէս է եղել չնայելով ոճերի փոփոխու-  
թեանը այլ յենւելով մտքի ուղղութեանը։

### «ՍԻՐԵԼԻ ՈՐԴԵԱԿ ԻՄ ԲԱԼԼՈՒ»

Նախ ընդունիր գորովագութ հօրդ անկեղծ սրտի  
ողջոյնը։ Որդի, գիտեմ որ տարակլուսութեան մէջ ըն-  
կած կլինես. որովհետեւ ինձ Տաթե բերելու միջոցին  
դու տանը չէիր, որ իմանայիր թէ ինձ ինչու համար  
բռնեցին կամ թէ իմ մեղքս ինչ էր, որով ինձ մատ-  
նեցին փաշային։ Թեզ քաջ յայտնի է, որ ամբողջ ժո-  
ղովրդի մէջ մէկ թշնամի չունենք բացի Թութակենց  
Բարուցը։ Եւ ինչն է նրա թշնամութեան պատճառը.  
այն է որ ժողովուրդը մեզ սիրում է և մեզ ընդունում  
է, եւ այդ մասին Բարան ինձ մատնել էր փաշային  
որպէս թէ ես ժողովրդին ծրից<sup>1)</sup> հանող մէկ խոռվա-  
րար մարդ եմ, և գիւղումը ես ժողովրդին յորդորում  
եմ, որ Բարային վերայ, փաշայից ուղարկած հրաման-

1). Ծեր, Զանգեզուրի ժողովուրդը գութանի կամ տրօրի  
ակօսին է ասում. բայց խօսքի դործածութեան մէջ փոխարինում  
է ուղղութեան։

Ներին չլսեն և չկատարեն նրա ոչ մի պահանջը։ Ահա-  
այսպիսի չար մտքերով յղացած ծնած է եղել ինձ վե-  
րայ թէն. սակայն փառք հազար անգամ Երկնային  
Դատաւորին,—«Հախը նահախին չտւաւ—(այսինքն ան-  
մեղը մեղաւորի փոխարէն չզոհւեց) և մահացու մատ-  
նութիւնից ինքը ազատեց։ Եւ դու բոլորովին անհոգ  
մնայ, որդեակ, որ արդէն ես ազատւած եմ, որովհետեւ  
փաշան քննութեան ենթարկեց ինձ և Բարուն,  
Բարան մեղաւորւեց իրան սուտ ամբաստանութեան  
համար, որով կարելի է մահաւան պատժի ենթարկելու-  
Ռւստի ես ուխտազիր եմ եղել Տաթեսի վանքին, որ ե-  
թէ ազատւելու լինեմ Բարայի վտանգաւոր մատնու-  
թիւնիցը, մի մատաղ պէտք է անեմ նրա տակին, որ  
վանքը ինձ ազատել է, և պէտք է մատաղ անեմ։ Այս  
թուղթս քեզ համնելուն պէս իմ պատւերիս համաձայն  
կպատրաստես մէկ բեռը թաժայ հաց իրան իւղեղէն  
թխւացքով և այլ պաշարներով։ Կ'վերցնես քսան և մէկ  
փահնարադ։) փող այստեղ աջահամբոյրի, խաչահամ-  
բոյրի և պատարագ մատուցանելու համար։ Կառնես  
մի հատ զօշ։ Դու կհեծնես քո ձին<sup>2</sup>), թխւացքը կրեռ-  
նես մէկ ջորուն իսկ միւս ջորին էլ ծառան կհեծնէ և  
չմոռանաք, որ կուպրուններից երկու հատ վերցնէք  
ձեզ հետ և բերէք Ասուը բիբուն<sup>3</sup>) տնիցը երկու կուժ  
գինի բերէք։ Եւ այդ պատրաստութիւնով շուտով կը-  
դաք Տաթեւ։ Մնամ քեզ անհամբեր սպասող քո հայր՝  
«Մ. Մ».

Նամակը գրելուց և աւարտելուց յետոյ  
Բարան հանեց Մախուն կնիքը թաթախեց թա-

1). Պարսից փող էր և արժէր ոռւսի այժմեան 15 կռպէկը։

2). Որպէս-զի ձին և ջորիններ արքունիք պըավէին։

3). Հօրաքոյր։

Նաքովը և կնքեց նամակի տակին, որտեղ հարկաւոր էր անել Մախուն ստորագրութիւնը: Կնիքի վերան փորագրած էր երկու «Մ»-էն տառ, որ նշանակում էր Մախի Մինասեանց:

Բաբան նամակը տարաւ փաշային մօտ, կարգաց և բովանդակութեան միտքը թարգմանեց թիւրքերէն ու նրան հասկացրուց: Միայն խնդրեց փաշային, որ նա իրան ձեռքով յանձնէ մէկ հայի և իր հրամանով ուղարկէ պատկանելոյն վերայ: Փաշան կանչեց Ազիւլեցի Թամրազ անունով մէկ հայի, որ Բաբուն նման դաւաճան էր ճանաչվում հայերին մասին: Նամակը յանձնեց և խիստ պատւիրեց նրան, որ առանց որ և է մէկին ասելու և բերանից թռուցումանելու կտանի Խնձորէսկ և կտայ Մինասեանց Բալլուին: Իսկ եթէ Բալլուն հարցնելու լինի թէ այս նամակը ովէ ուղարկել, կասես Մախին է ուղարկել»: Բաբան չբաւականացաւ փաշային Թամրազին տւած խիստ պատւերներովը, նա հեռացաւ և ճանապարհին վերայ մի տեղ առանձին սպասեց մինչև որ Թամրազը իրան հասաւ: Գուցէ թէ Բալլուն հարցնելու լինի հօրը այստեղի գըրութեան մասին,—պատւիրեց Բաբան, — դու կասես, որ Բաբան մեղաւոր գտնւեցաւ և գուցէ փաշան նրան գլխատել տայ: Իսկ Մախին աղատւած է, որովհետեւ փաշայի մօտ նա արդարացաւ Բաբուն գաղտնի դաւաճանութիւնիցը:

Այսպէս խօսիր, որ համապատասխան լինի նամակի մէջ գրածներին»:

Արդէն երկու օր էր, որ Բալլուն Ղարադաղ զից վերադառձել էր տուն։ Եկած օրը նա խիստ հարց ու փորձ էր արել թէ բարեկամներից, թէ ժողովրդից և թէ իրենց տանեցիներից, սակայն ոչ մէկը հաստատապէս բան չէին ասել նրան, չնայած որ ոչ ոք Մախուն հետ կատարւած վերջին դաժան գէպքի մասին ոչինչ չէր իմանում։

— Ասացէք ինձ, ապօրը<sup>1)</sup> ինչու համար են տարել փաշայի մօտ, ամենախիստ ստիպողութեամբ ասաց Բալլուն։ Ես ուզում եմ ճանապարհուել գէպի Տաթի։

— Մենք էլ չգիտենք ինչու համար են տարել։ — պատասխանում էին տանեցիները։

— Միթէ դուք չգիտէք թէ ինչու համար են տարել և ով է տանել տւել։

Տանեցիները Բալլուի բարկացկոտ բնաւորութիւնը հասկանալով գրականապէս ոչինչ չէին ասում. մի գուցէ կոիւ բարձրանայ Թութակենց ժառանգների գէմ և տեղի տայ արիւնահեղութեան։ Ահա այս էր տանեցիների կարծիքը, չնայելով որ նոյնպէս տանեցիներից ոչ ոք կարծիք

1). Աղեք. — Հայր է նշանակում։ Այս խօսքը գործ ենածում գլխուորապէս Զանգեզուրի, Ղափանի և Արցախու գաւառների ժողովութիւնները։ Հաւանական է ապել խօսքը արարացոց «աբու» խօսքի կամ բաժանւած մասը լինի կամ աղաղւածը, որովհետեւ արարացիք հօրը աբու են ասում։

չէր անում, որ Բաբան այն աստիճանի կատաղութեան կհասնէ, որ մահւան պատժի կենթարկէ ծերունի Մախուն, և Բալլուին մինչև անգամ։ Մի խօսքով, թէև Մինասեանցների մէջ խելօքը, աշալուրջը և հեռատեսը Բալլուն էր և լաւ հասկանում էր, որ Թութակենց Բաբան իրենց ամենասխերիմ թշնամին է և բերանացի կոիւներում իրանց դէմ միշտ յայտնել է իրան ծայրահեղ թշնամութեան վերջին եղերնական չար միտքը, ասելով «մէկ օր ես կուլ եմ տալու ձեզ նման երկու ամենի վիշտալըերին և ուրանամ», սակայն նոյնիսկ Բալլուն չէր սպասում, որ կարող էր կատարւէր Բարուն իրենց կեանքի դէմ առհասարակ կոիւներում բորբոքւած սրտից արտադրւած այն թոյլ սպառնալիքը։ որը ուշադրութեան չառնւելով դառնար այն քստմնելի մահւան չարագործութիւնը, որ կատարւեցաւ իր հօր Մախուն և իրան վերայ։ Եթէ Բալլուն Տաթևում իր հօր վերայ կատարված դէպքից տեղեկութիւն ունենար նա անպայման Խնձորէսկում կջնջէր Թութակենց ամբողջ ազգատոհմին։ Յամենայն դէպս դեռ ինքն իրան մօտալուտ մահւան համար ոչինչ չգիտէր։ Եւ մինչ դեռ տարակուսութիւնը ստիպում էր Բալլուին, որ Երբորդ օրվան առաւօտեան ճանապարհւէր դէպքի Տաթև, նոյն երեկոյեան Բալլուի մահւան հրաւէրը Ագուլեցի Թամրազը ծո-

ցումը գրած եկաւ Մինասենց տունը։ Դաւաճան  
Թամրազը ձիիցը իջնելուն պէս իսկոյն Մինա-  
սենց ծառան հասաւ և բռնեց նրա ձիու սանձը  
ու տարաւ սրահին տակին կապեց և սան ձը բե-  
րանիցը հանելով մի խորոմ կանաչ խոտ դրեց  
ձիու առջեւ։ Զին սկսեց խոտը ուտել։ Իսկ Բալ-  
լուն դուրս գալով տնիցը մօտեցաւ և վայելուչ  
կերպով հիւրին հրաւիրեց տարաւ տունը և  
պատշաճիրութեամբ նրան նստացրուց սփոած  
գորդի վերայ։

Բարով էք եղել, ասաց Բալլուն։ Էս տունը  
քեզ փեշքեց։

Շնորհակալ եմ. ասաց Թամրազը։ Աստւած  
վայելչութիւն տայ այս տանը ապրողներին։  
Բալլուն պատվիրեց տանեցոց, որ հաց բերեն,  
հասկանում էր, որ ճանապարհ եկած մարդը  
քաղցած կլինի։

Իսկոյն սուփրան բերին գցեցին ու սկսե-  
ցին հաց ուտել։ Քանի ըստէից յետոյ երբ սու-  
փրան վերցրին, Թամրազը նամակը ծոցից հա-  
նեց և տւաւ Բալլուն։ Բալլուն նախ կարդաց  
նամակի երեսը, որ գրած էր այսպէս, — «Ի  
«զիւղն Խնձորէսկ, ժամանեսցէ զայսնամակս ի  
«Ճեռն ծնողասէր որդւոյ իմոյ Եալլու Մինաս-  
«եանցին, առաքեալ է վասն կենաց քոյ աղօթա-  
«րար հօրէ Մախի Մինասեանցէ ուրախ ժամու։  
Նամակի երեսը կնքւած էր նոյնպէս Մախուն

կնիքով։ Նամակի երեսը կարդալուց յետոյ Բալլուն բացաւ նամակը և շարունակեց կարդալ Բարուն կեղծ գրածները։ Անսահման ուրախութեան մէջ ընկաւ Բալլուն, որ հայրը ազատւել է մահւան պատահարութիւնից։ Ուստի ուրախութիւնով լցւած տմեն ինչ պատրաստել տւաւ այն դիշերը և միւս առաւօտեան ծառայի հետ ճանապարհւեց դէպի Տաթե։ դէպի իրան կեանքի համար փորած գերեզմանը։ Եւ երբ հասան Հալիձոր գիւղը, գնացին Ասուրին տունը, որը Շիրինենց Աւետիսի կինն էր։ Ասուր բիբին տեսսելով Բալլութին, նստած տեղից կանգնեց և յուղւած սրտով ժաթաթւեց Բալլուի ախքովը ու շատ կարօտապին կերպով սկսեց համբուրել նրա ճակատը և աչքերը։

Բալլու խէր լինի, ասաց Ասուրը փոքր ինչ տիսուր եղանակով, այդպէս ուր։

Աչքդ լոյս. Ասուր բիբի, եղբայրդ ազատւել է մահից, ասաց Բալլուն եւ նամակը ծոցից հանելով սկսեց կարդալ Ասուրին մօտ։

Այ որդի, ասաց Ասուրը. ես այդ նամակի գրածներովը վստահ չեմ. գա կեղծ է երեւում. արի գու ինձ լսիր մի գնալ Տաթեւ, յետ դարձիր եւ հնոյ հիւր։ Ասհսւսնդ ոյս գէճը ես վատ երազ եմ տեսել։

Այ Ասուր բիբի, եթէ մենք սկսենք հետեւ ամեն մի դատարկ երազների տեսնելուն

կամ հաւատանք երազների կատարվելուն, քարը  
քարի վրայ երբէք չի կանգնիլ. դրանք բոլորը  
ոչինչ բաներ են, ասաց Բալլուն. Դու ինձ այն  
ասիր, լաւ զինի ունես երկու կուժ ինձ տաս  
վանքը տանելու համար, որովհետեւ եղբայրդ գը-  
րել է թէ մատաղ եմ անելու, կդաս Ասուրի  
տանիցը երկու կուժ լաւ զինի կըերես:

Լաւ զինի շատ ունեմ, ասաց Ասուրը. մի-  
այն սիրաս անհանգիստ է ձեր կողմանէ, որ զը-  
նում էք Տաթեւ Սրանից չորս օր առաջ էլ իմ  
եղբօրս տարան և ես նրան այնպիսի դրու-  
թեան մէջ տեսայ, որ չեմ կարող լեզով պատ-  
մել. Լաւ էր իմ աչքերս քոռացած լինէր քան-  
թէ այն դրութեան մէջ ես նրան տեսած լինէի:  
Եւ ես չեմ հաւատում, որ նա կենդանի լինի.  
անպայման մեռած կլինի:

Այ Ասուր բիբի, ոչինչ էլ չէ լինելու միա-  
միտ մնայ. միթէ վանքը չի կարող նրանց պա-  
տիժ տայ, որոնք ուզում են իրեն. ուզգափառ  
ուխտաւորներին պատժել, ասաց Բալլուն. Ես  
միանգամայն վստահ եմ, որ Տաթեի սուրբ  
օջախը մեզ կօդնէ:

Բալլու, զու երեխայ չես, արդէն քսան և  
եօթ ամաց ես, միթէ քո միտդ չէ գալիս, որ  
Փաթալի խանը եկաւ վանքը թալանեց և տարաւ  
բայց վանքը նրան ոչինչ չի արաւ. Նոյնիսկ հի-  
մայ տեսնում ես, որ Հաջալի փաշան նստել է

մէջը և ամեն տեսակ ապականութիւններ է կատարում, իսկ վանքը նրան ոչինչ չի ցոյց տալիս: Երկար խօսելու ժամանակ չէ, Ասուր բիբի, ասաց Բալլուն, կարասը բաց արայ գինին շափենք տանենք:

Ասուրը Բալլուին տարաւ գինետունը, բացեց կարասի բերանը և որքան հարկաւոր էր չափեցին կուպրունների մէջ և դուրս եկան: Յետոյ Ասուրը հաց պատրաստեց դրեց առաջները, գնաց գինի բերեց նոյնպէս դրեց մօտները կերան խմեցըն և վերկացան ճանապարհեցին դէպի Տաթեփի վանքը: Այդ միջոցին Ասուրը մօտեցաւ դրկեց Բալլուին, կրկին անդամ համբուրեց նրա ճակատիցը, աչքերիցը, և թշերիցը ու սկսեց լաց լինել և առատ արտասուքներ թափել:

Մի լացիր Ասուր բիբի, ասաց Բալլուն, էգուց չէ միւս օրը ողջ և առողջ գալու ենք քեզ մօտ և մատաղի մսիցը քեզ համար մի լաւ բաժին եմ բերելու: Անհոգ մնայ սչինչ էլ չի լինելու, Ասուռած ողորմած է, մի լացիր: Փոխանակ ուրախանալու լաց ես լինում: Ուրախ մնայ մի տիրիր: Մնացիք բարեաւ:

Ուրախ էր Բալլուն: Նա իր կեանքի դէմ Բարուն ծրագրած դաւադրութեան մասին տակաւին ոչինչ չգիտեր և չէր էլ երևակայում: Երկու տարեկան անմեղ ու անարատ դօշին վիզը

մէկ նախշուն և անլուայ<sup>1)</sup>) թաշկինակով կապած գնում էր առջեներին, իսկ ջորուն մէկը բարձած տնային հարուստ պաշարեղէններով, միւս ջորին բարձած գինով։ Իսկ ինքն էլ նստած երէք տարեկան նժոյզի թամբին, ծառան յետեից գցած և երկումն էլ ոտքից ցգլուխ զինւած գընում էին ուրախ և ապահով։ Արեգակը բաւական բարձրացել էր երբ որ հասան Սատանի<sup>2)</sup> կամուրջի լանջերի գլուխը, որտեղ ընկնելու էին Տաթեի առջե զանչող տափարակի եղերքը և վանքը երեալու էր ոչ այնքան հեռու իրանցից, հէնց այնուեղ երկու կողմից դուրս եկան Բաբուն թագյրած դարանակալ զինւորները և բոնեցին Բալլուին իր բոլոր ունեցածով, որին շրջապատւած տարան փաշայի մօտ։ Այնուեղ էր և Բաբան գաւագիր չարագործը։

Փաշան նայելով Բալլուի արդաքին գեղեցկութեանը, ափսոսաց և ասաց—«Էլա բալլուսան քի բալլու սան»—այսինքն յայտնի ես որ յայտնի ես. և իրաւ, Բալլուն արտաքին կողմից հազւագիւտ տիպ էր ներկայացնում և անպակաս

1). Հին հայոց ժողովրդների մէջ մատադացուի համար կազմվում էր այն որբազան զաղափարը, որ մատաղացուն փոխարինում էր Հայը Աբբահամի որդի Խսահակին, որը զահվելով պսակվում էր Առառուծոյ սուրբ կամքի հետ։ Իոկ թաշկինակը զգին կապելը Խսահակի ամուրի լինելու և մարդակենցաղ լինելու անարտութեան նշանակաւթիւն ունէր, որպէս թագ որ այժմ գնում են երկու կոյսերի գլխին և յետով պատկռում։

էր սնւած։ Նա բարձրահասակ, յաղթանդամ, լի-  
անձն և գեղեցիկ էր։ Նրա բոլոր անդամների չա-  
փերը հաւասար էին միմիանց և մէկը միւսից եր-  
բէք տւել չէր։ Աւելի շատ գեղեցիկ էին նրա  
աշքերը և ունքերը։ Մանաւանդ շատ ամուռ  
և յարմար կազմուածք ունէր իրանը՝ տղմարդա-  
կան ուղիղ դիրքով։ Հայկական տիպի յատուկ  
գծագրութիւնները արտայայտում էին նրա հո-  
գու վեհութիւնը, որտի անվեհերութիւնը և ան-  
վեհերութեան անփոփոխ բնաւորութիւնը։

Բաբայ, Բալլուն սա է, որից բամբասելով  
խօսում էիր, ասաց,— Փաշան։ — Սա շատ ջահել  
է երեսում, չնայած որ բարձրահասակ է և յաղ-  
թանդամ։

Այո, շատ ջահել է. Փաշան ապրած կենայ.  
ասաց Բաբան Քսան եօթ տարեկան հազիւ թէ  
լինի։ Դրա ամենաառոյգ ժամանակն է։ Մանա-  
ւանդ հաւատացնում եմ ձեզ, որ դա ամեն մի  
գործի մէջ առաջադիմող է և ոչ յետադիմող։  
Չափազանց քաջ է և հմուտ։ Զեր ամբողջ զին-  
ւորների մէջ չի կարող լինի զրա նման մէկը,  
որ վարժ և գիւրաշարժ լինի թէ հրացանաձգու-  
թեան և թէ սրածութեան գործում։ Պատերազ-  
մական արիւնահեղ գործերը զրա համար, հար-  
սանեաց մէջ որպէս զանազան յեզնական գերեր  
կատարել։ Այսուամնայնիւ այսքան բարձր յատ-  
կութիւնների հետ ունի նաև անհուն ոխապահու-

թիւն, ուր մէկ օր պէտք է ոտերի տակ զցէ և ջարդէ իր տիրոջ գլուխը։ Զգուշացնում եմ ձեզ վաղօրօք, որ գրան կենդանի թողնիլը ձեզ համար մահ է բերելու։

Բաբայ, դու ինչ թոյն ունես թափիր միայն Մախուն գլխին, ասաց փաշան։ իսկ այս պատանին ափսոս է թողնում եմ կենդանի և որպէս կալանաւոր միշտ կպահեմ իմ զօրքերիս խիտ բանակներում և կթողնեմ խիստ հսկողութեան տակ, ոչ բաց կթողնենք զայ գիւղը և ոչքո հանգստութիւնդ կիսանգարէ։

Փաշան ապրած կենայ, ասաց Բաբան։ Դուք լորտին, սպանում էք, իսկ թունաւոր չար օձին կենդանի թողնում։ Ես խնդրում եմ և կրկին անգամ խնդրում եմ ձեզ, որ կամ ինձ վերջացնես կամ այդ երկուսին։ Դրան եթէ կենդանի թողնես հանգիստ չի մնալու և իր չարագործութիւններով ոչ միայն վերջ կտայ մեր ազգատոհմին, այլ որպէս մի շահմար<sup>1)</sup> օձ մի գիշեր սողալով գալու է վրանդ և ձեր կեանքին վերջ է տալու։ Դուք եթէ ափսոսում էք Բալլուին, —աւելացրեց Բաբան, —և մեղք էք համարում սրան սպանելը, թող սրան մեղքը ինձ հետ լինի. իրաւունքը ինձ տւէք և ես ինչպէս կուզեմ սրանց հետ այնպէս էլ կվարեմ։

1.) Շահմար. — օձերի կարմիր տեսակն է, դեղեցիկ լինելուն համար «Շահ-մար» են ասում, —որ նշանակում է օձարքայ։

Իրաւունքը քեզ տւի Բաբայ, ասաց փաշան, և մեղքը նոյնպէս քեզ տւի. ինչ որ ուզում ես այնպէս էլ վարւիր դրանց հետ:

Բաբան հրամայեց զինւորներին, որ Բալլուին տանեն հօրը մօտը էլի շղթայակապ անեն և գիշերը խիստ հսկեն վերան մինչեւ որ լուսանայ:

Զինւորները խսկոյն կատարեցին Բաբուն չար հրամանը և Բալլուին տարան ձիթահանքը իր հօրը մօտ և ոտք ու ձեռքը խիստ կապուտեցին դարձեալ գութանի ճմբարակով։ Զինւորներից մէկը սկսեց հսկել երկու անմեղ կալանաւորների վերայ, որոնք զոհվում էին Թութակենց Բաբուն փառասիրական սատանայութեանը և իրանք հեռացան։ Մախին հեկեկալով լուռ լաց էր լինում, նրա արտասուքը թափվում էր իրան ալեզարդ միբուքին վերայ։

Ապեր, ասաց Բալլուն։ Այս ինչ սոսկալի փորձանք էր, այս ինչ պատուհաս էր որ պատահեց քեզ ծերութեան հասակում։

Մախին հազիւ կարսղացաւ այս երկու խօսքը ասել, որովհետեւ լացը նրան խեղդում էր։ Ա որդի դժւ ինչու համար եկար այստեղ, չէ որ քեզ բերել են որ ինձ հետ միասին գլխատեն։ Վաշ, վաշ, վաշ։ Ա որդի ինչու իմ տունս քեզանով քանդեցիր և ծուխս կտրեցիր։ Էս ինչ

ցաւ էր, էս ինչ կրակ էր որ թափեցիր իմ  
գլխին:

Ապեր, միթէ էս նամակը դուք չէք ուղար-  
կել, ասաց Բալլուն: Զէ որ նամակը ձեր լեզւիցն  
է զրած. միթէ ես կարող էի չհաւատար:

Նամակը Թութակենց տղամեռ Բարան է  
գրել. ասաց Մախին:

Ուրեմն արդէն բանը բանից անցել է պրծել  
էլ ինչ կարող ենք անել: Երեխ մէք ճակատա-  
դիրն այսպէս են գրել. ասաց Բալլուն: Երեխ  
մենք Աստուծոյ մօտ մեղաւոր ենք ճանանչւած  
իսկ Բարան արդար է, որ այս ըոպէիս մեր  
կեանքի թէլը յանձնել է Թութակենց Բարուն  
նման մի անիրաւ դաւաճանի: Եւ այսպէս հայր  
և որդի տխուր և ողբալի խօսակցութիւններ էին  
անում միմիանց հետ: —

---

Մախուն և Բալլուխն համար շատ երեկոյ-  
ներ էին մթնել և շատ առաւօտներ էին բացւել,  
բայց բոլորը անգորը և խաղաղէին մթնել ու լու-  
սացել և ոչ մի երեկոյ ոչ մի առաւօտ երբէք  
այնքան տրտմալից չէին որքան այս վերջին ե-  
րեկոն էր: Այս երեկոն շատ տրտմալից և սգա-  
ւոր էր. իսկ սրան բացւող առաւօտը մահա-  
հրաւէր էր: Սոցա կեանքի համար ծագող ար-

շալոյալ պիտի թագնվէր սև ամպերի մէջ և այլեւ  
չէր ծագելու արփիահրաշ ճառագայթներով։ Եւ  
բացւեց առաւօտը, Մախուն և պատանի Բալուին  
վերջին եղերնական տիսուր և սև առաւօտը։

Հաջալի փաշան զարթնեցաւ խոր քնից։  
Հագնւեցու, լուացւեցաւ և սկսեց կատարել ա-  
ռաւօտեան նոմազը։ Նամազը աւարտելուց յե-  
տոյ նստեց մի աթոռի վերայ։ Սպասաւորը  
նարգիլան<sup>1)</sup> բերեց զրեց առաջնը և նա շարու-  
նակեց ծխել։ Ծխեց նա շատ երկար և խորին  
մտախոհութեամբ և այնքան երկար մինչև որ  
ծխախոտը բոլորովին մոխիր դարձաւ։ Փա-  
շան սթափւեցաւ խորին մտածողութիւնից և  
պատիրեց կրկին անգամ պատրաստել նարգի-  
լան։

Նարգիլայի երկրորդ պատրաստութեան ժա-  
մանակ Բաբան եկաւ փաշայի մօտ, գլուխ խո-  
նապհեցը և կողքին կանգնեց։ Փաշան նստած  
էր մի աթոռի վերայ ինչպէս որ ասելենք, իսկ  
նրան շրջապատել էին իրան զօրքը և զօրապետ-  
ները։ Փաշայի հրամանով ըանակական փողա-  
ծուները սկսեցին փչել իրենց փողերը, որով  
յայտարարում էին որոտան գետին և Տաթեի  
խուլ ձորերին, ու անտառներին երկու անմեղ-  
ների վէրայ զրպարտութեամբ կատաւող եղեռնա-

1). Ծխամուրճ է, որին թռւրքերը սուլուզայլան էլ են ա-  
սում.

գործութեան որպիսութիւնը և ձորերը, սարե-  
րը, անտառները իրենց տխուր արձագանքներով  
պատասխանում էին փօղերի հնչիւններին։ Եր-  
կու անմեղ զոհերի սդաւոր լուրը քանի օր ա-  
ռաջ արդէն տարածւել էր սիւնեաց գաւառնե-  
րում, որով և գաւառների իշխանաւոր անձինք-  
ները հաւաքւել էին Տաթև և հանդիսատես էին  
վիճում կատարւող գործողութիւններին։ Բաբան  
հրամայեց զինւորներին, որ գնան և ձիթահանքից  
արեան ասպարեզի մէջ բերեն ծերունի Մա-  
խուն և պատանի Բալլուին։ Զարագործութեան  
ասպարեզը արդէն յանձւած էր Բաբուն և նո-  
միանգամայն պապակուած էր Մախուն և Բալ-  
լուին արիւնը խմելու ծարաւով, որպէսզի յա-  
դուրդ առյ իրան վերջիներիս դէմ ունեցած  
թշնամական քաղցած նպատակին։

Դեռ անընդհատ հնչում էին բանակական  
փօղերը և գղրդում էին մերձակայ լեռները։  
Բաբան հրամայեց արձակեցին երկու անմեղների  
կապանքները, և մէկ-մէկուց մի քանի քայլ հե-  
ռու չոքեցնել տւեց իրարու յանդէպ։ «Զալլաթ»  
(գահիճ) կոչեց Բաբան։ Զալլաթը դանակը յե-  
սանին քսելով եկաւ կանգնեց ասպարեզում։  
Հանիր այդ գարշելի արարածի աչքը, որը Խըն-  
ձորէսկ գիւղի գլխաւոր խոռվարարն է։

Դահիճը բռնելով Բալլուի երկար ու գան-  
գուր մազերիցը թեքեց ետեին վերայ և դանա-

կի ծայրովը սկսեց հանել նրա աջի աչքը։ Մախին չհամբերելով որդուն վերայ կատարւելիս քստմնելի գործի ազգող վշտին և ուշաթափ եղաւ, Բարան հնար գտաւ նրան ուշքի բերաւ և կրկին չոքեցնել տալով ուղղացրեց։ Մախին աչքերը հուփ կալաւ որ չտեսնէ Բալլուին վերայ կատարւող ողբալի գործը։ Բարան տեսնելով այդ, խակոյն վրայ հասաւ և Մախուն աչքերի կոպերը բարձրացնելով, տսաց, ուր ես աչքերդ խփում, Մախի։ Նայիր և աչքովդ տես, որ քո սիրած եւ քաջ որդուդ աչքերը հանել եմ տալիս։ Բալլուն է, Մախի, որով շատ վստահ էիր։ Բալլուի մի աչքը հանւեցաւ։ Այժմ դահիճին հրամայեց, որ հանէ Մախուն աչքը։ Դահիճը վրայ հասաւ նոյն պէս Մախուն աչքը հանելու։ Բալլուն նոյնպէս իրան առողջ աչքը հուպ կալաւ որ հօրը աչքի հանւելը չտեսնէ։ Բարան վրայ հասաւ և նոյն պէս բացեց Բալլուի աչքը ասելով. «Բալլու, քո հայը Մախին է, այ, աչքովդ տես, որ աչքը հանել եմ տալիս։ Հիմայ իմացիր թէ քաջը ով է, ՚Ի վերջոյ աչքերը հանել տալուց յետոյ գլխատել տւեց և երկուսին, որոնց դիակները սպանւած տեղը երեք օր մնալուց յետոյ հազիւ իրաւունք տւաւ Տաթեւի քահանաներին եւ վանահայրերին, որ թաղեն։ Տաթեւի հսգեւորականները նրանց մարմինները ամփոփեցին վանքին ճանապարհին մերայ, որ անց ու դարձ անողնե-

ըր ողորմի տան: Երկուսին գերեզմանների վերայ գցած է խոյաձեւ քարեր (զօչքարեր): Մախուն տապանաքարի արձանագրութիւնը բընութեան հտրւածներից՝ փչացել են. իսկ Բալլուկինը մնում է և կրում հետեւեալ կարճ խօսքերը «Այս է տապան Մախու որդի Բալլուկին, Ռծէ թւին հայոց»: Թիւը սխալ է դրած, որովհետեւ այդ անցքը կատարւել է 1729 թ. փրկչ. հայոց պէտք է լինի 1179 թւին:

\* ) ~~Արևածառա-թիւ~~ Ի՞նչ ելա շար!

### ԲՈԼԼՈՒԻ ԾԸՆՍՅԻ ԱԶԱՏԻՎԼՅ

Երբ որ գալրանամուտ զինւորները յանկարծ բռնեցին Բալլուկին, բռնեցին նոյնպէս և ծառային: Սոված գայլերի նման իսկոյն ցրիւտւին ջորիների բեռները ու սկսեցին լափել այն ազնիւ թխւածքը. որ պատրաստւած էր սուրբ սեղանի համար: Բալլուկի նժոյգը, ջորիները և զէնքերը բոլորը խլուեցան իսկ ծառային տարան Տաթևի գիւղը և գցեցին մի ախոռատան մէջ դուռը փակեցին: Կալանաւորութեան երկրորդ օրվայ երեկոյեան մէկ տիրացու գնաց դէպի այդ ախոռատունը և մօտեցաւ այն տրիճակին, որով մէջի աղըը գցում էին դուրս: Այդաեղ տիրացուն այնքան նստեց մինչև որ մթնեց և բոլորովին դիշերացաւ: Գըլլուխը տրիճակովը ներս մտցրեց և հազիւ լսելի

ձայնով կանչեց երկու օրւայ քաղցած բանդար-  
կեալին.—«այ տղայ Էյ, այ տղայ, մի՛ վախիր  
հայ եմ: Եկ, եկ: Եկ այստեղով քեզ դուրս հա-  
նեմ, խեղճ ես փախիր և ազատիր քեզ, եկ»:  
Ծառան տեսնելով և հասկանալով, որ իրան կան-  
չողը հայ է, մօտեցաւ տրիճակին: Այդ ով ես:  
ով աստուածաէր մարդ, հայ ես:

Հայ եմ, հայ եմ, անհոգ մնայ, ձեռքդ տուր  
ինձ:

Բանտարկեալը ձեռքը տւեց տիրացուին,  
որը իսկոյն դուրս քարշեց և տարաւ իր տունը,  
լաւ հաց ուտացրուց ջուր խմացրուց և մի  
քանի հաց էլ դրեց ծառային զրպանումը.  
դէ արի ետեիցս, ասաց տիրացուն և ճանա-  
պարհւեց Տաթե զիւղի մի խուլ անկիւնովը  
դէպի Հալիճոր, Շէնհեր, Խոտ և Խնձորէսկ  
տանող ճանապարհը, ուր մի քանի ըռպէից յե-  
տոյ նրանք արդէն գտնվում էին վանքից դէպի  
սատանի կարմուրջը իջնող ճանապարհի ծայ-  
րումը, որը «Սատանի եօխիշի» զլուխ է կոչ-  
վում և այդտեղից ծառային ճանապարհ դրեց  
դէպի Խնձորէսկ: Տիրակորոյս ծառան զիշերա-  
յին խաւարի սոսկալի երկիւղից սրտաբարախ  
լինելով իսկական ճանապարհից շեղւեց և ըն-  
կաւ խիտ մացառների մէջ: Նա ան աստիճանի  
յուսահատական շիտութեան մէջ ընկաւ որ  
զնաց Որոտան գետի հիւսիսային կողմը, ուր մի

ժայրի ամենաբարձր գաղաթի, դահավեժից,  
ուզում էր ցած զլորվէր դէպի գետի անդունիքը.  
բայց առնելի դահավեժից ցած զլորվելու ձգո-  
ղութիւնը կարծես զգուշացըրեց նրան, որը եր-  
կիւղից այլ ևս քայլ առաջ դնել չկարաց, և  
այնքան նստեց ժայռի զլիխն մինչև որ լուսա-  
ցաւ, եւ երբ որ լուսացաւ և դահավեժի զլիխնց  
նայեց դէպի ցած, որտեղով զզրդիւնով հոսում  
է Որոտանը, նա իսկոյն թուլացաւ ընկաւ:  
«Փառք Քեզ Ամենակարող Աստուծ, որ այս  
զիշեր ՚ինձ ազատել ես մի բոլորովին ան-  
յայտ կորուստից»։ այսպէս գոհութիւն էր մըր-  
մաջում ծառան։ «Եթէ այստեղով զլորւէի ցած,  
ով էր իմանալու թէ ինչ եղայ, կամ թէ ում  
կարծիք կհամնէր որ ես զիշերը եկել եմ և այս-  
տեղով ցած եմ զլորւել»։ Վերջապէս ծառան իւր  
գոհացողական մաղթանքը աւարտելուց յետոյ  
նորից ուժերը հաւաքեց ու եկաւ ընկաւ  
յատուկ ճանապարհը։ Զինի ուղիղ ճանապարհո-  
վը զնամ ետեիցս մարդիկ ուզարկեն դան ինձ  
բոնեն ու տանեն Բաբուն մօտ, ասա ծառան  
և նա ինձ զլիստել տայ։ Ուստի մի այսպիսի  
տարակուսական ենթադրութիւնները ճանապար-  
հից հանեցին խեղճ ծառային և զցեցին Սախ-

1) Մէկ կիբճ է, և դանվում է Որոտան գետի ձախ կողմին,  
նրա երկար լանջիվերին հարթի հասնող ծայրումը, որը հին ժա-  
մանակներում սարսափելի աւաղականոց է եղել։

կալը թութանի փշփշոտ ցաքուտներին մէջ։ Ծառայի բոլոր շորերը ինչ որ հազին ունէր ցաքի թփերը քրքրեցին և ծիւծիւոտեցին։ Գըլխի գտակը դզզզւեցաւ և ոտների տրխների տրխատանները կտրտւելով տրեխները դուրս հանւեցան ոտքերից և մնաց բոբիկ։ Վերջապէս անտանելի նեղութիւններ կրելով դեռ բաւական օր կար որ հասաւ Հալիձոր գիւղը և գնաց դէպի Շիրինին տունը։ Երբ որ այդ դրութեամբ մտաւ նրանց տան բակը յանկարծ պատահեց Շիրինի մեծ աղին, Սարդարին<sup>2)</sup>։ Սարդարը տեսնելով իր քեռունց ծառային, իսկոյն ճանաչեց և ասաց, «ադա կուքան, էդ ի՞նչ է քո հալդ, ինչ է պատահել քեզ։

Լաւ խաբար ունես թէ ինչ է պատահել, ասաց կուքանը։ Դայիլարդ (քեռիներդ) կոսորւել են և ինձ էլ էս օրին հասցըել. սրանից աւել էլ ի՞նչ պէտք է լինի։

Ինչպէս թէ գայիլարըդ կոսորվել են. մեռելէն։ Այ աղայ գժւել ես. այդ ինչ ես ասում։

Զէյէ չէ, ասաց կուքանը։ Մեր գիւղացի աղամնու Բաբան Տաթե նրանցից գանգատ է

Սրանք երեք եղբայր էին և այդ ժամանակւայ ամենայտմառ ներսոներն էին, սրանք պարապում էին աւագակութեամբ և աւարառութեամէ։ Մախուն և Բալլուին փաշտի մօտ տանելու ժամանակ այդ արիւնաբու քաջերը տանը չէին, զնացել էին աւարառութեան։ Նրանք Պարսկաստանի Ուրմու գաւառից հազիւ երկու օք էր որ եկել էին։

արել Հաջալի փաշին հազար ու մէկ զպառտութիւններով, փաշան էլ հաւատացել է Բարուն և արդէն երրորդ օրն է, որ ցերեկով երկուսին էլ գլխատել տւաւ:

Դէ սուս կաց. ոչինչ չես ասիլ տանը. ասաց Սարդարը և մի գնալ տունը դեռ մի քիչ սպասիր: Այսպէս ասելով Սարդարը կուքանին տարաւ մի առնձին տեղ նստացրեց թէ հանգատացիր: Իսկ ինքը ներս գնաց և նշանացի կերպով եղբօրցը դուրս բերաւ տանիցը, որպէսզի իրանց մայրը դեռ ոչինչ չհասկանայ եղբօրը և աղին վերայ կատարւած աղետից:

Ի՞նչ կայ, Սարդար, ասաց Ծատուրը, իրանից փոքր եղբօրը:

Լաւ, խաբար ունիք, ասաց Սարդարը: Մերքեսինները, Մախին և Բալլուն, աքդէն սպանւած են: Այդ դժբախտութիւն:

Այդ ի՞նչ ես առում, Սարդար, ասաց Ծատուրը. հանաք ես անում:

Հանաք չեմ անում, ահա ծառան այստեղ է, նա է խաբար բերել: Եթէ մտիկ տաս ծառային կզարմանաս. ասաց Սարդարը: Հազին ոչ շոր կայ, ոչ ոտներումը տրեխներ կայ և ոչ գլխին գտակ կայ, ցաքի քոլերի բերանն է ընկել և այնպէս քրքրւել: Շուտով գնացին ծառային մօտ և սկսեցին լուրջ հարց ու փորձ անել և նրբանք տեղականայ մանրմասն կերպով

կատարւած դէպքի բոլոր որովհառթիւնները  
սկզբից մինչև վերջը:

Եւ վերջապէս ամեն ինչ կուքանից լսելուց  
յետոյ կուքանին առան իրանց հետ եւ գնացին  
տունը, առանց որեւէ խօսք խօսելու. միայն թէ  
շատ տխուր էին:

Ինչ կայ Սարդար, ասաց Խուրշուդը. ամե-  
նափոքը եղբայրը: Այս ըսպէիս ի՞նչ պատահեց  
ձեզ, որ տիրուեցիք: Միք թագցնիլ. ասացէք:

Ել ինչ թագցնելու բան կայ, ասաց Ծա-  
տուրը. մեր քեռիները զլխատւել են:

Վահ, այս ինչ է խօսում: Միթէ այդպէս  
բան կլինի, ասաց Խուրշուդը:

Եղել է վերջապէս Ել ինչ արած, ասաց  
Ծատուրը:

Ուրեմն հաւատամ:

Այո, հաւատայ, ասաց կուքանը. ապա ես  
որուեղից եմ գալիս:

Ի՞նչ մն համար են սպանել:

Այն պատճառով են սպանել, որ ըսկի պատ-  
ճառ չունի. ասաց կուքանը: Զեր դայիլարը  
(քեռիները) երկուսն էլ մատադ են դառել  
Թութակենց Բարու քմահաճութեանը եւ ուրիշ  
ոչինչ: Կարելի է ասել եւ այսպէս, սպանել է  
ուել, որ գիւղումը իւր չար եւ մասսակար ա-  
րարքների համար դէմը խօսող էլ մարդ չինի:

Հիմայ որտեղ է Բաբան. ասաց Խուրշաւդը,  
վանքումն է թէ գնացել է խնձորէսկ:

Ես երկու օր ու գիշեր բանտարկւած եմ  
եղել, ասաց կուքանը: Ինձ դրսից տեղեկութիւն  
չունիմ, միայն հաւանական է որ նա դեռ փա-  
շացի մօտ լինի: Մանաւանդ ես գիշերով եմ  
փախել և, ինձ ազատողը մէկ տաթեացի մարդ  
եղաւ: Սակայն ինձ հաւատալի է լինում, որ  
Բաբան այսօր Տաթեից ճանապարհւելու է դէ-  
պի Խնձորէսկ. որովհետեւ փաշան նրանից տասն  
քեռը ցորեն է ուզում և խստապահանջ է, նա ան-  
պայման գիւղը հասնելուն պէս սկսելու է դուրս  
տալ ձեր քեռու լիքը հորերը և լրացնի նրա պա-  
հանջը, եթէ ոչ գիւղումը ցորեն չկայ, մըտե-  
զից պիտի գոյացնէ, որ բաւականութիւն տայ  
փաշային և ինքը նրա մօտ լաւ մարդ դառնայ:  
Եւ դուք դեռ չէք իմանում, որ նա մէլիք է  
դառել մեր հասարակութեան վերայ, փիրմանա-  
ւոր հրամանն է ստացել փաշայից և հէնց դրա  
համար է, որ քեռիներիդ կոտորել տւաւ և գիւ-  
ղացոց շատ խիստ նեղացնում է, տասն քեռը  
ցորեն որտեղից որ է պէտք էպատրաստեն և տան  
փաշային:

— Բաբով ես նրան կենդանի թողնեմ, ա-  
սաց Սարդարը, որ նա Խնձորէսկում մէլիքու-  
թիւն անի, փառք ու պատիւ փայելի և ցորեն  
հաւաքի փաշին տայ: «Փայլը եթէ այծին դպչե-

լու լինի կարող է գնայ քաբալայի<sup>1)</sup>», ասում է նախնեաց առածը:

Մախուն և Բալլուին դիստաման համար մրդիքը լուր տւին իրենց մօրը: Մայրը վայնասուն գցեց տունը, մազերը փետեց և շատ լաց եղաւ: Տեսնում էք այս ծիծը, որին կաթը կերել էք մեծացել, ասաց Ասուրը, և այսօր ամեն մէկդ դարձել էք մէկ-մէկ աժդահայ, սորա կաթը ձեզ հառամ լինի եթէ դուք Թութակենց Բաբուն զլուխը չկտրէք և չտանէք Խնձորէսկունահատակ<sup>2)</sup> սուրբի կողքով դլորէք դէպի ցած, որ այդ ապիկար զլուխը զնայ ընկնէ Թութակենց տան տակի ձորը»: Այս խօսքերը ասելու միջոցին երկու ծիծը բաց արած արտասւելով ցոյց էր տալիս իրա հարազատ քաջ որդոցը և բորբոքու մեր նրանց արիւնը:

Ինձ կհանգստացնէք միայն այն ժամանակ, երբ նրան կսպանէք այն մահուան ձեռվ, որով նա սպանել է տւել իմ ծերունի եղբօրս և նրա դեռ ծաղկափթիթ հասակի մէջ գտնուող որդիքաջ Բալլուին, նրա նալատակաւոր սիրելոյն:

Ասուրի տղօրցը մէջ թէ փոքր ինչ վրեժ-

1). «Քեաբայ» վանք է նշանակում, «Էալա» գերազոյն Ռւբեմ գերազոյն վանք:

2). Նահատակը. Մէլիք-Զոհրաբը հայ էր բուն Խնձորէսկեցի և անունը Սարգիս: Նա Խնձորէսկու մէլիքութիւնը ձեռք բերելու համար թիւքացաւ իր ամբողջ ընտանիքով: Խսկ նրա Խանքայ անունով մի օրդին ծածուկ քըիստորեայ մնաց: Հայրը եւ

խնդրութեան կրակ կար, բայց մօր ասած ազդու  
խօսքեր էլ համարեայ քամի դառան եւ փչելով  
շատացրին նրա բոցերը։ Նրանք գիշերը իրանց  
փոքր եղբօրը, Խուրշիդին, ուղարկեցին տաթեւ,  
այստեղ հաւատարիմ մարդից Բարուն տյնտեղ  
լինելն իմացաւ եւ դիշերը նոյնպէս դարձաւ  
եկաւ Հալիճոր եւ լուր բերաւ, որ Բարան փա-  
շային մօտն է վաղը անպայման ճանապարւելու  
է դէպի խնձորէսկ։ Ուստի լուսադիմին Խուր-  
շուղը, Ծատուրը եւ Սարդարը գնացին Բարա-  
հունջի դիմաց գանւող Կաքաւ աղբիւրի կիրճու-  
մըցած իջան ձիերից եւ սպասեցին Բարուն  
դալուն։ Արեգակը ծռեկէ էր կէս օրվան տեղից.  
Բարան եւ նրա թիկնապահ Լալէյվազը մտան  
կիրճը։ Երբ բոլորովին մօտեցան իրանց, յանկարծ  
բացւեցան երեք եղբայրների հրացանները։ Թու-  
թակենց նորընծայ մէլիք Բարան ձիիցը ընկաւ  
եւ տարածւեց գետնին։ Արծւի արագութեամբ  
վրահասն բռնեցին լալէյվազին իսկոյն, և եթ զի-  
նաթափ արին նրան, ձեռքն ու ոտքը կապեցին  
նստեցրին գետնին և յետոյ մօտեցան Բարուն,  
որ հոգին դեռ չէր աւանդել։ Բարայ, նորընծայ

---

միւս որդիքը իմանալով Խանբաբայի ծածուկ քրիստոնեայ մալը  
շատ խնդրեցին որ թողնէ քըստոնէութիւնը, իսկ երբ որ նո չը  
թողեց իր բռնած լոյս հաւատը, հալածեցին նրան և հրացանա-  
զարկ արին ու սպանեցին, որի սպանւած տեղը հայերը թաղեցին  
նրա մարմինը և անուանեցին Ս. Նահատակ։

մէլիք. ասաց Սարգարը. դու էի՞ր, որ մեր քենի Մախուն. Եւ Բալլուին զլխատել տւիր։ Հիմայ մեզ ճանաչիր դու, որ մենք էլ Հալիձորեցի Շիրինի տղերքն ենք, Մախուն քրոջ Ասուրին կաթը կերածն երն ենք, ահա քեզանից նրանց վըրէժը . առնում ենք և հալալ է քո տաք արիւնտ մեր սրերին և մեր հրացաններին։ Շատ դէշ խօսքեր ասելով այս խօսքերի հետ վերջապէս զլուխը կտրեցին և սրերի տակ կարատէցին նրա ամբողջ մարմինը և թողեցին ընկած։ Այս գործողութիւնը Բաբային վերայ կատարելուց յետոյ կըտրեցին մէկ երկար ձողի, ծայրը սրեցին և կոխեցին Բաբայի կոկորդի մէջ։ Արձակեցին Լալէյվազի ձեռքն ու ոտքը և առանց զէնքի նստացրին իրան ձիուն վերայ և Բաբայի զլուխը ձուղուն ծայրը հազցրած տւին նրա ձեռքը ասելով «աղայիդ զլուխը պինդ պահիր որ չընկնի, եթէ ընկնի քեզանից կնեղանայ։ Եւ ուղիդ պահիր ուղիդ էլ գնայ, էյվազ։ Զգուշ գնայ ճանապարհից չշեղւես»։

Լալէյվազը իր աղային զլուխը ձողուն ծայրը անցրած և բարձր բոնած հետեւմ էր Սարգարին, Ծատուրին և Խուրշիդին։ Նրանք զնում էին Խնձորէսկ։ Սակայն երբ որ նրանք մօտեցան Խնձորէսկու և հասել էին Մթնաձորի կոչվող թումբը, այդտեղ Լալէյվազին բոլոր զէնքերը տւին— իրան։ Էյվազը զէնքերը իրան վերայ առնելուց

յետոյ դարձեալ ձեռքն առաւ ձողին։ Նահատակ Սուրբի մօտ գլուխը էյվազիցը առան և իրան թոյլ տւին։ Իսկ յետոյ այդտեղից հալիձորեցի քաջերը սկսեցին բարձր ձայնով կանչել՝

— «Ով Խնձորէսկու ամբողջ հասարակութիւն, տսացին նրանք։ Յայտնում ենք ձեզ ամենքիդ, որ Խնձորէսկեցի Թութակենց Բարանգնացել է Տաթե Հաջալի վաշայի մօտ, զանգտառելով չարախօսել է մեր քեռի Մախուցը և նրա որդի Բալլուկիցը և վերջապէս երկուսին էլ զլխատիլ է տւել։ Մենք էլ Մախուն քրոջ և Հայիձորեցի Շիրենենց Շիրինի տղերքն ենք, եկել ենք Բարանունջի կաքաւ աղբիւրի կիրճումը սոլանել ենք Թութակենց Բարուն և առել ենք մեր քեռիների վրէժը։ Իսկ եթէ չէք հաւատում ահտ այդ էլ Բարուն զլուխը։ Ուստի այս խօսքերի վերջաւորութեան հետ ցած զլորեցին զլուխը, որը գնաց ընկաւ Թութակենց տանը տակը։

Ահա մենք գեռ այստեղ ենք, կրկին անգամ ասացին Հալիձորեցի քաջերը, և չենք փախչում, ձեզանից ովքեր ուզում են վրէժխնդիր լինել Բարուն կողմիցը մեզանից, կարող են քաջաբար տսպարէզ դուրս գալ։

Թութակենք գեռ չէին հաւատում, որ իւրենց Բարան սպանւած է և զլորած զլուխը նորանը կլինի. բայց երբ որ գնացին զլուխը վեր-

ցրին և ճանաչեցին որ իրենց Բաբունն է շարունակեցին վայրենի աղաղակներ բարձրացնել և վայնասուն անել, մորմոքւել եւ բորբոքւել վրէժխնդրութեան աղագաւ, որի մի թեթև պատրաստութիւն տեսան զէնք շարժելու համար։ Այսուամենայնիւ կրկին թուրացան, որովհետեւ Խընձորէսկեցի Դաղունց Դօլսանի քաջ տղերքը, Սաքանը, Խալափը, Սարդարը և Պօղոսը Մինասենց հետ բարեկամութիւն ունենալու պատճառով դէմ կանգնեցին Թութակեանցներին և անցան Հալիձորեցոց կողմը։ Ուստի Թութակենք տեսնելով Դաղիեանների կողմնապահութիւնը յետքարձան կրիւ անելու դիտաւորութիւնից և հանգստացան իրենց տեղը։ Իսկ Հալիձորեցիք մէկ երկու ժամ Նահատակի մօտ կանգնելուց յետոյ ճանապարհեցին դէպի իրենց գիւղը, հալիձոր։

Մի քանի օրերից յետոյ սպանւած Բաբուն եղբայրը, Էղիլշէն, ծածուկ զնաց Տաթև փաշային մօտ և գանգատեց Մտխուն քրոջ որդկանցիցը իւր եղբօր վերայ կտտարած եղերնական վարմունքին համար։ Փաշաւ ընդունեց Էղիլշէին լսեց նրտ գանգատը և որպէս-զի Բաբայի խօստացած տասն բեռը ալիւրը Էղիշից ստացած լինի, ծանօթացաւ հետը, զիւղի մէլիքութիւնը յանձնեց նրան և հրաման ուղարկեց Ժողովրդին վերայ, որ համաձայն փաշային շնորհած փերմանին, որ տւել էր Բաբուն և ամբողջ Թութա-

կեանեեին որդոց-որդի, պէտք է մէլիք ճանաչել էղիլշէին, որպէս յաջորդ առաջինին։ Իսկ յետոյ հրաման ուղարկեց Շէնհերու, Խոսու և Խնձորէսկու ժողովրդներին վերայ, որ ման գան և որտեղ որէ գտնեն Քաբուն սպանող շարադրծներին։ Զինւորներ ուղարկեց Հալիձոր քարուքանդ արին Շիրինի տղօրց տունը և ամենինչ ոչնչացրին։ Մինչև երկու տարի այնքան խիստ յետեւմ չէին Շիրինի տղօրցը բայց երրորդ տարումը երբ որ սկսեցին հետապնդել նրանք գլուխ գնելու տեղ չգտան, ճարտհատեալ փախան Խնձորէսկ և գիշերը վեր բարձրացան Մինասենց թառը<sup>1)</sup> և ամբացան այնտեղ։ Ամբողջ վեց ամիս առանց ոչ ոքի իմանալու Մինասեանցները ծածուկ կերակրեցին նրանց և պահեցին։ Սակայն վեց տմսից յնտոյ լրտեսը յայտնեց մէլիք էղիլշէին, որ Մախուն քրոջ տղերքը այնինչ տեղն են գտնվում։ Եւ երբ էղիլշէն ստոյգ տեղեկացաւ, որ իր թշնամիները Մինասանց թառում են և անհնարին է ուժով ու սպառնալիքով նրանց ցած իջեցնել, դիմեց բարեկամական խորամանկութիւնների, որպէսզի թառից ցած բերէ նրանց։ «Գնացէք յայտնեցէք նրանց, որ ես մէլիք էղիլշէս այլ ևս թշնամու-

1). Բարձր ժայըրերի ճակատներում մարդկանց ձեռքով փորած և տուն շինած այրեր են. որոնք իրանց մէջ պատսպարողին լուսաի պաշտպանութիւն են խօստանում։

թիւն չունիմ Մախուն քրոջ տղօրցը հետ, թող  
իջնեն թառիցը և անհոգ ու ապա հով ապրեն ի-  
րենց համար»։ Երբ որ տեսաւ այդ խորաման-  
կութիւնը ևս անօգուտ անցաւ և չեն հաւատում  
իրան, սկսեց կաշառել զիւղի քահանանեցից<sup>1)</sup>  
մէկին որ խաչով ու խաչվառով գնայ երգում  
ուտէ և հաւատացնէ նրանց, որ էղիլշէն ձեր  
այդքան տանջանքը մեղք է համարում և սըր-  
տանց ցանկանում է, որ դուք ցած իջնէք այդ  
ճգնատեղից և աղատ ապրէք։ Եւ այսպէս քա-  
հանան վերցրեց իր կամքին համակրող մի քա-  
նի էղիլշասէք փարիսէցիների ու գնաց Մինա-  
սենց թառին տակը և ոյնտեղ խաչի և Աւետա-  
րանին վերայ երգւեցան և հաւտտացրին նրանց,  
որ էղիլշէն այլ ևս թշնամութիւն չունի թառա-  
կանների հետ. մեղք է համարում իրան համար,  
արգէն երորդ տարին է որ աստանդական  
կեանք են վարում, խնդրում է որ ցած իջնեն և  
իրանց համար աղատ ու ապահով ապրէն։

Ճշմարիտ է, ինչ որ Տէրտէքը ասում է,  
տղերք, իջէք։ Անհոգ մնացէք և ոչ մի երկրա-  
յական միտք միք անիլ, ցած իջէք։ Ասում էին  
աշխարհական էղիլշականները։

1). Անունը իմացող մարդ չեղաւ։ 2). Քահանան երգումով  
նոյնական հաւատացրել էր Մինասենց ժառանգներին, որ էղիլշէն  
թշնամութիւն չունի իրենց ըարեկամների հետ, կարող են թառիցը  
իջնեն և իրանց համար աղատ ապրէն։

Ուստի Մախուն՝ քրոջ որդիքը հաւատալով  
քահանայի երդմանը, որ ուտում էին խաչի և աւ-  
տարանի վերայ, ցածի ջան թառիցը։ Հենց իշ-  
նելուն պէս բոնւեցան և Մէլիք Էղիշէի հրա-  
մանով նրանց տարան զիւղի արևելեան կողմը,  
«Սուաքար կոչւող քարի մօտ երեքին էլ զիսա-  
տեցին։ Այսուամենայնիւ Էղիշէին էլ նոյնպէս  
օրհասը մօտենում էր, չնայած որ ինքն իրան  
նպատակի հասած էր համարում։ Մինասենց  
ժառանգները իրանց բարեկամների մարմինները  
վերցրին և տարան այժմեան ժայռափոր «Հինի»  
կոչւող եկեղեցու տուաջ թաղեցին հայոց ՌՃԶԲ  
թւին առանց նշանաւոր տապանաքարէրի, ըստ  
վնկչականի 1732 թւին։

---

Թէև ասում են Աստուած անողաց պարտական  
է և դա ճիշտ է, բայց անելին հետ բաղտաւորութիւն  
էլ պէտք է լինի, որովհետեւ շատ մարդիք անդադար  
աշխատում են և ոչ մի բախտաւորութեան չեն հասնում  
ապրում են առանց ներքնաշապիկի, մեռնում են առանց  
պատանի։

ԵՐԿՐԻ ԿՊՊՄԻՑ ԳՅՋՔ ԲԵՎԳԱԾՍԱՐԻ ԿԵՇԵՓԻՒԾ ՄԵԼԻՔ  
ԷՒԹՈՒՅԵԼԻՆ ՄՊԵՆԵԼՈՒ ՀԵՄՔ.

Ինչպէս որ զրել ենք։ — Թութակենց Բա-  
րուն սպանւելուց յետոյ, Հաջալի փաշան Խնձո-  
րէսկու հասարակութեան վերայ մէլիք կարգեց

Նրա փոքր եղբայր էղիլշէին։ Այնուամենայնիւ  
էղիլշէն եղրօր նման իւր մէլիքութիւնը երկար  
տանել չկարողացաւ, որովհետև Մինասենց ժա-  
ռանգները իրենց բարեկամների վրէժը թութա-  
կեանցներից առնելու համար փողով կաշառեցին  
գզիր Բաղդասարին, որ ծառայում էր թութա-  
կենց տանը, որ սպանէ մէլիք էղիլշէին։ Բաղ-  
դասարը թէկ ընդունեց կաշառը և յանձնառու  
եղաւ որ էղիլշէին սպանէ, սակայն այնքան էլ չէր  
ցանկանում, որ թութակենց տանը իրան տառնինդ  
տարվան կերած աղուհացը թափէև մոռանայնրանց  
երախտիքը, սպանէ էղիլշէին և կատարէ Մինա-  
սենց արիւնոտ խնդիրը։ Պատանի Բաղդասարի  
մէլիք էղիլշէի կեանքի վերայ կատարած չարա-  
գործութեանը, պատճառը եղաւ մի ամբողջ ոօ-  
ման, մի սիրոյ ամենաքաղցը տենչ։ Եւ ով էր  
այն սիրոյ տենչի ազնիւ ու թանկագին ընծան։  
Նա գեղեցիկ նանախն էր, որի սիրուց յանկար-  
ծակի բղդիսած տենչը ապագայում Բաղդասա-  
րի բախտաւորութեան պսակը դարձաւ իսկ մէլիք  
էղիլշէին մահւան պատճառը։ Հազւախւտ նա-  
նախի շնորհիւ Բաղդասարը ոչ միայն մէլիք է-  
ղիլշէին կսպանէր, այլ կարող էր սպանել նոյն-  
իսկ իր հարագատ ծնողներին էլու եւ ինչով էր  
մեղաւորվում գեղեցիկ նանախը Բաղեասարի  
ձեռքով սպանւող մէլիք էղիլշէի քրէական գոր-  
ծի մէջ։ Ոչ մի բանով նանախը միամիտ էր և

չզիտէր թէ իր մասին ինչ դէր է կատարւելու,  
իսկ Բաղդասարը գութը, մարդասիրութիւնը և  
չարագործութիւնը բոլորը հաւասար խառնել էր  
միմիանց և զոհում էր Նանախի սիրոյն, միայն  
թէ վիճակւէր իրան։ Նա այլիս չէր կարող չկա-  
տարել այն, որը կտտարեց։ Նա հարբել էր Նա-  
նախի սիրով։ Նանախը Խնձորէսկեցի Դաղունց  
Դօլսանի աղջիկն էր։ Այդ արևային հաւէրժա-  
հարսը, այդ եղեմական վարդը չորս եղբայրնե-  
րի մէջ դարձեալ պահւում էր ծածուկ. որովհե-  
տեւ նրա գեղեցկութեան հարտուը տարածւած էր  
ամեն տեղ։ Եթէ նրա քաջ եղբայրների ահե-  
ղութիւնը չլինէր, արդէն վաղուց առևանգած կլի-  
նէին։ Նանախը զոհւեցաւ իւր եղբայրների<sup>1)</sup>՝  
վառասիրութեանը թէև, սակայն բախտաւոր  
աղագայ ունեցաւ և վիճակւեցաւ մի քաջ երի-  
տասարդի, որը նախ գզիր էր Թութակենց տա-  
նը, բայց յետոյ բախտ ունեցաւ իւղբաշի դառ-  
նալու և դզիրի ստոր տիտղոսին փոխանցւեց  
«իւղբաշի Բաղդասար» բարձր տիտղոսը չորս  
գիւղերում, Խնձորէսկ, Շէնհեր, Խոտ և Հալի-  
ձոր։ Դաղունց Դօլսանի տղերքը, Սաքանը, Խա-  
լափիր, Սարդարը և Օրդուխանը Խնձորէսկու մէ-  
լիքութիւնը իրանց ձեռքը զցելու համար յղա-  
ցան մէլիք էպիլուէի ոչնչացնելու խորհուրդով։

1). Նանախը. Սաքանի, Սարդարի, Խալափի և Օրդուխանի  
հարագատ քոյրն էր։

որովհետեւ միանգամայն հաւատացած էին, որ  
մէլիք էղիլշէին ոչնչացնել տալուց յետոյ թու-  
թակենց ազգատոհմի մէջ այլիս չի գտնւելու  
մէկ այնպիսի քաջ և աչալուրջ ժառանգ, որ  
մտնէ իր նախորդների տեղը և զիւղի մէլիքու-  
թիւնը տանի ըստ իրան վայելուչ և պատշաճա-  
ւոր կարգով։ Եւ ի՞նչպէս անել կամ ի՞նչով ձեռք  
բերել մէլիքութիւնը. այն է նանախը տալ պա-  
տանի Բաղդասարին և նրա ձեռքով սպան և  
տալ մէլիք էղիլշէին։ Ահա այսպէս ծրագրեցին  
Դօլուխանեաները։

Ուստի նանախի եղբայրները մի գիշեր ի-  
րանց մօտ կանչեցին պատանի Բաղդասարին և  
նրա հետ խօսեցին այս պարմանադրութեամբ։  
«Բաղդասար, քեզ կանչել ենք մեզ մօտ յատկա-  
պէս այս խորհուրդին համար, որ պէտք է ճշշ-  
մարիտ հաւատացած լինէք մեզ, որ մենք մեր  
ամբողջ գերգաստանով ցանկանում ենք քո  
բախտաւորութիւնդ, ևս սրտանց ցանկանում  
ենք մեր նանտիսը տալ քեզ և քեզ եղբայրացնել  
մեզ հետ եթէ միայն դուք կատարած կլինէք  
մեր խնդիրը, այն է սպանէք էղիլշէին։ Հիմայ  
դուք ի՞նչ էք ասում, կարող էք կատարել»։

Բաղդասարը սկզբում չհաւատաց, որովհե-  
տի դէպի իրան այդ բանը անսպասելի էր հա-  
մարում և հենց կարծում էր թէ իրանով ծազր

են անում. այդ մասին մի քանի ըռպէլ լուռ մը-  
նաց:

Ինչու չես խօսում, կրկնեց Սաքանը: Գու-  
ցէ մեզ չես հաւատում:

Ճրշտն ասած, որ չեմ հաւատում. ասաց  
Բաղդասարը: Հէնց կարծում եմ թէ ինձանով  
ծաղր էք անում:

Այդ ի՞նչ խօսք է. թէ ինձանով ծաղր էք  
անում, ասաց Սաքանը, ինչ որ քեզ հետ խօ-  
սում ենք հաւատացած եղիր, որ զուտ ճշմար-  
տութիւն է: Մանաւանդ դուք արժանի էք զով-  
քի և ոչ ծաղրանքի:

Ուրեմն ճշմարիտ հաւատամ ձեզ, ասաց  
Բաղդասարը, որ ձեր ասածները բոլորը ուղիղ  
են: Դէ երբ որ այդպէս է, ասաց Բաղդասարը.  
Կանչեցէք տէր Բարսէղին թող գայ և մեզ կի-  
սապսակ<sup>1)</sup> անի, ես ատահով մնամ, այնուհետեւ  
պարտաւորվում եմ անպայման կատարել այն  
բանը, ինչ որ դուք էք ցանկանում:

Շատ բարի, ասաց Սաքանը. այդպէս էլ  
կանենք: Միայն Նանախը կմնայ մեր տանը մին-  
չև որ դու քո պարտականութիւնդ կատարած  
կինես: Իսկ կատարելուց յետոյ արդէն քո սե-  
փականութիւնդ է, ուր որ ուզես կտանես:

1). Մինչև օրս շատ գաւառներում կատարվում է այդ կար-  
քը: Քահանայի ձեռքով նշտնապրւած զոյգերի կիռապսակ կառնա-  
լը անքակտելի է համարվում:

Նոյն գիշեր իրանցից մէկը գնաց և տէր  
Բարսեղին ծածուկ բերեց իրանց տունը:

Տէր Հայը, ասաց Սաքանը: Մենք հաւա-  
նում ենք Բաղդասարին և սրտանց ցանկանում  
ենք մեր քոյր Նանախի ձեռքը տալ դրան: Քո  
ձեռքով այդ զոյգին կիսապսակ արայ, որպէս-զի  
երկուսի սրտերն էլ ապահով լինեն մինչև իրենց  
պսուկւելու օրին արժանանալը:

Շատ էլ բարի կլինի, ասաց տէրտէրը.  
«Աստուած շնորհաւոր անի: Եւ Աստուած տայ  
այս զոյգին երկար կեանք, խորին ծենութիւն և  
բախտաւորութիւն»: Այս բարեմաղթութիւնից  
յետոյ Բաղդասարին եւ Նանախին միմիանց հետ  
կիսապսակ արեց և կըկին անգամ շնորհաւորա-  
կան բարեմաղթութիւններ անելով նստեց քիչ  
առաջ պատըաստած սեղանի մօտ ու սկսեցին  
ուրախութեամբ կերուխում անել, շնորհաւորու-  
թիւնները անդադար թարմացնելով Բաղդասա-  
րին և Նանախին վերայ:

Գիշերը բաւական անցել էր երբ տէրտէրը  
օրհնեց սեղանը ու գնաց. իսկ Բաղդասարը մը-  
նաց: Սակայն տէրտէրը միանգամայն զարմա-  
ցել էր սրանց բարեկամական անսպասելի դէպ-  
քին համար: Փառք Քեզ Աստուած, այս ի՞նչ բան  
է, մէկքների, բէգէրի, իշխանների, հարուստ-  
ների և աւելի ընտիր երիտասարդների պատկան

Նանախը, այսօր վիճակվում է գզիր Բաղդասարին։ Վերջապէս թէ չար և թէ բարի մի մեծ կարիք երեխ ստիպում է Դոլխանի տղօրցը, որ Նանախը տալիս են Բաղդասարին. այն էլ իրենց կամքով։

---

Տէրտէրը գնաց և հիմայ մենք ու մենք ենք, ասաց Սաքանը։ Հիմայ կարծեմ ապահով լինէս Բաղդասար։ Փորիդ ցաւն էլ Նանախն էր, այն էլ կիսապսակ եղաւ քեզ հետ։ Դու ինձ այն ասիր սպանելուես էդիլշէին թէ ուրիշ որևէ է փորացաւ էլ ունիս։

Միամիտ մնացէք, ասաց Բաղդասարը. համարեայ թէ սպանւած պըծած է։ Միմիայն պէտք է ժամանակ տաք մինչեւ ծառերի կանաչիլը։ Դուք տեսնում էք, որ հիմայ ձմեռ է, նրան սպանել շուտով և ազատւել հեշտութեամբ դըժվար է։

Լաւ թող քո ասածը լինի. ասաց Սարդարը։ Սակայն կամքիդ վերան հաստատ կաց, որ մեր նոր բարեկամութեան պարզութեանը մէջ պղտորութիւն չընկնի, տղամարդին լաւը նա է, որ խօսքին հաստատ կանգնի։ Մանսաւանդ մենք այսուհետեւ եղբայրներենք և ոչ թէ բարեկամ։

Մէլիք էդիլշէի մահւան վճիռը կայացաւ և

կնքւեցաւ Դօլիսանեան եղբայրների տանը, որի  
եղերնական դէրակատարութիւնը իր վերայ վեր-  
ցրեց Բաղդասարը և լուսագեմին դուրս եկաւ  
անէրների տանիցը: Նա դուրս եկաւ լցւած անսահման ու-  
րախութեամբ: Եւ կեանքի աշխարհի ամբողջ եր-  
ջանկութիւնները նա տեսնում էր միայն Նա-  
նախի սիրոյ աշխարհում, և ոչ մի բան չէր  
դտնում որ Նանախիցը բարձր լինէր և քաղցր  
գեղոցիկ լինէր ու սիրելի իրան համար: Փառք  
Քեզ ամենակարող աստուած, այս ինչ երջան-  
կութիւն էր, որ վիճակւեց ինձ, այս ինչ բախ-  
տաւորութեան փայլուն պսակ էր, որ Քո սուրբ  
Զեռքովը զբիր իմ զլիսին, որով ծաղկելու է իմ  
հոգիս ու մարմինս և ես փառաւորվելու եմ նո-  
րանով, վայելելու եմ նրա սիրոյ քաղցր երջան-  
կութիւնը: Այժմ ես ինձ երջանիկ եմ համա-  
րում, սրովհետեւ այսուհետեւ ես մտնելու եմ  
կեանքի միսիթարութեան և վայելչութեան աշ-  
խարհը: Ահա և այսպէս զոհացողական մաղ-  
թանքներով Բաղդասարը իւր վիճակից բաւակա-  
նացած փառք էր տալիս Աստուծուն, որ մէլիք-  
ների, բէգերի և իշխանազունների արժանի Նա-  
նախը վիճակել էր մէկ իրան նման ստոր ծա-  
գում ունեցող հասարակ երիտասարդի:

Մ Ե Լ Ի Ք Լ Թ Ե Յ Ե Ս Պ Ե Ր Ա Բ Ի Լ Ե Ր :

Էղիլշէի մէլիքութեան ութերորդ ամիս անցել էր, նա ոտ էր դրել իններորդ ամսին։ Անցաւ բքաբեր ձմեռը և յաջորդեց նրա գարնան տար եղանակը։ Ծաղկաբեր էր և խիստ չքնազ այս թւի գարունը։ Դալարազուարթ բոյսերը իրանց կանաչ ծղօտների վերայ ծաղկած գլուխներով տատանւելով և կրկին ուղղելով զմայլեցնում էին նայողին և զրաւում էին մարդու ուշքն ու միտքը։ Մէկ գեղեցիկ առաւօտ էր։ Մէլիք էղիլշէն հողաթափերը հագած և փաշային պարզեած կարմիր խալաթը ուսերին զցած գընաց գէպի եկեղեցուն մօտ գանւող բանջարանոցը։ Մէլիքին հետեւում էր Լալէյվազը, որպէս թիկնապահ։ Գարնանային շաղաթաթախ առաւօտը իւր փառաւոր հրաշալիքով մէլիքին ձգեց գէպի իրան և ախորժակ տւաւ բնութեան շնորհած փառքը վայելելու։ Գիշերային լուսնից ցողւել էր բանջարանոցի նոր կանաչած և քիչ բարձրացած ուսելու կանաչիքը։ Իսկ լոյս առաւօտեան արեգակի շողերը ընկել էին ցողաթաթախ բանջարեղէնների վերայ և պսպղում էին թանկազին քարերի նման։ Էղիլշէն տեսնելով բնութեան այդ հրաշւի զարդարանքը, մտաւ բանջարանոցը կրկզեց մարդերի մօտ ու սկսեց քաղանանել բանջարները։ Էղիլշէին համար այդ

օրը իւր կեանքի բոլոր օրերից ամենաթանկազին և ամենագուշեկան օրն էր, որը քառորդ ժամից յետոյ սևանալու էր գլխին և վերջ էր տալու կեանքին, ճանապարհելու էր գէպի գերեզման։ Դեռ իրան կարճ ապագայից տեղեկութիւն չունէր և դեռ լցւած էր որտի բերկրանքով։

Ծառերը տերեակալեցին, արտերը քաղհանելի եղան, խոտերը բռնակւելով հարւեցան և ծաղիկները բացւեցան։ Ամենայն մէկ շնչաւոր իրան համար ապաստանարան գտաւ։ Անտառները հրաւիրում էին չարտգործներին և իրենց տերեախիտ ծոցերում պաշտպանութիւն էին խօստանում նրանց։ Խնքնազգացումը արթնացըրուց սիրակաշառ Բաղդասարին։ Այ լաւ օր և բարեպատեհ վայրկեան, ասաց Բաղդասարը։ Եղիլշէի կեանքին վերջ տալու համար։ Եւ նա սկսեց լքցնել իր ղարաբինայ ատրճանակը և վառոտի վրայով գցեց երկու գնդակ։ Յետոյ լքըրեց հրացանը. սովորական կերպով կախեց դաշնյը։ Ակսեց կապոտել հագին լայն շալվարի ծայրերը և պնդացնել տրեխների տրեխտանները։ Այս ամեն պատրաստութիւնից յետոյ ետեի կողմից կախեց վառօտեղջիւրը, կրծքապատով կապեց գնդակաշաշարանը եւ հրացանը ուսին գըցելով կանչեց Եղիլշէի վեց տարեկան փոքր տըղին ասելով. «Մանուչար գնանք բանջարանոցը

քեզ համար ծիտ խփեմ։ Մանուչարը որպէս երեխայ, ուրախացաւ եւ բռնեց Բաղդասարի փէշիցը անդադար ասելով, դէ՛ ծիտ խփիր ինձ համար, ծիտ խփիր իեձ համար։ Ուստի հէնց այսպէս էլ ասելով Մանուչարը և Բաղդասարը միտախն գնացին մտան բանջարանոցը։

Ի՞նչ կայ. ասաց էղիլշէն. երեխան ինչու համար է քնձքնձում։

Ասում է ծիտ խփիր։

Ասում է խփիր էլի։

Այս րոպէխս, ասաց Բաղդասարը. ատրճանակը ուղղելով էղիլշէն թիկունքին. Կայծահանը խփեց, կայծառը վառվեցաւ բայց ատրճանակը չբացւեց։ Նոյն րոպէխն էղիլշէն երեսը շրջեց և տեսաւ, որ Բաղդասարը ձեռքի ատրճանակը պարզել էր ուղիղ իր թիկունքին և բարեխախտաբար չէր բացւել։ Տօ՛ անիծւած, ինչու ես ուզում ինձ սպանել. ասաց էղիլշէն. Կեանքումս քեզ ի՞նչ վատութիւն եմ արել։

Մէլիք այդ ի՞նչ զրպարտութիւն է, ասաց Բաղդասարը, որ գցում ես ինձ վերայ. միթէ ես կհամարձակւեմ քեզ սպանել. դու ի՞նչ վատութիւն ես արել ինձ բացի լաւութիւնից։ Եթէ այդպէս բան անելու լինեմ, ձեր տասն եւ հինգ տարւան տւած աղուհացը ինձ կը քուացնի. շատ մեղք է քեզ համար այդպէս խօսքեր մի խօսիր։

Տօ անիծւած, ասաց Եղիլշէն. Ես իմ տչքուվըս տեսայ, որ ատրճանակդ պարզել էիր ուղիղի իմ թիկունքին, ինչու ես ինձ խաբում և գեռ զրադարսող էլ ասում:

Այս, այդպէս է. ասաց Բաղդասարը: Ես թէկ ձեռքս պարզել էի ձեզ վերայ, բայց ուզում էի քո դիմաց գանւող չափարին վերայ ծրտերին կրակել իմ ատրճանակը եւ ոչ թէ քեզ էի խփում: Մանաւանդ աչքովդ տեսնում ես, որ Մանուչարը լաց է լինում թէ ինձ համար ծիտ խփիր: Մէլիք, վառօտի վրայով գարի էի ածել եթէ քեզ դիպչելու էլ լինէր վսաս չէր տալ: Այս խօսքերը ասելու միջոցին Բաղդասարը սկսած փոխում էր իւր ատրճանակի կայծառի վառօտը եւ հուատացնում էր Մէլիքին, որ իրան վերայ ատրճանակ չէր պարզել: Եղիլշէն հաւատալով Բաղդասարի երդմանը, բաբախող սրտով երեսը շրջեց գէպի մարզը եւ գարձեալ շարունակեց իւր քաղանանը: Երեսը շրջելուն պէս բացւեց Բաղդասարի ատրճանակը եւ գլնդակները Եղիլշէի մէջքից դիպչելով անցան կըծքովը: Եղիլշէն սկսեց թաւալել ցաւալի կերպով եւ վարդագեղ արիւնով ներկել կանաչ մարգերը: Աղան մարգերի մէջ թաւալելու ժա-

մանակ Լալէյվազը<sup>1)</sup> հէնց կարծեց թէ շտու սիրելէն է թաւալում. «Աղըղը-աղայ, բըբըբը-բօստանը խըխըխը-խարաբ Էյէյէյէ-Էյլամայ», ասաց նա և, աղային ետեիցը բռնելով մարդիցը հանեց և տեսաւ որ արդէն նա հոգին աւանդել է. Երբ ատրճանակի ձայնի վերայ մարդիկ սկսեցին հաւաքւ՛, վիճակով պատրաստւած Բաղդասարը օր ց' ուեկով փախաւ գիւղից ներքե ջրաղացի ձորի ացառուտներին մէջ թագնըշվեցաւ. Երբ որ մութը բոլորովին պատեց, դուրս եկաւ իր թագստատեղից եւ գնաց Կօրու<sup>2)</sup> գիւղը եւ այն գիշերը մնաց Սեւունց Հասրաթի տանը, որը մի քաջ մարդ էր և միշտ գործ ունէր աւազակ մարդկանց հետ:

Թութակենց ժառանգները մարդիկ հաւաքեցին ու գնացին Ջրաղացի ձորի ամբողջ մացառուոր պորտեցին, որ Բաղդասարին բանեն սպանեն, բայց չգտան: Նա արդէն Սեւունց Հասրաթին տանն էր գտնվում եւ Թութակեանցներից ոչ մէկը չէր կարող հաւտատալ, որ Բաղդասարը Կօրու գնացած և Սեւունց Հասրաթի տանը սպաստանած կլինի:

Հասրաթը Բաղդասարի թագուստը ապահո-

1). Ականջներից շտու խուլ էր, և խօսելուս սաստիկ կակազում էր. այնպէս որ խօսքը բոլորովին դժվար էր արտասանում: Հէնց կակազ լինելուն համար էին ուալ>էյվաղ-(համը եյվաղ)-ասում: —

2). Հինգ վերստ հեռու է Խնձորէսկից գէպի արեմտահարաւ:

վելու համար անտարբեր չմնաց։ Նրա համար մէկ յարմար և ամուր տեղ<sup>1)</sup> գտաւ տարաւ այնտեղ և չորս ամիս կերակրելով նրան պահպանեց։ Պատւիրեց Բաղդասարին, որ ցերեկները միշտ այնտեղ մնայ իսկ զիշերները գայ իրան տունը։ Սակայն Բաղդասարը իր թաղստատեղը երկար չմնաց, որովհետեւ Սկունց Հասրաթի հինգ կնիկներից<sup>2)</sup> մէկը Խնձորէսկեցի էր և Թութակենց հետ մօր կողմով բարեկամութեան կապ ունէր, գաղտնի լուր տւաւ Թութակեանցներին, որ արդէն չորս ամիս է Բաղդասարը թագնւած է Կօրուայ Քերծի կարմունջի տակին, կարող են դալ և բռնել նրան։

Թութակեանցները այս լուրը լսելուն պէս գնացին Մաղաւուզին<sup>3)</sup> իրենց ծանօթ Ղարաչոլու քրդերիցը մինչև յիսուն հրացանաւոր մարդ բերին գիւղը, որ գնան Բաղդասարին բռնեն։ Սակայն Բաղդասարը կարծես իրան գըլխին գալիքին համար գուշակող դառաւ։ Նա Խընդրեց Հասրաթին, որ գնայ Խնձորէսկ և տեսնէ իր մասին ինչ ձայներ կան և ինչ են խօսում Թութակեանցները, որովհետեւ ինքը վատ երազ

1) Բնութիւնից կերտաւծ մի քերծէ կարմնջաձև տակը կամարաձև ահագին ճեղք ունի ուր անցուղարձ են անում մարդիկը։ Գտնվում է Կօրուայ ձորի աջ ափին։

2). Հասրաթը բացի իր օրինաւոր կնոջից ունէր նաև չորս կին որոնց պահում էր ապօրինի կերպով։

3). Հայոց հին Հարճանք գաւառն է, Շահաբբասը հայերին

է տեսելու Հասրաթը հեծեց իւր սկ ձին և ճանապարհուեց գէպի Խնձորէսկ։ Նա երբ որ հասաւ Նահատակ սրբատան մօտ, այնտեղից նայեց տեսաւ, որ Թութակենց դռները և տան կըտուրները լցւած են հրացանաւոր մարդիկներով։ Եւ որպէս-զի գիւղումը կասկած չտան. են, Հասրաթը մտաւ գիւղը և հարցըրուց իմացաւ Թութակենց դռների հաւաքւած մարդկանց պատճառը։ Նա իս' լոյն դուրս եկաւ Խնձորէսկից և գնաց Բաղդասարի մօտ։ Բաղդասար, ասաց Հասրաթը, այ տղայ դու իմաստուն ես. ինչ էիր իմանսւմ քո զլսիդ կատարւելիք գէպքի մասին, որ ինձ ուղարկեցիր Խնձորէսկ թէ զընայ ինձ համար մէկ տեղեկութիւն իմտցիր և լուր բեր։

Ի՞նչ կայ Հասրաթ, ասաց Բաղդասարը դուցէ գալիս են ինձ բռնելու։

Այո, գալիս են քեզ բռնելու. ասաց Հասրաթը։ Շուտով զլսիդ ճարը տես. Թութակենք գնացել են Մաղավուզի ղարաչօոլու քրդերից յիսուն հրացանաւորներ են բերել, նրանց հետ խառնւել են իրանց ազգականներն ու բարեկամները և այս ըոպէիս բոլորը կթափւեն քեզ վերայ։

---

Գերի վարելուց յետոյ Քուռ գետի Քօլանի քրդերը եկան հայոց տեղերը մտան և իրանց համար բնակութիւններ հաստատեցին։ Սակայն «Հարջանքի» տեղ նրանք «Հաջիսամլու» ասացին։

Բաղդասարը այս լուրը լսելուն պէս Հաս-  
րաթի Խորհուրդով գուրս եկաւ իր թագստա-  
տեղից ու փախաւ զէսի Շէնքեր զիւղը մինչև  
ջառչի Փանահի խան դառնալը նա մնաց այնտեղ  
և պարապվում էր աւագակութեամբ։

Բաղդասարը փախչելուց կէս ժամ հաղիւ  
թէ անցած, ահա Թութակեանցների հրացանա-  
ւորները շըջապատեցին Կօրուայ կարմջի շուրջը։  
Նրանք վստահանալով իրանց մարդկանց շատու-  
թեանը յանդզնեցին մինչև անդամ մտնել կար-  
միջի ամենախուլ գաղտնի տեղերը ու սկսեցին  
պարտել. բայց ոչինչ և շատ իզուր, որովհետեւ  
Բաղդասարը արդէն փախել ազատել էր Երան և  
զուցէ Կօրիսի գետից էլ զեռ անցած լինէր։  
Թութակեանցները զտան միայն Բաղդասարի  
գատարկ կացարանը, որի մէջ նա ապրել էր  
ցերեկներով։ Ուստի Թութակենց ժառանգները,  
ազգականները, բարեկամները և քրդերը յետ  
դարձան Խնձորէսկ շատ ապաշտած և զլիակոր։

### ՄԻՆՉԻ ԻԻԳՅԱՅԻԹԵԸՆ ՀԵՄՆԵԼՔ ԱՐԴԻՇԱԾՔԻ ՀԵՏԵ- ԻԸՆՔԸ ԵՒ ԻԻԳՅԱՅԻ ԳԵՐԵՆԵԼՔԻ

Սկսեալ Նազիր շահի օրերից, 1733 թւից  
մինչև նորա մունետիկ<sup>1)</sup> ջառչի Փանահին Ղարա-

1). Ջառչի Փանահը ցկառվ Զիւանշիրեցի էր տեղով Սարտ-  
ջալու և ձմեռը ապրում էին Արաքս գետի ձախ ափաւմբ։ Նա  
նաև շահի մօտ մունետիկի պաշտօն էր կատարում բարձր ձայն

բաղում խան գառնալը, 1752 թիւը, Բաղդասա-  
րը իր համար տեղ ընտրեց Շէններ<sup>1)</sup> և Հալիճոր  
գիւղերը, ամբողջ տասն և իննը տարի մնալով  
այն տեղերը։ Նա պարապում էր աւագակու-  
թեամբ։ Նագիր շահի մահից յետոյ երբ որ Պարս-  
կաստանը քայլայման դրութեան մէջ ընկաւ  
և իւրաքանչիւր խան երկիրը իր ձեռքը գցելու  
համար կովում էր մէկը միւսի դէմ, նա տեղա-  
ցի հայերից<sup>2)</sup> մի խումբ կազմեց և Արաքսից  
անցնելով յարձակւեցաւ Ղարադաղի խաների  
վերայ, քշեց նրանց գաշտային անասունների,  
հօտերը, երամները և ձիերի ջոկատները ու  
յաջողութեամբ կրկին անցաւ Արաքսի ձախ ա-  
փը և ահազին աւարով մի քանի օրից յետոյ վերա-  
դարձաւ ու գնաց Շէններ։ Նա մի քանի ան դամ  
ընդհարումներ է ունեցել Ղարադաղի Քեազում  
խանի եղբօր Աղախանի հետ։ Ճակատամարտել  
է նոյնպէս նոյն տեղացի Մամմադ խանի դէմ,  
դարձեալ յաղթութիւնը տանելով քշէլ է նրանց  
անասունների հօտերը և այլն։ Բաղդասարը մի-  
ևնոյն ընկերներով անցաւ Պարսկաստանը և  
ունենալու շնորհիւ Սակայն Նագիր Շահից յետոյ նոտ բախտ ու-  
նեցաւ ամբողջ Ղարաքաղի խանը գառնալու։

1). Բաղդասարը իւր փախոտականութեան տարումը Նա-  
նակիր տարաւ իւր մօտ, և վայելում էր նրա քաղցր սիրոյ երջան-  
կութիւնը Շին ճանաչելուց և ինձ մօտ բերելուց յետոյ, Նանակի,  
տուում էր Բաղդասարը, ես որբան վտանգաւոր գէպքերում ճակա-  
տամարտել եմ ինձանից տասն անգամ քաջ հերոսների դէմ, եթէ  
ես նրանց չեմ յաղթել և հազիւ թէ ինձ պաշտպանել եմ, այսու-

ասպատակեց Ռւբմու<sup>3)</sup> և Սալմաստի զաւառները և ահագին աւարով դարձեալ վերադառձաւ Շէհներ:

Ինչպէս որ գրել ենք, Բաղդասարը տասն և իննը տարի մնաց Շէհներ և Հալիճոր գիւղերում և տասն և իննը տարւայ ընթացքում նա պարապեց աւազակութեամբ և աւարառութեամբ: Սակայն Փանահ խանի օրով<sup>4)</sup> նրա բոնած ընթացքի պայմանները փոխւեցին և գործը երես շրջեց գէպի բարին, որով Բաղդասարը նորից փայլուն բախտաւորութիւն գտաւ: Քուռ գետի ափերում ապրող Քեօլանի քրդերը իրանց աւազակային վոհմակներով անդադար յարձակումներ էին գործում Փանահ խանի գիւղարայքին վերայ և մեծամեծ մասներ էին տալիս գիւղացիներին, քըշում էին նրանց տավարը, ոչխարը, ձիերը, և գոմէշները, մինչև խակ մանում էին գիւղերի մէջ և թալանում էին տները: Ամեն օր խանի մօտ գանգատաւորներ էին գնում քեօլանիների ձեռքից: Խանը ուշադրութեան էր առնում գիւղացիների բողոքը և զինւորներ էր ուղարկում

ամենայիւ չեմ էլ յաղթւել և աղատւել եմ անվասու: Ինձ վերայ կարկանդակի պէս թափւող սրերի գէմ ես իմ սրի արու կազմը տալու միջացներում իմ սուրսչի կոտրել և իմ թիս ու ձեռս չի վիրաւոր-գել: Եւ իմ այս բարը աջողութիւնների տուածնորդողը քո բախտ է եղել: Այժմ ինձ փայլուն բախտի թաղաւորութեան մէջ եմ աըդ է եղել: Այժմ ինձ փայլուն բախտի թաղաւորութեան մէջ եմ պահաւմ և իմ տմբողջ կեանքսվս պարտական եմ քեզ:

2). Մէկ քանիսի անունները ըստ աւանդութեան որանք են Օւսե Դառասէն, բաջ Բհաթուր, Թափա, Սաթի, Կօհօզ Սարի,

որ կոտորեն քեօլանի քրդերին, բայց շատ անյաջող էր անցնում: Երբ որ խանը քեօլանիների յարձակումների դէմը առնել չկարողացաւ և ձանձրացաւ, նա մտածեց պատրաստել յայտնի քաջերից մի խումբ, արշաւել նրանց վերայ, գուցէ յաջողւի վերջ տան նրանց և խաղաղի երկիրը այդպիս աւերիչ ստահակներից: Ուստի խանը իւր նպատակը կատարելու համար, հրամայաբար բոլոր հայ գաւառների գիւղերից և թուրք գիւղերից ամեն մէկից էլ մարդիկ ուզեց և տարաւ իւր մօտ Շուշի: Հայերը վախենում էին, կասկածելով թէ մի գուցէ մեզ կոտորել է տալու: Բայց ջիւանշիրեցի քաջերը, որոնք միշտ խանի մօտն էին լինում. հանգստացրին հայերին, որ բոլորովին անհոգ մնան, խանը չարցանկութիւն չունի հայերի վերայ կատարելու համար, միայն ուզում է երկրի քաջերից մի խումբ կազմէ և գնայ քեօլանիներին պատժելու: Եւ այսպէս երբ բոլոր հրաւիրուածները<sup>1)</sup>)

Սարւ ողմէրբար, Դաբակաչայ Մէլքոն: Օժաւ (ուժեղ) Բօլե Շէնչերեցի, Դալւ Սաքան, Շէնհերեցի.

3). Ուրմին Բաղդասարի ծննդավայրն է: Նրա հայր Բաբոն Ուրմիցի էր: Սակայն չգիտենք թէ ինչ աղետից էր հարկազգրւել, որ վերցրել էր իր 10 տարեկան փոքրիկ Բաղդասարին եւ Ուրմից փախել էր եկել Խնձորէսկ:

4). Սեփական հոգեր չունէր թէն, բայց մասնաւոր տեղերում հանաչվում էր, որպէս կառավարող տէր:

1). Խանի մօտ հրաւիրված մարդիկը բոլորն էլ ընտիր և նշանաւոր մարդիկ էին և ոչ հասարակ:

հաւաքւեցան Շուշի, խանը հայերի կասկածները փարատելու համար բոլորի առջև ձեռքը դըրեց Ղուրանին վերայ երդւեցաւ, որ իրան գիտաւորթիւն չունի և չի էլ ունենալ հայերի դէմ որևէ մի դաւադրութիւն գործելու, այլ կանչւած են իրան մօտ, որ ամեն մարդ պէտք է իրան զիւղի քաջ մարդին ցոյց տայ խանին և անունը ասէ, որ զրքի մէջ զրվելու է։ Հայերի կասկածը աւելի հաւատական դարձաւ. «Երեխ գաւառների հայ քաջերին կոտորել է տալու, ասացին հայերը—և ուզում էին իրանք կոտորւել քան թէ իւրաքանչիւր հայ ցոյց տար խանին իր զիւղի քաջը։

— Դուք Երկիւղ միք անիլ, հայեր, ասաց խանը։ Ես արդէն երդւել եմ և կրկին անզամ երդվում եմ Ղուրանով, որ դուք կանչված էք այստեղ ինձ մօտ յատկապէս այս գործին համար և ասեմ ձեզ թէ ինչէ։— Քուոի անտառում ապրող քեօլանի քրդերը իմ երկիրը քարուքանդ են անում. ամեն օր զիւղերից մարդիկ են զալիս և ինձ գանզատվում են քեօլանի քրդերի ձեռքից, թէ մեր ոչխարը քշեցին մեր զիւղը թալանեցին։ Իսկ միւսը մի ուրիշ զանզատ է անում և վերջապէս ձանձրացել եմ զանզատներից։ Այժմ ուզում եմ երկրի նշանաւոր քաջերից,— հայերից և թիւրքերից—մի խումբ պատրաստեմ և ես ենքս անձամբ առաջնորդեմ բոլորին, որպէսզի

կարողանամ նրանց վերջ տալ տամ, Այժմ հաւատացէք ինձ, իմ ցանկութեան ոլատկէրը այսէ, որ ցոյց եմ տալիս ձեզ»:

Այս խօսքերը տաելուց յետոյ հայերի կառկածը փարատեց և ամեն մէկ հայ սկսեց յայտնել իրանց գիւղի քաջ տղամարդին և տաել անունը և ազգանունը, որը գրվում էր գրքի մէջ:

Վերջապէս հերթը ընկաւ Խնձորէսկեցի Բաբալորենց ներկարար Բաղդասարին, որ նա էլ պէտք է իրանց գիւղի քաջերը ցոյց տար. Մէկ քանիսի անունը տալով Բաղդասարը յիշեց իրան անւանակից Բաբու որդի քաջ Բաղդասարին, որը պարապում էր աւազակութիւնով և երկրի մէջ քաջ անուան մեծ հոչակ էր ստացել, և ազրում էր Շէններ. Ուստի Բաղդասարը թէկ ուզեց յայտնել վերջինիս անունը, բայց մէկ էլ մտածեց թէ մի գուցէ նա չի գայ և լոեց:

Խանը զգաց, որ Բաղդասարը ուզեց ևս մէկ մարդու անուն տալ, բայց մէկ էլ չտաւաւ. Խանը հետաքրքրվեց և ստիպեց Բաղդասարին, որ իր սրտում թազցրած բանը անպայման պէտք է ասէ, եթէ ոչ հետեանքը վատ կլինի:

Խանը ազրած կենայ. ասաց Բաղդասարը: Ես ուզում էի ձեզ յայտնել մէկ քաջ երիտասարդի անուն, բայց մէկ էլ աւաբակուսեցի ասելով, մի գուցէ նա չի գայ և ես խանի մօտ ամօթալի մնամ: Եւ այս քաջ տղամարդը խնձո-

րէսկէցի — Ռւլմեցի Բաբուն տղան է. որը արդէն տասն և իննը տարի է ապրում է Շէհներ գիւղումը և պարապվում է աւազակութեամբ։

Հայ, գրա անունը ես լսել եմ, ասաց խանը։ Բաղդասար դուք շատ սխալ էք. ինձ հարկաւոր են այդպիսի մարդիկը, որ միշտ քաջագործութեան և զինաշարժութեան մէջ են գլունվում։ Նստակեաց քաջերը ինձ շատ չեն պէտքը։ Դու ինձ այն ասիր, այն երիտասարդը, որ Շէհներ է ապրում և պարապում է աւազակութիւնով, մեղք է գործել թէ հէնց իր կամքովն է աւազակ դառել։

Մեղք է գործել, ասաց Բաղդասարը։ Նա սպանել է մեր գիւղացի մէլիք եղիլշէին։ Ուստի գրած քաջերի անունների շարքումը խանը գրիլ տւաւ նոյնպէս քաջ Բաղդասարի անունը։ Եւ վերջապէս բոլոր քաջերի թիւր հասաւ մինչև 170 մարդու — թէ հայ և թէ թիւրք։

«Հայ և թիւրք, — ինձ մօտ կանչւած մարդիկ. այսօրւանից արդէն դուք ազատ էք, ասաց խանը։ Միայն իւրաքանչիւր մարդ թէ հաւ և թիւրք թող իրանց քաջերին հաւատացնեն, որ խանը իրանց կանչում է այս գործին համար, որը արդէն յայտնել եմ ձեզ բոլորիդ և դուք գիտէք»։

Մարդիկը հեռացան և ամեն մէկը գնուց ռէաի իր գիւղը։ Խոկ Խնձորէսկեցի ներկարար

Բաղդասարին թոյլ չտւառ գիւղը գընալու. նրան որպէս պատանդ պահէց իր մօտ, և Խնձորէսկից նորից 3 մարդ բերել տւեց Շուշի իր մօտ և յետոյ Բաղդասարին թոյլ տւառ այսպէս ասելով,—դուք ինչպէս որ ասել էք այդ քաջ երիտասարդի անունը և գիտէք նրա տեղը, ասաց խանը<sup>1)</sup>, և ծանօթ էք թէ իրան և թէ նրա բնաւորութեանը, կդնաք ձեր գիւղը, կյայտնէք ձեր բոլոր հասարակութեանը, որ խանը ուզում է Բաղդասարին և անպայման նըրան պէտք է բերէք յանձնէք ինձ, որ յետոյ ես այս երէք մարդկանցը թոյլ տամ. իսկ եթէ անկարող կլինէք իմ հրամանս կատարել, այս մարդիկը այստեղ կփթեն բանտումը. Այսուամենայնիւ թէ Բաղդասարին ինչ միջոցով էք բերելու այդ դուք գիտէք:

Խանը ապրած կենայ, ասաց Բաղդասարը: Ձեր հրամանը մեզ համար գուցէ դժվարանայ, գոնէ եթէ դուք Բաղդասարին հաւատացնելու համար ինձ տայիք մի փոքրիկ նամակ, որով յայտնէիք, որ իսկապէս դուք էք ուզում իրան,

1). Փանահը խան գառնալուց յետոյ իւր որդի հբրահիմին «աղայ» կարգեց Խնձորէսկու վերայ, 1756—1760 թիւը Բայց հբրահիմը (որը յետոյ Ղարաբաղի հբրահիմ խանը գառաւ), մինչեւ աղայ նշանակւիլը, նա Խնձորէսկու թիւրք մէլիք Աղաջանի տոհմը «Հնչացնելու համար իր այդ փառասիրական ձգտումը ծածկց բարեկամական յայտնի մեծարանքով, որով մէլիք Աղաջտնին կանչեց տարաւ Շաւշուայ բերդը և նրան խեղպիլ տւաւ: Սակայն երբ 1761 թիւն Ուրմաւ Օգչար Փաթալի խանը յարձակւեցաւ Ղարա-

ևս համողվտծ եմ, որ մեր գործը դուք կհեշտացնէք և մեզ կյաջողէր նրան հեշտութեամբ բերել ձեզ մօտ:

Շատ բարի, ասաց խանը: Այդ ևս կարելի է: Ուստի լսու ժողովրդական աւանդութեան խանը իւր միրզայի (գրազիր) ձեռքով գրել արւաւ հետեւեալ նամակը. որի մէջ բովանդակված էր հետեւեալը».

---

ՆԱՄԱԿ ՓԱՆԱՀ ԽԱՆԻՑ ԱՌ Ի ՔԱԶԻՆ ԲԱԲԱ-  
ՅԻ ՈՐԴԻ ԲԱԴԴԱՍԱՐԻՆ, ՈՒԹ ԱՅԺՄ ԼԻՆՈՒՄ  
Է 'Ի ՇԵՆՀԵՐ. ՅՈՅԺ ՈՂՋՈՅՆ»:

«Ով Բաղդասար. Խնձորէսկեցի ներկարար Բաղ-  
դասարի ասելովը, լսում եմ, որ դուք Խնձորէսկում  
չեք ապրում այլ ապրում էք Շենհեր գիւղումը, Թու-  
թակենց մէլիք եղիշշեն սպանելու համար: Վասնորոյ  
ափասում եմ ձեզ և ցանկանում եմ ձեզ երես դուրս  
բերել և շնորհել ազատ և ապահով կեանք: Ուստի  
Խնձորէսկուց մարդիկ են գալու քեզ մօտ և նրանք  
քեզ ինձ մօտ բերելու համար ինչ որ ասեն դու ան-  
կանկած հաւատայ նրանց և եկ ինձ մօտ: Քիօլանի

---

բազի վերայ, զբաւեց Շուշուայ բերդը և ձեռքակալեց Փանահ խա-  
նին իր ամրող ընտանիքով, այդ ժամանակ մէլիք Աղաջանի եղ-  
րայրները իրանց եղրօր վրէժը լուծելու համար Խնձորէսկում  
ուղեցին սպանել իրրահիմ խանին, որից վրէժ լուծելով հանդերձ  
գիւղը գարձեալ մնար իրանց իշխանութեան տակ ինչպէս իւսում  
էին Փանահ խանից առաջ. այնուամենայնիւ վերջիններիս շուջով-  
զեց հասնել իրանց սպասակին, որովհետեւ իրրահիմ աղային սպա-

քրդերը իմ ժողովրդիս շատ վնասներ են տալիս ու զում եմ քաջերից մի խումբ կազմել և բոլորին ինքն առաջնորդելով գնամ և նրանց պատժեմ։ Ուստի շատ ցանկալի է ինձ, որ դուք էլ լինեք իմ ընտրած քաջերի շարքումը»։

«Փանահ խան».

Նամակի տակ դրված էր խանի կնիքը։

Ներկարար Բաղդասարը խանից ստանալով նամակը ճանապարւեց գնաց գիւղը։ Վաղը առաւ տեսան նա գուրս եկաւ գիւղամէջ և բոլոր հասարակութեանը յայտնեց այն ամեն բաները, ինչ որ տեսել էր խանի մօտ և ինչ որ լսէլ էր խանից Բաղդասարին համար։ Միւս օրը հաւաքւեցան գիւղի նշանաւոր մարդիկը և Բաղդասարին վերայ մի աղերսագիր գրեցին տւին Սարդարենց տէր Վանէսին մի քանի երկելի մարդկանցով միասին և ներկարար Բաղդասարի հետ ուղարկեցին Շէններ Բաղդասարին մօտ երեկոյեան քահանան ծոցից հանեց աղերսագիրը և ներկարար Բաղդասարն էլ հանեց Փանահ խանի նամակը երկումն էլ կարդաց Բաղդասարին մօտ։ Բաղդասարը եղը որ տեսաւ որ նամակների միտքը յարմար են միմիանց և բերող-

լու համար որքան պարացին չգտան։ Խնձորէսկեցի Բարտարանց ներկարար Բաղդասարը նրան պահեց իր տանը, գիշերով տարաւ Շուշուայ բերդը յանձնեց հօրը, Փանահ խանին և իբրահամին ազատեց մահից, որը յետոյ Ղարաբաղի Հայոց «Հինդ-Մէլիքութիւնների կարծանիչո գառաւ»։

2) Փանահ խանի ժամունակ Աղդամումը թիւրք բնակիչներ շեն եղեւ Աղդամի այժմեան թիւրքերի նախորդները իբրահիմ

ներն էլ վստահելի անձնաւորութիւններ են, անկարող եղաւ մերժել և պատրաստականութիւն յայտնեց գնայ ուր որ իրանք ցանկանում են. Եւ այսպէս վաղը առաւօտեան ուրախ սրտերով լրցւած Բաղդասարը և Խնձորէսկուց գնացած մարդիկը ճանապարհւեցին Շէհներից դէպի Խնձորէսկ: Երբ որ նրանք հասան Քումբաթի ձորը, նրանցից մէկը իւր ձին սրարշաւ քշեց հասաւ Խնցորէսկ և յայտնեց, որ Բաղդասարը գալիս է, աեղ պատրաստեն: Այդ լուրը համելուն պէս պատրաստւեցան խաչ ու խաչվառով և քահանայով գնացեն Շակ-քար կոչւող տեղը դիմաւորեցին Բաղդասարին, (մի աւազակի). որին նոյն յարգելի հանդիսովն էլ տարան դիւղը: Գիւղումը երեք օր պահեցին նրան և պատւեցին շատ փառաւոր կերպով: Շատ փառաւոր հագնւած էր նոյնպէս Բաղդասարը ինքը և նստած էր մի փառաւոր ոախտած ձիու վերայ: Երեք օրից յետոյ ներկարար Բաղդասարը և գիւղից մի քանի յայտնի մարդիկ վերցրին Բաղդասարին և տարան խանին մօտ:

Խանը ապրած կենայ, ասաց ներկարար Բաղդասարը. ահա այդ էլ քո ուզած քաջ Բաղդասարը, որի համար մեր մարդիկը, որպէս պա-

---

խանի օրով գաղթել ևն Թիվլիզու Բօրչտուի զտաւոից: Մինչև Թիվլիզի գաղթիւը Աղքամի տեղը իւր ընդարձակ աշխայքով պատկանում էր Ղարաբաղի Խաչէն գաւորի հարազատ տիրապետող Հայողի-Հաստանջալալեան տռհմի մէլիքութեանը:

տանդ պահում ես մօտդ, հիմայ խօ բաց կթող-  
նես:

«Բաղդասար, ասաց խանը: Դուք իսկապէս  
իրաւունք ունէք իմ գէմս այդպէս խօսելու: Եւ  
ես հիմայ շնորհակալ եմ ձեզանից, որովհետեւ  
դուք կարողացաք կատարել այն, որի համար  
յոյս չունէի ինձ, որ կը կատարէր»:

Խանը հրամայեց իր ծառաներին գնացին  
Խնձորէսկեցի գրաւ պահած մարդկանցը բաց թո-  
ղին: Այժմ բոլորդ էլ ազատ էք, ասաց խանը  
և կարող էք գնալ ձեր գիւղերը Ուստի Խնձորէս-  
կեցիները գլուխ իջեցրին խանին և ճանապարհ-  
ուցին դէպի խնձորէսկ: Սա մի մեծ ցաւ էր  
մեզ համար. լաւ աղատւեցանք. ճանապարհին  
ասում էին միմիանց:

---

Փանահ խանը գաւառների քաջերին հայ և  
թիւրք բոլորին տեղերը կանչված մարդիկների  
միջոցով հասկանալուց յետոյ, հրամաններ ու-  
ղարկեց գիւղերը, որ բոլոր քաջերը հաւաքւեն  
Շուշի իւր մօտ: Ուստի մինչև մէկ շաբաթը ա-  
մենքն էլ գնացին Շուշի և հաւաքւեցան խանի  
մօտ, որոնց թիւը հասնում էր հաշւի չմտած-  
ների հետ հարիւր եօթնասուն հոգու: Իւրաքան-  
չիւր քաջ եկել էր իր զէնքովը և իւր ձիովը:  
Մինչ գեռ խանը դրադւած էր քաջերը դասաւո-

բելու և նոցա այլ և այլ կարգազրութիւնների որպիսութիւններով, նոյն օրը Աղղամից ոչ այնքան հեռու, Կառկառ զետի աջ կողմին բնակւող թիւրքերից մէկը եկաւ խանի մօտ և յայտնեց նրան, որ իրանց գիւղից ներքե քրդերից կազմւած մի մեծ վոհմակ է երեւացել:

Խանը այս լուրը ստանալուն պէս, առանց ժամանակ կորցնելու իւր ընտրովի քաջերով ճանապարհ ընկաւ դէպի Աղղամ: Աղղամից քիչ բարձր օրը վաճանին հասաւ, որտեղ խանը ուշացաւ քաջերին դասաւորելու և հրանգներ տալու համար: Ուստի խանը այդ տեղ իւր քաջերին երկու մասի բաժանեց և թողեց երկու հմուտ քաջերի զլխաւորութեան ներքոյ: Հայ քաջերի զլխաւորութիւնը յանձնեց Բաղդասարին, իսկ թիւրք քաջերի զլխաւորութիւնը յանձնեց Զիւանշիրի ցեղին պատկանող յայտնի հերոս Դաղալի Իմանին և կարգադրեց, որ Բաղդասարը իւր քաջերով կանցնէ Կառկառ զետի աջ կողմը, իսկ Դաղալի Իմանը կվերցնէ ձախ կողմը, որ և զետի երկու կողմերովը վաթաթւած հոստնքին համեմատ կարչաւեն դէպի ներքե քրդերին յայտնված տեղերին վերայ: Համաձայն խանի արած կարգադրութեան Բաղդասարը տռաջնորդելով իւր հայեական խմբին անցաւ կառկառ զետի աջ կողմը և շարունակեց իւր արշաւանքը զետի հոստնքին համեմատ դէ-

պի ներքեւ. Նոյնը կատարում էր Դադալի իմաստը գհտի ձախ կողմին. Արշաւանքը գետի երկու կողմին կատարվում էր զգուշութեամբ, դանդաղ և լուռ, միայն ձիերի սմբակնը տրոփիւնն էր բարձրանում, այն էլ խուլ կերպով: Գիշերից բաւական անցած Բաղդասարը յանկարծ պատահեց աւերիչ քրդերի մի աճազին վոհմակի, ուր երկու կողմերն էլ խսկոյն կանգառան: Ի՞նչ մարդիկ էր, հարցրեց Բաղդասարը:

— Ահա, այսպիսի մարդիկ ենք, մի անգամից բացւեցան քրդերի հրացանները: Բաւական եղաւ, որ ճանաչեցին իրարու, շարունակւեց գիշերային սթութեան մէջ մի աւագակային, անկանոն և վայրենի կոիւ: Մթութեան մէջ երկու կողմից էլ շատ քաջեր ընկան, բայց քրդերից աւելի շատ: Այնուամենայնիւ կուի առաջին քայլումը քաջ Դադալի իմանը անտարբեր չմնաց: Նու տուանց գէնք շարժելու կառկառի ձախ կողմից անցնում է աջ կողմը և կտրում է քրդերի ետերը: Եւ այսպէս Դադալի իմանը իւր քաջերով առանց հրացան արձակելու, և առանց որևէ ձայն հանելու այնքան մնում են մինչեւ որ լուսանում է: Եւ ահա լուսաբացին քրդերի ետեի կողմից բացվում են վերջինիս քաջերի հրացանները: Քրդերը տեսնելով որ իրանց հետ կատարւող կոիւը այժմ երկու կողմից սկսւեց մնազին շփոթւած: Ուստի մճոեցին խառնվելով

կուելով, կոտորելով և կոտորվելով ճանապարհ  
հարթել և փախչել։ Համաձայնութիւնը իսկոյն  
կայանալուն պէս մերկացրած սրերով թափւե-  
ցան հայերի վերայ։ Առաւօտեան նորածագ տ-  
րեի դէմ սկսեցին շողշողալ երկու կողմերի թըշ-  
նամական մահաբեր սրերը։ Քաջ Բաղդասարը  
հրաշալի դէր էր կատարում իւր սրածութեամբ  
քրդերի դէմ և հերոսներ էին որ ձիերից ցած  
էին զլօրվում։ Գուցէ թէ քրդերի աւելի ճար-  
պիկները հնարաւորութիւն գտնէին փախչելու և  
ազատւելու եթէ քաջ Դադալի Իմանը փոքր ինչ  
ուշ վրահասած լինէր. բայց նա հասաւ և իւր  
քաջերով իսկոյն շրջապատեց քրդերին և ան-  
հնարին դարձրեց Նրանց փախուստ տալու և տ-  
զատւելու փորձ տնելը։ Կուի բորբոքւած տադ-  
նապի ժամանակ Բաղդասարը մի կերպով կա-  
րողացաւ խոյս տալ և բարձր ձայնով հասկացը-  
նել քրդերին, որ բաւական է որքան կուել են,  
հետևանքը աւելի վատ կլինի, թող դադարացնեն  
զէնքը։ «Բարւոք եմ համարում, ասում է նա,  
որ թողէք զէնքերը և անձնատուր դառնաք, եթէ  
ոչ զլխովին կը խորտակեմ ձեր այդ ստահակական  
վոհմակը»։ Զինաթափ եղէք, բարձր ձայնով կո-  
չում էր նոյնպէս Դադալի Իմանը, արդէն ձեր  
կիսից շատը մեռած և վիրաւորված են. իսկ մեր  
շատ մասն արդէն մնում է, ի՞նչ պէտք է անէք  
այ ողորմելիներ»։

Քրդերը երբ որ տեսան հնարաւորութիւն չկայ ազատւելու, թափեցին իրանց զէնքերն և անձնատուր եղան։ Նոյն ըռպէին վրահտուն Բաղդասարի և Դաղալի Իմանի քաջերը ու հաւաքեցին քըդերի զէնքերը. իսկ քըդերին կապուտեցին իրարից և տարան խանի մօտ, որը մի քանի թիկնտպահ քաջերով մնացել էր Աղդամից քիչ վերև մի տեղ եւ տարակուսելով սպասում էր իւր քաջերի եւ բախտի որ կողմի վերայ հակւած յաղթութեան վճռին։ Փանահ խանի ուրախութեանը էլ չափ ու սահման չկար, որ քըդերի բացի կոտորածներից մնացածին էլ իր քաջերը կարողացել էին ողջ-ողջ բերել իր մօտ, որովհետեւ այդ գերի բռնած քըդերը բացի խանին—իրան վնաս տալը և ժողովրդների անասուններն քշելով և տանելով և ուրիշ կողմերով մեծամեծ վնասներ տալը, շատ հակառակ էին Փանտհին—խան դառնալուն և միշտ արհամարանք էին ուղղում նրա սարուջալլսւ ազգատումին և հայհոյում էին։

Խանը տեսնելով հայ և թիւրք քաջերի գործած քաջութիւնն, շնորհակալութիւն յայտնեց բոլորին և վարձատրեց նրանց՝ որին չուխացու տալով, որին արխալուղացու տալով, որին հրացան, որին ձի, որին կով, որին գտակ, որին եղ, որին գոմէշ, որին խալիչայ, և այլ և այլ պարգեւներ բնծայելով։ Դաղալի Իմանին պարզեւա-

արելու ժամանակ. քըդերը անցան Բաղդասարին կողմն և ամեն բան ճշմարտութեամբ յայտնեցին Փանահ խանին, որ առաջին և մեծ վարձատրութիւնը հարկաւոր է Բաղդասարին և ոչ թէ Դադալի իմանին, քանի որ մեր գէմ կռւողը և մեր խումբն խորտակողը այս մարդն է եղել. Քրդերի խօսքին օգնեց և Դադալի իմանը:

— Դուք այսուհետե իմ աջ թեն էք, Բաղդասար, ասաց խանը: Զեր կատարած քաջութեան համար իմ կողմից հարկաւոր է ձեզ մի առատ վարձատրութիւն: Ահա ձեզ տալիս եմ մի պաշտօն եօթ տարի ժամանակով, այն է եօթն տարի ձեզ իւզբաշի եմ նշանակում Խնձորէսկու, Խոտու, Շէններու և Հալիձորի գիւղերի բոլոր հասարակութիւններին վերայ, որ եօթն տարւայ եկամուտներից ինձ խանիս հասնող մասը յատկացնում եմ ձեզ»:

Վերջապէս խանը երկար ու բարակ խօսելուց յետոյ մի սառը աւագակային յաղթութեան փառքով հրճւած հրամայեց ձիաւորւեցին քաջերը, որոնցից մի քանի մարդկանց թուղթ տւառթէ կտանէք թիւրքի գիւղի մօլլային կտաք և նրան կվերցնէք կտանէք մեր սպանւած քաջերի եւ սպանւած քրդերի գիւակներն կթաղեն, որպէս Խոլամի ցեղ թիւրքի հանգստարանում: Խակ սպանւած հայերի գիւակներն պահ տւէք հողին, որովհետեւ ինձ քաջ յայտնի է, որ հայն իր հա-

բազատի դիակը սպանւած տեղիցն անպատճառ  
տանելու է նրա ծննդավայրը :

Այս, խանը ապրած մնայ, ասաց Բաղդա-  
սարը, ասացին եւ միւս հայ քաջերը: Վաղը չէ  
միւս օրն իւրաքանչիւր հայի դիակ իրան գիւղի  
հանգստարանումն կդտնի: Եւ զուցէ մեզանից  
մասնաւոր մարդէկ Դալիցն վերագառնանք զանք  
մեր ընկերների դիակները տանելու:

Այս բարոյական կարգադրութիւնից յետոյ  
խանը ճանապարհուեց գէպի իր բերդը (Շուշայ  
Դալան) տանելով իր հետ քրդերին: Տեղ հասնե-  
լուն պէս խանը, խկոյն չպատժեց քրդերին.  
Նրանց իբրեւ պատանդ այնքան պահեց մինչեւ  
որ իւր ամբողջ վնասն նրանցից ստացաւ, ձիեր  
ոչխարներ, կովեր, գոմէշներ, այծեր, սրանց  
հետ եւ ուրիշ շատ բաներ և յետոյ բոլորին էլ  
գլխատել տւաւ:

---

ԹՈՒԹԱԿԵՆՑ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ԿԱՇԱՌՈՒՄ ԵՆ ՄԵՀ-  
ՐԱԲԵԱՆՑ ՀՍԿԱՅ ԴԱՂՈՒՆ, ՈՐ ՍՊԱՆԷ ԲԱՂԻԱՍԱ-  
ՐԻՆ, ԲԱՅՑ ՏԺԲԱԽՏԲԱՐ ԴԱՂԻՆ ԻՆՔԸ ՍՊԱՆ-  
ՎՈՒՄ Է ԲԱՂԻԱՍԱՐԻՆ ԶԵՌՔՈՎ:

Բաղդասարին իւզբաշութեան փառքի հաս-  
սելն զբանեց Թութակեանց ժառանգների նա-  
խանձը: Նրանց ամբողջ ազգատոհմի թէ արուն և  
թէ էզը, սկսած մեծ ալեւորից մինչեւվերջին եօթ-

տարեկան երեխան բոլորն էլ յղացան Բաղդասարին գաղտնի սպանելու խորհուրդով։ Միթէ մեզ համար անհամուսութիւն չէ, ասում էին Թութակեանցները, որ մեր տան գեադան (ծառան) գեռ բաւական չէ սպանեց մեր հօր եղբայր մէլիք էղիլշէին, այսօր էլ գայ իւզբաշի դառնայ մեր դլխին և չորս գիւղերի հասարակութեանց վերայ։ Պէտք է հառամացնէք, պէտք է քթին ծակերովը հանէք ինչ որ ստացել է մի հայակեր խանից։ Վրէժինդրոթեան շար միտքը խառնւած այրող, մաշող և սիրտ քրքրող նախանձի հետ անդադար տանջում ու լափում էր Թութակեանցների հոգին ու մարմինը։ Մանաւանդ իրանց կարճատե մլլիքութեան շուքն խսպառ ոչնչանալու էր Բաղդասարի իւզբաշութեան նոր տիտղոսի ստուերի տակ, որով միանգամից մեռնում էր իրանց տոհմի յարգանքը ժողովրդեանց մէջ։ Ինչպէս որ նա մեր տոհմի շուքն ու մեծութիւնը կորցրել է, այնպէս էլ էլ պէտք է մենք կորցնենք դորա շուքաւոր անունը մինչդեռ թարմ է, ասում էին Թութակեանցները։

Թութակեանցների նպատակը Բաղդասարին սպանելու կամ սպանել տալու համար երբէք չ'կատարվեցաւ թէև նրանք շատ վռազեցին և ամեն ջանքեր գործ դրեցին ու ամեն տեսակ մահցու ցանցեր սարքեցին նրա դէմ կիրճերում,

անտառներում և ուրիշ տեղերում բռնել և սպա-  
նելու համար սական ինչպէս որ ասեցինք Թութակ-  
եանցների ջանքերը իզուր անցան. Բաղդասարը<sup>1)</sup>  
կատարում էր իրան իւրիւզբաշիութեան պաշ-  
տօնը և ըսկի չեր էլ կասկածում Թութակեան-  
ցների մասին, որ իր կեանքի դէմ արդէն հինգ  
երորդ տարին է, որ մահացու որոգայթներ են սար-  
քում. Վերջապէս Թութակեանցների բոլոր ջան-  
քերը Բաղդասարին սպանելու համար մինչ հինգ  
տարի ապարդիւն անցան: Ուստի վեցերորդ տա-  
րու կիսում, յուլիս ամսին նրանք կանչեցին  
Մէհրաբեանց Դաղուն<sup>2)</sup> իրանց տունը, որը սպան-  
ված էդիլշէյի քրոջ որդին էր, յիսուն փանաւ-  
րադ<sup>3)</sup> փող կաշտոք տւին նրան, որ սպանէ  
Բաղդասարին: Դաղուն աչքերը շլացաւ ստացած  
կաշտոքի փայլով, ուր այդ ժամանակ մեծ գու-  
մար էր համարվում յիսուն փանհնաբադ փողը:  
Դաղին վեցներով կաշտոը խօսաացաւ կատարել  
իր քեռորդկանց խնդիրը: Եւ այդպէս Դողին  
կաշտոքը ստանալուց յետոյ սկսեց հետեւ Բաղ-  
դասարին սպանելու նպատակին: Սակայն մի յար-

1). Պատմում են որ անբարոյական մարդ է եղել: Այսքա-  
նով հանդերձ բաւական բարբարոս և ժողովրդներին զրկանքներ  
տևող: Շատ ժտմանակ զեղեցիկ կանանց բոնի կերպով բռնաբա-  
րում էր, որի համար բաղոքում էին խանին, բայց խանը ուշա-  
գրութիւն չէր դարձնում:

2). Ընթեցսղին թող չչփաթէ անունը, իւր աղջատահմավ  
հայ է և տեսւմ են մինչև այսօր:

3). 15 կոպէկանագ պարսկական արծաթ փող է:

մար միջոցի և մի այնպիսի տեղում սպանելու էր սպասում, որ արիւնը կորչէր և սպանողը ըսկի չերեար մինչև անզամ կասկածանքի մէջ, որովհեակ նա երկիւղ էր կրում մի դուցէ Փանահ խանը խստապահն լինի Բաղդասարին սպանողին համար և ժողովրդին տանջէ, իսկ եթէ ժողովրդիցն էլ մի մարդ հասկանայ, որ ես եմ սպանել Բաղդասարին և յայտնէ խանին, այն ժամանակ և անստարակոյս խանն էլ ինձ գլախատիլ կտայ: Ահա այս կասկածանքը զգշացնում էր Դադուն, ուր որքան կարելի է իւր գործը գաղտնի լինի և այնպէս տեղ, որ միայն ինքն իմանայ: Ուստի մինչդեռ Դադին մի յարմար ժամանակի և մի յարմար տեղի էր սպասում, որ գտնէր և սպանէր և արիւնը կորչէր և ըսկի ոչ ոք չիմանար թէով սպանեց Բաղդասարին, այդըոլոր յարմարութիւն ինքնըստինքնեան կայացաւ: Մէկ օր Բաղդասարը հասարակութեան կողմից ինչ որ մի գործի պատճառով գնալու էր Տաթեի առաջնորդին մօտ: Այս լուրը ստոյգ իմանալով թութակեանց ժառանգները, ծածուկ յայտնեցին Դադուն ասելով—Դադի, դու յարմար ժամանակի և յարմար տեղի ես սպասում, որ գտնես և սպանես այն անիրաւին, Բաղդասարին, ահա քեզ յարմար ժամանակ և յարմար տեղ: Այս քանի օրերումս Բաղդասարը գնալու է Տաթեի վանքը ինչ որ գործով, կը զնաս սախկալ թութանի կիրճումը կապասես մինչև որ նա կդայ քեզ կհանէ և շատ

հեշտութեամբ նրան այն տեղ կը ունես ու կսպա-  
նես: Եւ կարծում ենք թէ սրանից յամար միջոց  
չգտնվի, մինչդեռ ծտոերը տերեած, ծմակը մթին  
և սպանելու տեղը բոլորովին խուլ է<sup>1)</sup>:

Մի քանի օրից յետոյ Բաղդասարը առանց  
թիկնապահի ձիաւորված ու զինված զիւղից ճա-  
նապարհվեցաւ գէպի Տաթև: Հանգի մի բոլորովին  
խուլ անկիւնովը, որսի գնալու պատրվակով ծած-  
կուած և զինւած, Դաղին հետեւմ էր Բաղդասա-  
սարին: Արնուամենայնիւ այն օրը չէր կարող  
հասնէր նրան որովհետեւ Բաղդասարը ձիաւ-  
որ էր իսկ ինքը ստով էր գնում: Այն օրն  
Բաղդասարը գնաց Տաթև և զիշերը պէտք է  
մնար այնտեղ. Դաղին<sup>1)</sup> ալդ զիտէր. իսկ ինքն  
գնաց մնաց Սախկալ թութանի գազանաբնակ կեր-  
ճումը: Առաւոտը բացվեցաւ և արեգակն բար-  
ձրանալով կէս օրւան տեղից թէքւեց գէպի երե-  
կոյեան հանգստութեան վայրը: Բայց Բաղդա-  
սարը չեկաւ: Օրն մթնեց զիշերացաւ և լուսա-  
ցաւ և էլի մթնեց: Բաղդասարը չեկաւ: Երկու  
օր ու զիշեր Դաղին որպէս մի գարանամուտ

1). Մէկ նեղ անցք է Տաթևի գիմաց գէպի տրեելք, ուր Հալիձորից գնալիս Սատանի եօխիշի սկզբումն է գտնվում:

2). Դիւղի ժողովրդական աւտոնութիւնը այդ մարդուն հա-  
մարում էր մի հսկայ չափից գուրս յաղթանդամ, պարթե և շատ ու-  
ժեղ: Երեսը լայն, քիթը մեծ, զլուխը մեծ, մի խօսքով երկրորդ Գող-  
իաթ: Սակայն նա իր մարմնի ծանրութեան պատճառով ձիւ վերայ  
նստել չէրկարողանում, Ճին ճոճում էր մէջքիցը: Նա չափից գուրս

վազր սպասեց Բաղդասարին, բայց նա չեկտւ։  
Սովոր նեղացրուց Դաղուն և խստիւ սախալեց նրան  
որովայնին յագուրդ տալու և քիչ հաց վերցնե-  
լու համար, որովհետև նա մտադիր էր լլացնել  
երորդ օրը նոյն կիրճումը։ Եւ կատարեց այն  
ինչ որ կենուական կարիքն էր պահանջում։ Եւ  
նա երորդ գիշերը լուսացրեց կիրճումը և սպա-  
սեց մինչև երորդ օրւան կէսն, բայց գարձեալ  
չեկաւ Բաղդասարը։ Այս ինչ բան է Տէր Աս-  
տուած. ասաց Դաղին։ Մի՛ գուցէ բախտը նրա  
կողմն է անցելու և նա է ինձ սպանելու։ Դէ որ  
բանը այսպէս անաջող է երեսում լաւն այն է թող-  
նեմ զնամ, գործը թողնեմ ուրիշ ժամանակի. օր  
կայ տարի կայ։ Այս ինքնըստինքեան կայա-  
ցած ներքին համոզմունքը հարկադրեց Դաղուն  
դուրս գալ կիրճից և թողնել Բաղդասարին սպա-  
նութեան զործը։ Ուստի դուրս եկաւ Սախկալ թու-  
թանի կիրճից և ճանապարհուեց գէպի Շէնհեր գիւ-  
ղը։ Հասնելով Շէնհեր, նա գնաց իրան մի ամենա-  
մօտ բարեկամին տունը։ Քիչ հանգստանալուց  
յետոյ բարեկամի տանեցիներից մէկը հաց բերաւ  
դրեց և խնդրեց որ Դաղին հաց ուտէ, չհետա-

---

քաջ աղամարդ էր և ինչ քաջութիւն որ գործում էր գետնին էր  
գործում և ոչ ձիռ վերայ։ Գետնի երեսին Բաղդասարի նման  
ութ տղամարդը նրա գէմ ոչինչ բաներ կհամարւեն։ Խոկ ձիռ  
վերայ Դաղուն նման տասին Բաղդասարը հոգի չէր տալ։ Վեր-  
ջինս քաջագործութեան հետ ունէր նաև ամենաճարպիկ սրածու-  
թիւն

բըքըուելով նրա որտեղից գալուն համար։ Դա-  
ղին շարունակեց հաց ուտիլը և գինի խմելը։  
Այդ միջոցին բարեկամի տանը հարեաններից մի  
պառաւ կին եկաւ մօտեցաւ Դաղուն և ինչ որ  
մի տեղ նստեց։ Պառաւը բաւական վշտացած էր  
երեսում մէկ մարդու վատ արարմանց համար,  
որը կատարել էր իր որդու դէմ։ Այդ ինչ է  
քսփառում այդ պառաւ կինը. հարցը Դաղին իր  
բարեկամ կնոջից

Զեր գիւղացի իւզբաշի Բաղդասարը, ասաց  
կինը. այս օր երեք օր է այս խեղճ պառաւի  
տղին տարել է իր հետ Տաթև, որ այնտեղ իր  
ձիուն պահպանէ, քորի, ջուր աայ, զարի և խոտ  
տայ, և վերջապէս գործի ժամանակ է տղին բաց  
չի թողնում որ գայ. 'Ի միջի այլոց թէ բարե-  
կամ կինը և թէ պառաւը բորբոքվելով սկսեցին  
արիւն արտասունք թափելով բողոքել իւզբաշու-  
բարբարոսութեան և թէ կեղտոտ բնաւորութեան  
մասին։ Այդ երկու կանանց արտասուախաւն  
բողոքը այնպիսի ազդու տպաւորութիւն թողեցին  
Դաղուն վերայ, որ նրա եղերական գործողութեան։  
համար հանգարտած միտքը նորից յուզւեց իւզ-  
բաշուն սպանելու անսանձելի ցանկութեամբ։  
Եւ նա բորբոքւելով և դեռ հացից չկշտացած տե-  
ղիցը կանգնեց և կատաղի բարկութիւնը իւր մէջ

մի կերպ խեղգելով ճանապարհուեց դէսի Խոտ  
զիւղը Սակայն Շէնհերից ճանապարհվելու ժա-  
մանակ իրան քարեկամ կինը մի փոքրիկ տկձոր  
դինով լքցրեց և գրեց Դաղուն խուրջինումը այն  
մտքով որ տանի իրանց տանեցոնց համար։ Դա-  
զին դուրս գալով Խոտ զիւղի զարիվերը մի մեծ քա-  
րի շուաքում նուտեց, որ քիչ հանգստանայ։ Այդ  
միջոցին մի քաղցր քուն յաղթեց նրան և քնա-  
ցրեց։ Շատ և թէ քիչ քնելուց յետոյ երբ որ ար-  
թնացաւ սկսեց խոր մտածողութեան տակ ըն-  
կնել։ Ի՞նչ լուր տանեմ ես իմ քեռորդկանցը, չէ  
որ նրանք ինձ յիսուն փահնապատ փող են տւել  
որ ես Բաղդասարին սպանեմ. ասում էր Դաղին։  
Մի գուցէ ինձ չի էլ հաւատան եթէ ես նրանց  
ասեմ երեք օր է Սախկալ թութանումը սպասել  
եմ նրան, որ գայ ըռնեմ սպանեմ և նա չի եկել  
ու սկսելու են ինձ նախատինք տալ, ասելով  
գու սուտ ես խօսում Սախկալ թութանի զագա-  
նանոց կիրճումը գու ինչպէս սիրտ արած և զի-  
շերները մնացած կլինես, ով զիտէ որ զիւղումն  
ես եղել։

Ի վերջոյ Դաղին նորից վճռեց սպանել Բաղ-  
դասարին և այդ զիշերը մնալ Խոտու թառումը  
(քայրայրումը) գուցէ վաղը յաջողվէր կարողա-  
նար կատարել իւր եղերական գործը։ Եւ մինչ-  
դեռ այս արիւնոտ մտածողութեան մէջ էր, յան-  
կարծ լսելի եղաւ մի քաղցր մեղետի ձայն, ո-

րին լաջորդում էր նոյն եղանակի շվշվոցը։ Դա-  
զին հետեւելով շվշվոցին աեղիցը կանգնեց և  
բաշիցը նայեց դէպի ցած։ Օ՛հ որքան ուրա-  
խացաւ երբ որ տեսաւ շվշվացնող և մեղետի ա-  
սողը Բաղդասարն է, գալիս է և ուղղակի իրան  
մօտովն է անցնելու։ Փառք քեզ Տէր Աստուած,  
որ ինձ տմօթալի չթողեցիր իմ քեռորդկանց մօ-  
տը, ասում էր Դազին։ Դազին նստեց էլի քարի  
շուաքումը և սրտի ուրախութիւնիցը կարծես թէ  
հարբել էր։ Ահա եկաւ իւղբաշին եւ յայտնւեց  
Դազուն։ Բարով ձեզ Դազի, ասաց Բաղդասարը,  
որտեղից ես գալիս։

Շէնհերից եմ գալիս, իւղբաշի, ասաց Դա-  
զին և տեղիցը կանգնեց ուրարեկամական սնոյշ  
խօսքեր արտադրելով մօտեցաւ և բռնեց ձիու  
սանձիցը։ Բաց թողիր ձիու սանձը, Դազի, ասաց  
իւղբաշին, խրանող է։

Բաց թողնեմ ձիու սանձը, ծաղրական եղա-  
նակով ասաց Դազին։ Քեզ երկնքումն եմ ուզել  
դու երկրումն ես պատահել ինձ, դու իմ  
քեռուս սպանեցիր և քո չար վարմունքը մնաց  
անպատիժ։ Այսօր քո վերջին օրն է և այս ըո-  
պէիս պէտք է մեռնես իմ ձեռքով։ Երեսդ շրջիր  
դէպի Տաթեսի վանքը և որպէս քրիստոնեայ խա-  
չակնքիր երեսդ։ Այս խօսքերը ասելով մի ձեռ-  
քով պինդ պահեց ձիու սանձը, իսկ միւս ձեռ-  
քով իւղբաշուն դուրս կորդեց թամքիցը և խփեց

գետին։ Թաջ իւզբաշին ճարպկութեամբ իւր չաք-  
մաների մէկի կոկորդից հանեց փոքր դաշոյնը  
և ուժերը մի աեղ հաւաքելով այնպէս սաստիկ  
խփեց Դաղուն փորիներքեի բարակ մասիցը, որ  
փորը ճղելով հասաւ մինչև կոկորդը։ Այն ըռ-  
պէին Դաղին թուլացաւ և փուեց գետին։ Նոյն  
ըռպէին Դաղին պինդ սեղմեց իր փորը և խըն-  
դրեց իւզբաշուն, որ իր մարմնի հետ վատ չվար-  
վէ։ Սակայն ինքը կաշառված է եղել թութա-  
կեանց ժառանգներից եղիլշէի սպանման վրէժը  
լուծելու համար։ Այս կարճ խօսքերի վերջա-  
ռութեան հետ հոգին աւանդեց։

Այնուամենայնիւ չնայած որ Դաղին իւզ-  
բաշու արիւնախում թշնամին էր և սպատրաստ-  
ւած էր նրան սպանելու բերկարլի դիտաւորու-  
թեամբ, որի համար Դաղուն մարմնի հետ իւզ-  
բաշին կարող էր շատ վատ կերպով վարվէր,  
բայց նա աւելի վեհանձն և բարի գոնիվեցաւ,  
որ սպանելուց յետոյ Դաղուն դիակը մեծ դըժ-  
վարութեամբ հազիւ թէ տարաւ դրեց քարայ-  
րումը եւ երեսը շրջեց դէպի աղօթարանը, վեր-  
ցնելով նրա հրացանը, ատրճանակը և խենջալը  
և ճանապարեց դէպի դիւղը։ Համնելով դիւղը,  
իւզբաշին յայտնեց բոլոր ժողովրդին կատար-  
ւած դէպի որպիսութիւնը և սպատճառը։ Ցոյց  
տւաւ և դիակի տեղը, որի աղգականները գնա-  
ցին բերին։ այնուամենայնիւ թութակենց ժա-

ուանդները դարձեալ հանգիստ չմնացին, չնայած  
որ վրէժինսղբութեան կողմից ոչինչ էլ չէին կա-  
րողանում անել և նրանց բոլոր ջանքերը ա-  
պարզիւն էր անցնում. բայց միենոյն ժամանակ  
այս անգամ շատ բորբոքւեցին երբ Դաղունման  
մի քաջ տղամարդը սպանվեց դարձեալ Բաղդա-  
սարի ձեռքով։ Ուստի վրէժառութեան համար  
մտածեցին մի ստոր միտք, որը չի պատշաճում  
տղամարդ անուան բարձր կոչմանը. այն է  
գաղտնի յորդորանոք զրդեցին Դաղուն կնոջը,  
Մարեանին (Մարիամին), ասելով դու իբրև կին-  
արմատ իւղբաշին քեզ վերայ չի կասկածիլ եթէ  
սիրտ կանես նրան սպանելու։ խենջալը վեր առ  
հետդ և մի կերպ գնայ մօտեցիր նրան, իսկոյն  
կոխիր փորը և սպանիր։ Իհարկէ եթէ մեզանից  
որև է մէկ երիտասարդ մօտենալու լինի նրան,  
սատանայ է, իսկոյն հասկանալու է մօտենալու  
պատճառը և ըսկի թոյլ էլ չի տալ մեզ քայլ ա-  
նելու դէպի իրան։

Մարեանը թէկ նախ խօստացաւ նրանց որ  
կարող է կատարել այդ ձեւով իւղբաշուն սպա-  
նել, բայց յետոյ չհամարձակւեցաւ այդ ե-  
ղերնական քայլը աչքարայ անելու, որովհետեւ  
իրկիւղ էր կրում նրանից աչքով տեմնելու ժա-  
մանակ։ Ուստի թողեց Թուլթակեանցների արած-  
ծրագիրը եւ որպէս վրէժառութիւն կատարեց  
այս յանցանքը։ Վերջինս երկար սպասեց գիւ-

զից Բաղդասարին բացակայ լինելուն. Ուստի մի առաւօտ տեսաւ, որ Բաղդասարը զինւած եւ ձիւորված գնում է Շէներ ինչ որ դատի համար. Հարեւաններից գաղանի տեղեկացաւ, որ զիշերը մնալու է այնտեղ. Յարմար ժամանակ համարելով իր համար. ցախատը սրեց եւ զիշերով գնաց մտաւ իւզբաշու զոմը եւ իւր սուր ցախատով սկսեց կտրատել նրա քսան եւ չորս եզների բոլորի ջլերքը, որը իր վրէժառութեամր հանդերձ առաւ և սրտի սփոփանք.

Իւզբաշին Շէնհերից գալով ինձորէսկ եւ տեսնելով այն քսամնելի դէպքը ինչ որ զործել են իւր անմեղ եզներին<sup>1)</sup> վերայ լաց եղաւ և միահսակ ցնդվածի նման դառաւ. Բայց նրա խելօք կինը, Նանախը, տեսնելով իւր ամուսնու հոգեկան զրութեան փոփոխութիւնը, կարողացաւ նրան ամոքելով հանդարդացնել և խելքի բերելով կանգնեցնել իւր նախկին լրջութեան կէտին վրայ:

Այնուամենայնիւ սատանան ոչ մեռել է եռչ կմեռնի, ասում է նախնեաց առածը: Իւզբաշին ստոյգ տեղեակացաւ թէ արդեօք իւր անմեղ եզների վերայ այն սարսափելի դէրը կատարողն ով է եղել, և ովքեր են եղել նրան դրդողները, անմիջապէս կանչեց ամբողջ ժողո-

1). Այն ժամանուայ ամենաեռանդու հողագործներից մէկըն էր իւզբաշին:


վուրդին, թէ երբ որ իմ անմեղ եզները այսպիսի չտեսնւած գժրախտութեան են ենթարկւել, տարէք մորթեցէք և կերէք, բաշխում եմ ամենքիդ։ Սակայն խնդրում եմ ձեզ, որ ես մի գործ եմ սկսելու վաղը կամ թէ միւս օրը բոլորդ կհետեւէք ինձ։ Ժողովուրդը իւզբաշուքսան և չորս եզները մորթեցին — և իրանց մէջ միսը բաժանեցին ըստ շնչի և ըստ կարողութեան և տասներկու եղ լրացրին իրանցից — աւին իւզբաշուն։ Իսկ միւս տասներկու եզները, որպէս մսաս մնաց առանց հետեւանքի։

Գարունք էր։ Գիւղացիք գութանները լծած վարում էին։ Մի առաւօտ իւրաշին զինւած և ձիուորված գուրս եկաւ գիւղի հանդր և բոլոր գութանաւորները իրանց գութաններով տարաւթափեց Թութակեանց<sup>1)</sup> ընդարձակ հողերի մէջ և հրամայեց թէ առեն մարդ իրան համար հող

1). Թութակեանց ազգի նախկին պապը մէլիք Թավորն է եղել, որը 1603 թւի Շահաբասի հայերին գերի տանելու ժամանակ փախաւ Նախջեւանու Զահուկ գիւղաքաղաքից և անդաւ Սիւնեաց երկիրը և թագնվեցաւ Տաթեկի խուլ ձորերից մէկում, որը յետոյ 1612 թւին տեղափոխւեցաւ խնձորէսկ ձորը և բնակութիւն հաստատեց մշտականապէս և զիւղի հիմնագիրը եղաւ։ Ուստի Թավարը որպէս մէլիք և նախարանակ, այն ժամանակ գիւղի մասնաւոր հողերը իրանը շինեց, որի սերունդը ազնւականութեան շըով տիրեց — մինչև իւզբաշի Բաղդասարի օրերը, ուր վերջինիս օրովէլ զրկւեցան Առութանլղ, Տաշտափոր, Թաղաշար, Ղուղվիօրթ և Ղօշտափայ անւանեալ վարելահողերից։

վերցնէ, որպէս սեփականութիւն վարի որդոց  
որդի յաւիաեան։ Ահա այսպիսութեամբ իւզբա-  
շին խլեց Թութակեանց պապական բոլոր հողե-  
րը նրանց ժառանգների ձեռքից և յատկացըրուց  
ամբողջ ժողովրդին, որով և կարոկացաւ լուծել  
եր եզների վրէժը Թութակեանց դրդիչ ժա-  
ռանգներից։

ՎԵՐՋ



## ՅԱՒԵԼՈՒԱԾ

### Աղա Մամմադ շահի արշաւանքից:

1880 թւին ևս Խնձորէսկ գիւղում հողի տակից հանեցի Մխիթար սպարապետի Գերեզմանաքարը: Սպարապետի գերեզմանաքարը գտնելուց յետոյ իմ սիրտը ինքնըստիքեան մի ներքին ստիպողական տաք հետաքրքրութեան ենթարկեց, այնովէս որ այդ հետաքրքրութիւնը, կարծես ուժով ինձ դրդեց ասելով— զնայ ձեր գիւղի ձեր մարդիկներիցը հարցըու և իմացիր այդ վաղեմեռ հերոսի անմահ գործերը": Այս և ևս հետեւցի իմ պատակով սրտի նպատկին յագուրտ տալու, չնայելով զանազան տգէտ մարդկանց ծաղրական խօսքերի վերաւորիչ ազգեցութեանը, որոնց շըպբած խօսքերը անդադար յաջորդում էին միմիանց և շատ խիստ տպաւորութիւն էին թողնում ինձ վերայ: Այնուամենայնիւ ևս տոկուն սրտի համբերութեամբ նրանց վհատական խօսքերը մի դոզմ զցեցի և սկսեցի զնալ մեր գիւղի ձեր մարդկանց մօտ, հարցու փորձ արեցի իմացայ և քաղեցի նրանցից հին աւանդութիւններով մնացած բերանացի վեպէրը նոյն խոկ Խնձորէսկ գիւղի հիմնադրութեան մասին ի միջիւայլոց դարձեալ հարցը, և թէ ինչ գէսկը էին կատարվել գիւղումը այդ բոլորի նիւթերը հաւաքեցի և գրեցի:

Ցիշողութեան մէջ առողջ ծերունիները շուտ ուշրխանում էին, երբ իրանց պատմածները գրի էի առնում և զնահատում էի յարգանքով: Ոմանք ողերում էին մեծ եռանդով և առանձին բաւականութեամբ

լցուած առանց ձանձրոյթի պատմում էին ինձ ինչ որ  
լսել էին իրանց պապերից, տատերից և այլ ծերունի  
մարդկներից, կամ տեսել էին իրանք։ Ալոր մարդ-  
կանց պատմածները մեծ մասամբ վերաբերվում էին  
պարսից արշաւանքներին. զանազան խաների կատա-  
րած բարբարոսութիւններին և նոցա սփռած ստահակ-  
ների աւերումներին. հայոց մէլիքների և պտրսից շահե-  
րի հետ ունեցած յարաբերութիւններին և տեղային  
խաշնարած ցեղերի գէմ ծաղած կռիւներին։ Պատ-  
մում էին նոյնպէս խնձորէսկու միջից զօրացած Զոհ-  
րաբեան թիւրք մէլիքների անօրէնութիւնները, ո-  
րոնք չնշին պատճառներով, զրկանք և անտանելի նե-  
ղութիւններ էին տեսլ իրանց հայ ժողովրդին և մինչե-  
այսօր էլ գեռ ժողովրդական ծեր մարդիկը իրանց տը-  
խուր յիշողութիւններով չեն մոռացել նրանց կատա-  
րած քստմնելի գործերի չար յիշատակը։ Այժմ աւելորդ  
չենք համարում նախ զրել ծերերի պատմածներից մէ-  
կը և որպէս նմուշ ցոյց տալ ընթերցող հայ հասարա-  
կութեան, որը ինձ պատմեցին Խնձորէսկեցի 2 վստա-  
հելի մարդիկ, որոնց թւումն էր որմնագործ Աւանէս Դ.  
Ղազարեանցը և Հախնազար Յակոբեանը։ Սուաջինը այս  
պատմական վէպը բերանացի լսել է սոյն գիւղացի Շահ-  
նազարեան Յովսէփ ապօրից, իոկ երկրորդ պատմողը,  
լսել է իր պապ Ղոդիլ Գրիգորից։ Վէպը այնքան մա-  
քուր է, որ երկու մարդկանց պատմածների մէջ երբէք  
տարբերութիւն չկայ։ Սակայն ես զրեցի Հախնազար  
Յակոբեանի պատմածը, որովհետեւ վերջինիս պապը,  
Ղոդիլ Գրիգորը, Խնձորէսկ գիւղի հասարակութեան  
կողմից առհասարակ յարաբերութիւն է ունեցել Շօշ-  
վայ բերդի Փանահ խանի, Իբրահիմ խանի և Մէհդի-  
գուլի խանի հետ և մօտիկից ծանօթ է եղ' և նրանց  
ոռոգուստ են նմանենք։

Այժմ ես գառնամ Հախնազար Յակոբեանը և խօսեմ Շահնազարեան Յովսէփի ապօրը բերանով։ Ես իստաչքով տեսել եմ Յովսէփի ապօրը, նա մեռել 1872 թւրքին, և իմ ականջով լսել եմ նրա թելադրած զրոյցները։ Սակայն իմ լսուծներովս ես վստահ չեմ ինձ վերայ հանդէս դուրս գալու, և խօսում եմ Հախնազարեանի բերանով։ Յովսէփի ապօրը հարիւր տարեկան մի ծեր մարդէր էր և զեռ նա շատ առողջ էր իւր մարմնաւոր և մտաւոր կարողութիւնների մէջ։ Պատկառելի ծերունին պատմում էր թէ Շօշուայ Ղալայի հրբանիմ խանը ամբողջ Ղարաբաղի, Զանգեզուրի և Սիսիանի գաւառների տիրապետող խանն էր։ Իրբանիմ խանը մեզանից աղ էր ուղել որովհետեւ խանի հացի գործարանի համար գործադրելիս աղը միշտ Խնձորէսկու ժողովուրդն էր տալիս։ Եւ խանի աղի այդ սովորական պահանջը Խնձորէսկեցուց համար արմատացած պարտականութիւնն էր համարվում, որը տանում էինք Շուշւայ Ղալան և այնտեղ տալիս էին նրա տնտեսական վեզիրին։ Քասի (Քասպար) քովման ժողովրդից հաւաքեց խանի ուղած աղը, պատրաստեց և կանչեց Ղոգիլ Գրիգորին ու ինձ, պատվիրեց մեզ թէ այս 60 խոտիլ աղը տարէք Ղալան և տւէք խանի վեզիրին։ Այդ ժամանակ Շօշվայ Ղալայի ճանապարհները սաստիկ երկիւղալի էր, մանաւանդ մեր ճանապարհը աւելի վատ էր, որովհետեւ մենք գնալու էինք Ռուշանի անտառապատ մթին ձորովը։ Եւ բացի սրանից, երկրի մէջ ձայն էր ընկել և սարսափ էր տիրում ամեն տեղ, ասում էին, «Ախտայ-Շահը գալիս է»։ Նա գալիս է ուղղակի Ղարաբաղին վերայ։ Եւ թէպէտ մենք երկիւղ էինք անում երկու հոգով Ղալան գնալ բայց ինչ արած պէտք է դնայինք, պէտք է աղը տանէինք։ Վերջապէս իւրաքանչիւրս երեսուն խոտիլ աղ վեր-

ցրած<sup>1)</sup>), աշունքին կարճ օրը մենք պէտք է հասնէինք: Շուշի: Գիշերից քիչ անցած մենք ճանապարհուցինք դէպի Շուշի, որ և այդ օրը երեկոյեան մութը բոլորովին ընկած հազիւ թէ մօտեցանք Քարին-Տակի<sup>2)</sup> Եօխիշին. (զարիվայրին): Արեի և շարակի տակ ճնշւած, երկիւղով բոլորովին աղդրւած հասանք եօխիշին: Եօխիշի սկզբումը Գրիգորը ինձ խորհուրդ տւաւ թէ մեզ գիշերս գարպասովը<sup>3)</sup> ներս չեն ընդունելու եկայս կարճ ճանապարհովը<sup>4)</sup> գնանք. ես լաւ ծանօթ եմ, և շատ խուլ ճանապարհ է: Երբ շարունակեցինք այդ խուլ ճանապարհով գնալը յանկարծ մեզ վերայ թափւեցին մի խումբ մարդիկ, բռնեցին և առանց հարց ու փորձ անելու, սկսեցին մեր կոնկրը ետեներիս կապուտել:

Է՞յ այդ ժվրեր էք, որ համարձակւում էք մեզ բռնել: Մենք իբրահիմ խանի մարդիկն ենք. բաց թողէք մեզ եթէ ոչ հետեանքը շատ վատ կլինի. ասաց Դոդիլ Գրիգորը: Միթէ խանի համար աղ բերողներին էլ կրոնե՞ն:

Զայդ կտրի պիղծ հայ, եթէ ոչ այս ըօպէիս գըլուփադ կը կտրեմ: Մենք Աղա Մամմադ շահի սարբազներն ենք. միթէ զուք չէք լսել նրա զարհութելի անունը: Այս խօսքերը կիսատ-պուատ թիւրքերէնով մի կերպ հազիւ թէ կարողացաւ արտասանել մի թիւրք, որը հէնց կարծում եմ թէ թիւրք չէր այլ պարսիկ էր և թիւրքերէն լաւ խօսել չգիտէր: Մենք տակաւին ոչինչ

1). Իստիլը.—պարսից և հայոց մէջ մի հին կըսաքար է, իւր քաշով հաւասար է այժմնան 5 չետվերին:

2). Մի հայարնակ դիւզ է, գտնվում է Շուշի քաղաքի արեմտեան կողմին:

3). Շուշին երկու տեղով կանոնաւոր մոււք է ունեցել, որ և կայ մինչեւ այսօր: Զանգեղուրի ճանապարհովը գնացողը վերիի գարպասովը կմտնէ քաղաքը:

4). Շուշին իբրան շրջապատող բարձր ու ցածր բերձերի

չէինք իմանում թէ Ախտա-Շահը եկած կլինի Ղարաբաղը և արձակված կլինի Շուշի Բերդին վերայ: Գիշերը մեզ կապոտած տարան Շօշի գիւղը և այնակղ կալանառեցին մի խոր գարմանանոցում և մինչև առաւօտք զգուշութեամբ հսկեցին մեզ վերայ: Առաւօտեան արել բաւական բարձրացած մեզ հանեցին գարմանանոցից և տարան Շահի մօտ, և յայտնեցին, որ սրանք իբրահիմ խանի մարդիկն են այս գիշեր ուղղում էին մտնել բերդը, մենք տեսանք և վրահասանք բոնեցինք:

Շահի առջել կանգնած էին շատ խաներ և ուրիշ շատ մեծամեծ մարդիկ: Այդ մեծամեծների շարքումը կանգնած էր նաև մի բարձրահասակ, յաղթանդամ և լայնաթիկունք հայ երիտասարդ, որը հազած ունէր թերքաւոր մահուդ չուխայ, ապրեշումի խոչմայ շալվար, թանկագին կտորից կարած սև արխալուզ և գլխին դրած ունէր կէսը դէպի մէջը կոտրած բուխարայի մորթուց կարած շէկագոյն կարմիր գտակ: Թուրքը կախած էր կողըից և գնդակաշարանը կոնստանտինուպոլիսից, պատել էր նրա լայն կուրծքը: Վերջապէս այդ հայ տղամարդը, որը դեռ երիտասարդ հասակ ունէր, իւր հրապուրիչ դէմքով և արտաքին նշաններով հասկացնում էր անծանօթ մարդուն, նրա ազնիւ յարգելի, վեճ և քաջասիրտ մարդ լինելու բոլոր յատկութիւնները: Շահը իւր մօտ կանգնած մի թիւրք խանի հետ փարսկելն չգիտեմ ինչ խօսեց. նա էլ կանչեց այն հայ տղամարդին, թէ Շահը պատւիրում է քեզ, որ քննես այդ հայ մարդկանցը և իմանաս թէ դրանք ինչ մարդիկ են և

արանքներով գտղանի դժվարամուտ կածաններ և անցքեր շատ ունի: Այդ ժամանակ Քարին-Տակ գիւղիցը մէկ գժվարամուտ գաղանի կածան (շաւիղ) մանում էր Շուշուայ բերդը, որը այժմ լայնացրել է նոյն գիւղի ժողովուրդը և հեշտամուտ է գարձրել:

Ինչու համար էին ուզում մտնել բերդը։ Հայ երիտասարդը մօտեցաւ մեզ և վայելուչ կերպով հարցրուց։

— Ո՞րտեղացի էք։

— Խնձորէսկեցի ենք, աղայ, ասաց ընկերս։

— Ի՞նչու համար էք եկել և ուր էք ուզում մտնել բերդը։

— Իրահիմ խանը մեր ժողովրդից աղ է ուզել աղ ենք բերել։

— Ափս՛ոս, ասաց նա . . . . Երանի թէ այդ ազը քուացնէր նրա տչքերը և երկիրը ազատուէր մի կործանիչից։

Եւ այսպէս հայ երիտասարդը մեզանից քաղածքանիրը պատմում էր Շտհին մօտ կանգնած խանին, իսկ խանն էլ փարսերէն պատմում էր Շահին։ Ինձ հասկանալի էր դառնում որ Շահը թիւրքերէն չէր իմանում։

Հարց ու փորձ անելուց յետոյ, այն հայ երիտասարդի միջնորդութեամբ թէե մենք կալանաւորութիւնից ազատւեցանք, սակայն որպէս կասկածելի մարդիկ ամբողջ քսան մէկ օր մեզ պահեցին իրանց բանակի մէջ։ Մեզ կերակրում և պահում էր Շօշու գիւղացի Թարխանեանց Սափարի իւզբաշին։ Նա թէե Աղայ Մամմադ Շտհի կոփևներին չէր մասնակցում, այնուամենայնիւ Շահը նրա վերայ բարի աչքով էր նայում, և այն հայացքը չէր գցում նրա վերայ, որպիսի աչքով որ նայում էր Ղարաբաղի շատ մեծամեծ հայ և թիւրք իշխանաւորների վերայ, որոնք երկիւղ կրելով փախել էին գնացել Շուշւայ բերդը, միացել էին Իրահիմ խանի հետ և քաջարի կատարութեամբ կռվում էին Շահի գորքերի գէմ։ Շահը ամբողջ քառասուն օր կռիւմ կեց բերդականների դէմ, բայց գրաւել չկարողացաւ բեսոսի ամսութիւնը, միջի մարդկանց միարանութիւ-

նը և քաջութիւնը ոչնչացրին Շահի մարդկանց արխական ջանքերը: Բերդի միջի քաջ մարդկանց մէկը Մէլիք Շահնազարի որդի Մէլիք Զիւմշուղն էր, իսկ միւսը Գիւլիստանի Մէլիք Արողն էր, գրանք իրանց զինուորական ուժերով միացել էին Իրանիմ խանի թիւրքական ուժի հետ և սրտանց կովում էին Աղայ Մամմադ շահի դէմ: Քառասուն օր անընդհատ կոխւ մզելուց յիսոյ Շահը ստիպւած եղաւ թողնել Շուշւայ Բերդը և գնալ Թիփլիզի վերան: Իսկ այն հայ երիտասարդը, որ մեզ ազատեց կալանաւորութիւնից, նա Զրարերդի Մէլիք Յաթամի որդի Մէլիք Մէժլումն էր: Շահի մօտ կանգնած խանը, որ մեզ քննութեան տւաւ, Գանձակի Զաւադ խանն էր: Այս երկուսը իրանց հայթքական զինուորներով միացած էին Աղայ Մամմադ շահի հետ, և Շահը հէնց սրտանց տուած խորհուրդներովը թողեց Շուշին և գնաց Թիփլիզ որ համարեայ թէ աւերակ գարձրին:

Ախտայ Շահը, Աղայ Մամմադ խանն էր: Նա Մազմանդարանի Մահամմէդ Հիւսէին խանի որդին էր: ասաց Յովսէփ ապկերը: Ախտայ Շահը որ եկաւ Ղարաբաղին վերայ, ևս քսան երկու տարեկան մէկ չօրան (հովիւ) տղայ էի: Նա շատ մի անգութ մարդ էր և գործով բռնակար: Նրա սիրտը լիքն էր կատաղութեամբ, և աչքերը արիւնով: Ինձ թվում էր, որ նա Աստուծոյ անիծած արարածներից մէկն էր, որովհետե նրա պատկերին վերայ չէր երկում որևէ բարութեան մի նշան: Անիրաւութիւնը, անօրէնութիւնը և արիւնահեղութիւնը նրա սիրած բաներն էին: Խիղճ և ողորմ ասած խօսքը նա չէր հասկանում: Նրա հայացքը խիստ դառն էր, ահաւոր և խօսելը ներգործող: Աչքերը արտայատում էին նրա թոյնալից սրտի կատաղութիւնը, նրա անսանձէլի զայրոյթը, որով պէտք էր

Գոտորեր քրիստոնեայ ժողովրդին, և յագենար նրանց արիւնիցը, որ համբերութիւն ստանար և հանգստանար:

Ախտայ շահը մի չնչին սեղքի համար իրան մէկ զինւորի փորը պատռել տւառ—զեռ նրա գլուխը կտրել շտւտծ: Շօշու գիւղից բարձր մի կաղնի ծառի տակ սարքած էր շահի վրանը և ինքը նստած էր ինչ որ գեղեցիկ գորդի վերայ ու հանգստանում էր: Նա շրջապատւած իր պաշտօնական մեծամեծներով, խօսում էր կուից և բերդը գրաւելու դժվարութիւններից: Մէկ թիւրքի ծերացած կին մէջքիցը կեռացած գնաց գէպի շահի վրանը և յաջողւեց նրան շահի առջեր գընալու, որը խորը կերպով գլուխ խոնարհացրեց նրան և դէմը չոքեց գանգատելով մէկ զինւորից:

«Շահիդ սրին յաջողութիւն եմ ցանկանում, Հարաւի<sup>1)</sup> տէրը ողջ մնայ: Ահա ես մի ծերացած կին եմ, աշխարհումս ինձ բացի երկու բանից էլ ուրիշ կարողութիւն չունիմ, որ ապրուստի աղբիւր դառնայ ինձ համար: Մէկ կարողութիւնս քո թագաւորութեանդ հլուծառայ,—ահա այս տղան է, իսկ երկրորդ կարողութիւնս մէկ կով է, որի կաթն ու մածունով մենք հաղիւ թէ ապրում ենք, տանելով թիւրք գիւղերումը փոխելով ալիւրի հետ, բերում ենք մեզ համար օրուայ պարէն ենք պատրաստում և ապրում: Բայց այսօր ձեր զինւորներից մէկը պատահել է իմ աղին, բոնի կերպով կողոպտել է մեր մածունով լիքը տկերը և տարել չգիտեմ ինչ արել: Ահա տղան մօտս է կարող էք

1). Թիւրքերը կամ աւելի ճիշտն ասած աշխարհքի ամբողջ մահմէգականները չարավին «Ղբլայ են ասում: Հտրաւային երկրի Ալիական թիւրքերը իրանց թագաւորներին «Ղիբլէի ալամ» են ասում, որ նշանակում է հարաւի տէր:

հարցնել և իմանուլ բանին էռթիւնն ստուգութիւնը»:

Շահը ուշադրութիւն դարձրուց պառաւի գանգատին, և փոքր տղային հարցը դէպքի եղելութեան որպիսութիւնը ստոյգ իմացաւ:

— Քեզ կողոպտող զինւորին կարո՞ղ էք ճանաչել. թարգմանի միջոցով հարցը շահը: Հարաւի տէրը ողջ մնայ, կարող եմ ճանաչել և մինչև անգամ տեղը գիտեմ: Շահը զինւորներ տւաւ պառաւի տղին, թէ գնացէք բռնեցէք և բերէք: Զինւորները գնացին: Պառաւի տղան շատ լաւ էր ճանաչում իրան կողոպտող զինւորին ուղղակի գնաց գտաւ և ցոյց տւաւ թէ ահասա է բռնրցէք:

Զինւորները բռնեցին ցոյց տւած զինւորին և տարան Շահի առջեր:

Առանց հարց ու փորձ անելու մածուն կողոպտող զինւորին շահը մահ վճռեց. բայց սարսափելի և քստմնելի մահ և մահւան օրէնքի կարգից բոլորովին հեռու:

— Պառաւ, ասաց շահը: Ահա այս զինւորին գըլուխը չկտրած փորը պատռել եմ տալու, եթէ քո գանգատը ուղիղ եղաւ, այսինք մածնի նշանները երեւայ դրա փորումը, իմացիր իմ դահիճի սրից աղատված կլինէք զու եւ տղադ. իսկ եթէ չերեւայ և սուտ գուլս գայ ձեր գանգատը, այնուհետեւ այդ զինւորի մահը կլիճակվի քեզ և տղիդ: Պառաւը վստահ էր, որ իր տղան սուտ խօսող չէ, նա առանց խուսափելու սիրով և ուրախութեամբ ընդունեց ահարկու շահի արիւնալի ծրագիրը:

Շահը հրամայեց առանց գլուխը կտրելու պատառեն զինւորի փորը: Քարասափառ դահիճը իսկոն կա-


տարեց իւր սոսկալի գերը։ Զինւորի փորը պատռելուն  
պէս սպիտակ մածունը խառնւած կարմիր արիւնի հետ  
խկոյն թափեցաւ գետինը։

Հա, Պառաւ, ասաց շահը, արդէն դուք երկուսով  
էլ ազատւեցիք իմ զահիճի սրիցը, դէ գնացէք ազօ-  
թեցէք իմ կեանքի համար և խնդրեցէք ջանարի Ամի-  
րին և հազրաթ<sup>1)</sup> Արքասին, որ օգնեն ինձ և յաջողու-  
թիւն տան իմ սրին, որով ես կարողանամ շատ եր-  
կիրների աէր դառնամ և բոլորին պահպանեմ խաղո-  
դութեամբ իմ սրի տակ»։

Եւ այսպէս, պառաւը արդաբացաւ մի ոչինչ րա-  
նի համար սոսկալի գերակատարութեան մէջ և մի  
քանի փահնարագ փող ստանալով, որպէս մածնի զին  
ու հեռացաւ։ Այս գէպքը պատահեց Աղա Մամմագ  
շահի առաջին արշաւանքի ժամանակ, ասաց Յովսէփ  
ապիրը։



1). Մէծ Հրամանատապին, այսինքն Հազրաթ Ալին Հազ-  
րաթ խօսքը նշանակում է, նեղ գէպքում շուտափոյթ հաս-  
նուու։



nm/h  
3106